

ՄԵՇ ԵՂԵՌՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԸ

Ինդա Ավագյան

**Հիշողությունն մեր
ընՏանիքի ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
մի քանի ՊԱՀԵՐԻՑ**

ԱՂԱՍԻ ՄԱԿԱՐԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄԸ

Ինգա Ավագյան

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԱԵՐ

ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԻ

ՔԱՆԻ ՊԱՀԵՐԻՉ

ԱՂԱՒԻ ՄԱԿԱՐԿԱՆԻ ՀՈՒՇՎՊԱՏՈՒՄԸ

Գյումրի
ԷԼԴՈՐԱՂՈ
2015

ՀՏԳ 94(479.25):821.19-94

ԳՄԴ 63.3(5Հ)+84(5Հ)

Ա 770

*Երաշխավորված է հրատարակության ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության քանդարան-
ինստիտուտի գիտական խորհրդի (23.02.2015)*

*ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի գիտական խորհրդի (17.07.2014)*

Գյումրու «Կոմսայրի» պատմամշակութային արգելոց-քանդարանի որոշումներով

Գլխավոր խմբագիր՝
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Արթուր Հովհաննիսյան

Գրախոսներ՝

Սյունիան Տեր-Մարգարյան

Խմբագիր՝

Պարույր Զաքարյան

Անահիտ Մկրտչյան

Ավագյան Ինգա

Ա 770 Մեծ եղեռնը վերապրածները, Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից. Աղասի Ալեքսանի Մակարյանի հուշապատումը / Ի. Ավագյան. – Գյումրի: Էլդորադո, 2015. - 116 էջ:

Հեղինակի՝ «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի չորրորդ գիրքն է, որը, ինչպես և նախորդ երեքը, ստեղծվել է իրական դեպքերի և փաստերի հենքի վրա: Այս անգամ մշակվել պատմական փաստերի հետ համատրվել և գրքի տեսքով ընթերցողի սեղանին են դրվել Արևելյան Հայաստանում 1918-1920թթ. Հայոց եղեռնը վերապրած շաջուռցի 14-ամյա պատանու՝ կոլտրածից մագապուրծ Աղասի Ալեքսանի Մակարյանի հիշողությունները: Վերջիններս, ի պարիվ թե՛ հուշագրի, թե՛ աշխատության հեղինակի, պատմականի, փաստագրականի, աղբյուրագիտականի և ազգագրականի հետ մեկտեղ ունեն նաև գեղարվեստական արժեք. քանզի պատմական իրադարձությունները, գործող հերոսները, վերապրողի քնարական պատմաները վիպականություն են հաղորդում գրքին: Ընթերցողի վրա ծանր փայվորություն են գործում 1918թ. Աղբյուրաղից Չաջուռ փանող մասապարհին խաղաղ քնակչության շարքերում գրկվող տղամարդկանց ճակատագիրը, որոնք գերվել էին թուրքերի կողմից, 1920թ. հայերի կոլտրածները «Ջարդի չոր»՝ Հերիերի չոր կոչվող վայրում և Կարսի՝ մահվան համակենտրոնացման ճամբար դարձած գորանոցներում, թուրք ռմաագործների մյուս հրեշավոր գործողությունները: Բարբերագրի մանրակրկիտությամբ ներկայացված են Կարս քաղաքի և Կարսի գյուղերի, Ալեքսանդրապոլի գավառի գյուղերի տեղագրությունը, Կարսի քաղերն ու փողոցները, ինչպես նաև հայ, թուրք և հույն ազգաբնակչության փոխհարաբերությունները, կենցաղն ու նկարագրը, ավանդույթներն ու քաղքերը: Կարևոր են նաև Հայրենական մեծ պատերազմի, մասնավորապես Կերչի ճակատամարտի հետ կապված որոշ մանրամասնությունների հրատարակությունը և պատմական բնույթի որոշ փաստերի լուսաբանումը:

Գիրքը մեծապես արժեքավորվում է հեղինակի գիտական և մեկնաբանական հարուստ ծանոթագրություններով, պատմական քարտեզներով, լուսանկարներով, ինչպես նաև կարսեցու խոսվածքում օգտագործվող օտար բառերի և արտահայտությունների բառարանով:

Գիրքը հասցեագրվում է Մեծ եղեռնի թմայով զբաղվող գիտական հաստատություններին, պատմաբաններին, աղբյուրագետներին, ազգագրագետներին, քանասերներին, ժողովրդագրությամբ զբաղվողներին և ընթերցող լայն շրջանակներին:

ՀՏԳ 94(479.25):821.19-94

ԳՄԴ 63.3(5Հ)+84(5Հ)

ISBN 978-9939-826-40-0

© Ավագյան Ի., 2015թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

2015թ. լրացավ Մեծ եղեռնի հարյուրամյակը: Սակայն պատմական գրականության մեջ Եղեռնը թվագրվում է 1895-1923 թթ.: Հայ ժողովրդի հիշողությունից անհնար է ջնջել այս օրերին կատարված եղերական իրադարձությունները: Մեծ եղեռնը արտացոլված է ժողովրդական բանահյուսական ստեղծագործություններում և Մեծ եղեռնը վերապրածների հուշապատումներում: 1915թ. Արևմտյան Հայաստանում կատարված դեպքերի և 1918, 1920 թթ. Արևելյան Հայաստանում՝ Ալեքսանդրապոլի գավառում և Կարսի մարզում տեղի ունեցած հայոց ջարդերի մասին հուշերը դաջված են ոչ միայն վերապրածների, այլև նրանց սերունդների գեներտիկ հիշողության մեջ:

*Առավոտվա ժամը վեցին
Մեզի գյուղիցը հանեցին,
Տարան, Հագազը մորթեցին,
Մայրի՛կ, զուլում է, զուլում է:
Երբ որ հասանք մենք Հագազը,
Կտրավ մեր սրտի մուրազը,
Մեզի մորթին, ինչպես դազը,
Մայրի՛կ, զուլում է, զուլում է:
Թուրքը ելավ Հաջա սարը,
Չեն ավսավ Հագազի քարը,
Հարս ու աղջիկ փախան սարը,
Մայրի՛կ, զուլում է, զուլում է:*

Այս երգի բառերը գրառել ենք պատահմամբ. 2012թ. Գյումրի եկած մի խումբ ցեղասպանագետների խնդրանքով այցելեցինք Գյումրու Սևերսկի որբանոցի տարածք: Հանկարծ մի տաքսի կանգնեց, և վարորդը՝ Մերուժան Սարիբեկի Սարոյանը՝ ծնունդով Սպիտակի Լուսաղբյուր գյուղից, ով տարիքով բավականին ջահել էր՝ մոտ վաթսուն տարեկան, լսելով մեր խոսակցությունը,

ցանկություն հայտնեց երգելու և պատմեց «Չարդի ձորի» կոտորածների մասին: Մերուժան Սարիբեկի Սարոյանը վերապրածների ընտանիքից է, նա անմիջականորեն չի տեսել և չի եղել ցեղասպանության ականատես-վկա, սակայն այս ամենը նա ընկալել է՝ լսելով ավագ սերնդի՝ գյուղում և ընտանիքում ապրող ներկայացուցիչներին, ովքեր վերապրել են Մեծ եղեռնը:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի հայ իրականության մեջ Հայոց Մեծ եղեռնի ողբերգական շարունակությունը համարվող 1918, 1920թթ. հայ-թուրքական պատերազմների ժամանակ տեղի ունեցած ջարդերը, որոնք իրենց արտահայտությունն են գտել աշուղական արվեստում: Երգնկայում ծնված և Մեծ եղեռնը վերապրած Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանը, ով ծառայել է Հայկական կորպուսի բանակային առաջին բրիգադի Երգնկայի գնդում, ապա զորավար Անդրանիկի Հայկական առանձին հարվածային զորամասում, իր «Մեր գնդի ճակատագիրը» խորագրով հուշերում 1918թ. դեպքերը նկարագրելիս գրում է անհայտ աշուղի մասին. «**Գնում էի քաղաք (Ալեքսանդրապոլ) մասն գալու, ժողովուրդը հավաքվել էր, մի աշուղ էլ նվագում էր, մի քանիսն էլ լաց էին լինում: Ես էլ մոտեցա՝ րեսնեմ, ինչ է երգում, հիշում եմ երգի մի րունը.**

***Շուն փաճիկը Արփաչայն անցավ,
Քանդեց ավանները Շորագյալ,
Չարկեց այծյամներդ, կերավ գառներդ
Մարուր հորթ չմնաց Շորագյալ... »:***

1918-1920թ. կոտորածների մասին են վկայում Շիրակի մարզի բոլոր գյուղերում դրված հուշարձանները: Մասնավորապես նշենք Արփենի գյուղի գերեզմանատանը 2007թ. հոկտեմբերի 20-ին դրված խաչքարի մակագրությունը, որը արված է Մշո բարբառով. «**Ու գուց ու դեն իմաց մացեք, քուրքի առաջ քվանք բացեք**», և Չիֆհանքով գյուղի հուշարձանը, որի վրա ոչ մի գրություն չկա: Պատմում են, որ թուրքերը հայերին այրել են գյուղի մարագնե-

րում, սակայն հուշարձանը դնելուց հետո, բոլշևիկյան բռնաճնշումներից վախենալով, գյուղացիները դրա վրա որևէ արձանագրություն չեն արել: Արվեսնիի գերեզմանատան խաչքարի հովանավորը՝ վերապրածի սերունդ, 1931թ. ծնված Հովսեփ Մարտինի Ենգոյանը, մի բանաստեղծություն է գրել, որում արտահայտել է գեներտիկ հիշողությամբ իրեն անցած մեծ ցավը.

*«Այս սուրբ խաչքարը պատվո հուշարձան,
Անմեղ զոհերին գյուղի հանրության,
Հանուն մարդկության ազգի կեցության,
Անսուջ պատերին հարգանք հավիտյան:
Այս խաչքարի տակ անմեղ էակներ,
Ընդանիքի հայր, որդի ու եղբայր,
Գուռք դռան կից, հարեան, դրկից,
Մեկ-մեկ սպանված, հոշոտված թաղված:
Մարված օջախներ, մարդկանց դիակներ,
Անքանակ ողբեր, դառն արդաստուքներ,
Մովանահ համայնք, տանջանք, տառապանք,
Մտորացված մարդ, զազազած համայնք:
Ռանչպար մարդիկ, անմեղ գյուղացիք,
Արյան մեջ շաղված, փողոցում թափված,
Լաց ու արդաստուք, ողբ ու աղերսանք,
Աստուծոն պաղատում, գոնե մի փրկանք:
Մոսկալի վիճակ, բռնություն, տանջանք,
Մուգ ու վայնասուն, մարդկանց աղաղակ,
Անարժան պարիժ, անպարիվ վարմունք,
Խուժան ավազակ թուրքի արարմունք:
Սպիտակ ճյուղը կարմիր էր կապել,
Մեացած սրբերին սև ու սուգ պատել,
Թշվառ մայրերը արյուն են լացել,
Հույսերը հատված Աստուծոն մոռացել:
Գյուղի շները գիշերն էին գալիս,
Տիրոջ դիակը հոտոտում, լալիս,*

***Գիշապիչ թռչուններն էին պարույրներդ տալիս,
Թուրքերի նման ավարի համար կտուց-կռիվ տալիս»:***

1918-1920թթ. Եղեռնին նվիրված չափածո ստեղծագործություններից բացի՝ մեծաթիվ են նաև փաստավավերագրական, պատմական և գիտահանրամատչելի բնույթ ունեցող հուշապատումները: Կարսի անկման մասին իր հուշերում գրել է եպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը:

Հոկտեմբերի 20-ին՝ առավոտյան ժամը 10-ի մոտերը, գեներալ Փիրումյանի հեռախոսակապը բերդի պահականոցի հետ ընդհատվում է: Գեներալ Փիրումյանը եպիսկոպոսի օգնությամբ, անթացույր թևի տակ, հասնում է շտաբ, և այնտեղ միանգամից ամեն ինչ պարզվում է. գիշերը թուրքերն անակնկալ հարձակվել էին հայոց զորքի վրա, վերջիններս լքել էին իրենց դիրքերը և փախել, գնդապետ Մազմանյանը հուսահատությունից ինքնասպանություն էր գործել, քաղաքի բնակչությունը, հանկարծակիի եկած մեր զորքի փախուստից, ենթարկվում է անասելի խուճապի. փախչում են, ով ինչով կարող էր՝ կառքերով, ձիերով, շատերը, բեռներն ու երեխաներին շալակած, փախչում էին դեպի շտաբի ձորը՝ այնտեղ որպես թե պաշտպանություն գտնելու կամ դեպի Ալեքսանդրապոլ փախչելու: Ստեղծված իրադրության մեջ անպաշտպան քաղաքացիների կյանքը փրկելու համար Գ.Հովսեփյանը գեներալ Փիրումյանին խորհուրդ է տալիս անձնատուր լինել: Քաղաք ուղարկված բանագնացները չեն կարողանում քաղաք մտնել համազարկերի պատճառով: Այդ ժամանակ Փիրումյանը դիմում է եպիսկոպոսին.«*Սրբազան, մի բան պետք է դուք փորձեք, անչամբ պետք է բերդի գլուխը բարձրանաք և հայրներ մեր անձնավորությունը: Այդ պիտի կատարեք ժողովրդի կյանքը փրկելու համար*»: Եպիսկոպոսը առանց տատանվելու հայտնում է իր պատրաստակամությունը... Չորից պիտի բարձրանային բերդի գլուխը՝ լեռնաշղթայի բարձունքը... Բանագնացներին է մոտենում ճակատի թուրք հրամանատարը, և եպիսկոպոսը դիմում է նրան.«*Փաշա՛, պատերազմի մեջ ենք, հաղթող կա և հաղթվող*

*մենք հաղթված ենք և եկել ենք հայրենիու, թե մենք անչնա-
փոր ենք լինում: Ահա այնպեղ մեր հայ զինվորներին շրջապա-
սել են շերտնք: Կսպանեք, գերի կվերցնեք՝ չեք գիտենալիքն է:
Քայջ չորը, տեսնում եք, լցված է հասարակ քաղաքացիներով
կանայք, անմեղ երեխաներ, այնպեղ են մեր որբանոցները:
Չինվորականը որբան քաջ, նույնչափ վեհանչն, գթուր պիտի
լինի: Գիծում ենք չեք մարդասիրությանը և խնդրում դադարեց-
նել կրակը»:* Գնդապետը ձեռքով նշան է անում, և կրակը դադա-
րում է¹:

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի՝
Հասմիկ Ափինյանի ֆոնդում են պահպանվում 1920թ. Կարսի ան-
փառունակ անկման ժամանակ ինքնասպանություն գործած
Մազմանովի մասին ողբերգի երեք քառատողերը, որոնք ձայնագ-
րել է Հասմիկ Ափինյանը 2001թ. Յունեսկոյի ժողովրդական բա-
նահյուսության պահպանման «Աշխարհի հիշողությունը» միջազ-
գային ծրագրի շրջանակներում: Այս ողբերգը տարածված է եղել
Շիրակի գրեթե բոլոր գյուղերում և Գյումրիում: Առաջին երկու
քառատողերը երգել է Շիրակի մարզի Երազգավորս գյուղի բնա-
կիչ Վոլոդյա Խանոյանը.

*«Մազմանովը գրեց Ղարսից հրաման,
Ինչքան որ հայեր կան, թող հավաքվեն գան,
Ա՛խ, անասպված հայեր, դիպիդ կոպորվեիք,
Մազմանովի դիակը թուրքին չթողնեիք:
Մազմանովը քաշեց սպրճանակը,
Իզուր տեղը գոհեց ջահել ջանդակը:
Ա՛խ, անասպված հայեր, դիպիդ կոպորվեիք,
Մազմանովի դիակը թուրքին չթողնեիք»:*

Երգի երրորդ քառատողը երգել է Մարմաշենի բնակիչ Արաք-
սի Պետրոսի Վարդանյանը.

**«Մազմանովին բերին, դրին Ղարսի սպանցին,
Անասրված հայերը թողին գնացին:
Ա՛խ, անասրված հայեր, դիվդ կոպորվեիք,
Մազմանովի դիակը Ղարսում չթողնեիք»:**

Մեծ եղեռնի հարյուրամյակին ընդառաջ ավելի է մեծանում հետաքրքրությունը XX դ. սկզբի խոշորագույն ոճրագործության՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ, ինչը պայմանավորված է բազմաթիվ երկրների կողմից պատմական այդ փաստի ճանաչումով: Հայոց ցեղասպանության մասին լույս են ընծայվել շատ ուսումնասիրություններ, գիտական աշխատություններ, գեղարվեստական գործեր և փաստաթղթերի ժողովածուներ:

Վերջին տարիներին հրատարակված գրականության մեջ իրենց կարևոր տեղն են գրավում պատմական հիշյալ իրադարձությունների անմիջական մասնակիցը դարձած ականատես-վկաների և Մեծ եղեռնը վերապրածների պատմած ու գրի առած հիշողությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայ դատի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

2003-ի ամռանը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի և Գյումրու «Կումայրի» արգելոց-թանգարանի (ԿԱԹ)² հանձնարարությամբ նախաձեռնեցինք «Մեծ եղեռնը վերապրածները» խորագրով մատենաշարի հրատարակությունը՝ ընդգրկելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզում և Գյումրիում Մեծ եղեռնը վերապրած մարդկանց հուշապատումները: Մատենաշարում մեր հրատարակած հուշապատումներն են՝ 2004թ.՝ «Ծննդավայրիցս դեպի Տեր Ջոր (Քաջունի Ղարագյոզյանի հիշողությունները)», 2006թ.՝ «Հուշեր անցյալից (Հայրապետ Տոնոյանի հիշողությունները)», 2008թ.՝ «1915թ. Բիթլիսյան ողբերգություն (Սիհրան Ղազարյանի հուշապատումը)», շուտով լույս է տեսնելու «Մեր գնդի ճակատագիրը (Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի հուշապատումը)»: Այս անգամ ընթերցողի սեղանին ենք դնում Հայոց ցեղասպանության ականատես-վկա Աղասի Ալեքսանի Մակարյանի

«Հիշողություն մեր ընկրանիքի պատմության մի քանի պահերից» հուշապատումը: Մատենաշարում ընդգրկված հինգ հուշապատումներն էլ աչքի են ընկնում իրենց եզակիությամբ, բայց իրարից անկախ, գրեթե նույնությամբ պատկերում են պատմական նույն իրողությունները, պատմական իրար նման դեպքերը, կերպարները և իրադարձությունները, նույն ահասարսուռ տեսարաններն ու դաժանությունները, որոնք զուգակցվելով հաստատում, շարունակում, լրացնում և ընդհանրացնում են միմյանց՝ անձնականից վերածվելով ընդհանուր, ապա և համազգային ողբերգության, Մեծ եղեռնի ու Հայոց ցեղասպանության:

Պատմական գրականության մեջ բազմիցս նշված է, որ Հայոց ցեղասպանության ականատես-վկաների պատմած կամ գրի առած հուշերը իրենց կառուցվածքով կա՛ն հակիրճ են ու սեղմ, կա՛ն ծավալուն ու երկարապատում³: Այս դեպքում հիշողությունները ծավալուն ու երկարապատում են և ներառում են զանազան երկխոսություններ, մեջբերումներ, ժողովրդական բանահյուսություն⁴: Վերապրածը ներկայացնում է սեփական տոհմաժառը և մանրամասն ներկայացնում գերդաստանի յուրաքանչյուր անդամի ճակատագիրը, բերում է արխիվային փաստաթղթերից քաղված թվային տվյալներ:

Այս ամենով հեղինակը փորձում է հաստատել, փաստագրել իր պատմածի իսկությունը՝ առավել արժեքավոր ու ցնցող դարձնելով իր հուշերը: Ուշագրավ է վերապրածի կողմից Շիրակի և Կարսի գավառներին, այդտեղ գտնվող մի շարք գյուղերին, Երևանի նահանգին վերաբերող մի շարք պատմական, աշխարհագրական և ազգագրական բնույթի տվյալներով ու տեղեկություններով հիշողությունները համալրելու և հարստացնելու փորձը: Մակարյանի հուշապատումի մեջ կա ժամանակագրություն, ներկայացված են իրական փաստեր: Ինչպես մյուս վերապրածները, այնպես էլ նա իր պատմածի նկատմամբ կրում է բարոյական պատասխանատվություն և ունի պարտքի գիտակցում: Հայոց ցեղասպանությունը, որը իրականացվել է XX դարասկզբին, անմիջականորեն ընկալվել է ականատեսի զգայարաններով և

անջնջելիորեն տպավորվել նրա հիշողության մեջ: Պատմական այդ իրադարձությունների ականատես-վկան, խոր ցավով վերապրելով իր տխուր անցյալը, մեզ է հաղորդում իր անձնական հուշերը՝ պատմական հայրենիքի, ծննդավայրի, հայրենի օջախի, սիրելի հարազատների մասին, որոնք վաղուց չկան¹⁵: Այդ անձնական հիշողությունները նրա հետ են եղել ողջ կյանքի ընթացքում, և, ինչպես մյուս վերապրածները, նա էլ չի կարողացել ազատվել այդ դառը հիշողությունների մղձավանջից: Աղասի Մակարյանի հիշողությունները, անշուշտ, եզակի են իրենց բովանդակությամբ, բայց և նման են մյուս վերապրածների պատմած հուշերին: Հուշապատումի մեջ հանդես եկող գլխավոր անձը պատմողի կերպարն է, որը ոչ միայն ներկայացնում է դաժան իրադարձությունները, այլև դրսևորում է իր անհատականությունը, աշխարհայացքը, մտտեցումներն ու տեսակետները իրեն բնորոշ լեզվով ու ոճով⁶: Պատահական չէ, որ վերապրածը իր հիշողությունները վերնագրել է «**Մեր ընկանիքի մի քանի պահերի պատմությունից**»: Հուշապատումը եզակի է նրանով, որ թույլ է տալիս վեր հանել ոչ միայն Մեծ եղեռն վերապրածի (վերապրածների) հոգեբանական բարդությամբ, այլ նաև տեսնել ու ընկալել այն ուղիները, որ վերապրածը փնտրում է հոգեբանական ծանր վիճակից դուրս գալու համար: Հոգեբանական այս դժվար հանգույցը գրեթե անհնարին է դառնում քանդել ողջ կյանքի ընթացքում, ինչի արդյունքում վերապրածը ունենում է լուրջ և անհաղթահարելի բարդությամբ:

Աղասի Ալեքսանի Մակարյանի հուշապատումի մեջ կան նաև թե՛ պատմական բնույթի, թե՛ ոճական որոշ անճշտություններ, այդ իսկ պատճառով հուշապատումը ներկայացվում է մասնակի միջամտություններով: Հուշերում կան ժամանակագրության հետ կապված սխալներ, որոնք ճշտված են անմիջապես տեքստում, իսկ ծանոթագրություններում բերված են բնագրային տվյալները: Ընթերցելով հիշողությունները՝ չմոռանանք, որ ականատես-վկան Մեծ եղեռնի ժամանակ եղել է 11 տարեկան, 1920թ.՝ 16 տարեկան պատանի: Մեր խոսքը՝ մեջբերումներ, լրացումներ, մեկնաբա-

նություններ, բերված է ծանոթագրություններում, հուշապատումին կցված են լուսանկարներ, քարտեզներ և տոհմաձառք: Վերջում տրված է հեղինակի գրառումներում օգտագործված օտար բառերի և արտահայտությունների բացատրական բառարան:

Ինչպես «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի առաջին երկու հուշապատումների հեղինակները, այնպես էլ «Մեր ընտանիքի մի քանի պահերի պատմությունից» հուշապատումի գլխավոր հերոսը ապրել են Շիրակի մարզում: Աղասին ծնվել է 1904 թ. Շիրակի Ջաջուռ⁷ գյուղում, որ ինը կմ է հեռու Գյումրի քաղաքից: Աղասի Մակարյանի հուշապատումը գրվել է 1915թ. Մեծ եղեռնից 61 տարի անց՝ 1976թ.: Հուշապատումն ամբողջական է՝ բաղկացած 69 մեքենագիր էջերից: Մակարյանի հուշերի ձեռագիր օրինակը ցուցադրվել է վերապրածի հարազատ գյուղի դպրոցի պատմության անկյունում և կորսվել է 1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո:

Իր հուշերում վերապրածը խոստովանում է. «*Այս փոքրիկ աշխարհները գրում եմ մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից որպես հիշողություն, որը, իմ կարծիքով, օգտակար և հեղափոխիչ կլինի սերունդներին՝ մասնավորապես երիտասարդությանը, մասնավանդ որ այն առնչված է իմ ժամանակի քաղաքական ու հասարակական անցուղարշին: Հարկ եմ համարում նշել, որ մարդկային ամենապայծառ հիշողությունն անգամ միշտ չէ, որ ընդունակ է անցյալը վերականգնելու բացարձակ ճշտությամբ: Այնուամենայնիվ, իմ հիշողությունը թույլ է տալիս այս գրվածքով ներկայացնել մեր ընտանիքի կրած զրկանքները թուրք բարբարոսների հալածանքների պատճառով: Փորձել եմ պատմությունս զուգակցել 1941-45 թթ. Հայրենական սրբազան պատերազմի ժամանակ խորհրդային մարդկանց, ազապարար Կարմիր բանակի հերոսական ջանքերին ու ֆաշիստական զորքերի դեմ պայքարին: Այսպես համեստ կերպով խոսվում է խորհրդային շինարարության և Հայրենական պատերազմին մեր սերնդի՝ իմ ընտանիքի մասնակցության մասին, ինչը նույնպես կունենա իր բարերար ազդե-*

ցուքյունը և նշանակությունը նոր սերունդների վրա»: Անհրաժեշտ է կարևորել նաև պատերազմի մասնակցի կողմից ներկայացված Կերչի՝ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ տեղի ունեցած ճակատամարտի նկարագրությունը:

Նա քաջ գիտակցում է ցեղասպանության ճանաչման համաշխարհային նշանակությունը, նաև արժևորում է ֆաշիստական հորդանների դեմ տարած վիթխարի հաղթանակը և այս եղելությունները գրի առնելու անհրաժեշտությունը: Ի դեպ, Կերչի ճակատամարտը իր խոր հետքն է թողել ոչ միայն ողջ մնացած մասնակիցների, այլև զոհված հայ զինվորների սերունդների սրտերում: Լանջիկ գյուղում բանահավաքություն կատարելու ժամանակ ՇՀՀԿ գիտքարտուղար Հ.Հարությունյանը մի ողբերգ է ձայնագրել (մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Հ.Հարությունյանին նյութը տրամադրելու համար), որը հորինել են Լանջիկի բնակիչները և հաճախ կատարել: Ողբերգը նվիրված է Կերչի ճակատամարտի ժամանակ զոհված գյուղացիներից մեկին՝ Գեղամ Մովսիսյանին, և այն երգել է զոհվածի որդին՝ Բարեղամ Գեղամի Մովսիսյանը: Բանասացը ծնվել է 1938թ. Լանջիկում: Ունի միջնակարգ մասնագիտական կրթություն: Նախնիները գաղթել են Ալաշկերտի գավառակի Մոլեսման գյուղից XIX դարի կեսերին: Երգը վերնագրված է «**Կերչ քաղաքի ջուրը պաղ էր**» (ողբերգ):

**Կերչ քաղաքի ջուրը պաղ էր,
Մայրը գիտեր՝ որդին սաղ էր,
Էլ չգիտեր՝ հողի տակն էր,
Խաբեք մորս, յարալու եմ,
Յարալու եմ, տուն գալու չեմ:**

**Կերչ քաղաքի ջուրը աղի,
Հացն ու կերակուրը լեղի,
Շատ շատերի սիրտը դաղի,
Խաբեք մորս, յարալու եմ,
Յարալու եմ, հետ գալու չեմ:**

**Հենց որ մտանք Կերչի հողը,
Վրես թափվեց մահվան դողը,
Շեկ քյանքյուլս դրին հողը,
Խաբեք մորս, վիրավոր եմ,
Վիրավոր եմ, հետ գալու չեմ:**

Հայրենական մեծ պատերազմի յոթանասունամյակի նախօրեին մեզ համար ոչ պակաս կարևոր են նաև Կերչի ճակատամարտի հետ կապված որոշ մանրամասնությունների հրատարակությունը և պատմական բնույթի մի քանի փաստերի լուսաբանումը: Կերչի՝ Մեծ հայրենականի սկզբներին տեղի ունեցած ճակատամարտը հայ ազգի պատմության փառապանծ էջերից մեկն է: Հայկական զորամիավորումներից առաջինը ռազմաճակատ մեկնեց 390-րդ դիվիզիան: Այն 1942թ. գարնանը Նովոռուսիյսկից ծովային դեսանտով ափ իջեցվեց Կերչի թերակղզում և ունեցավ ծանր կորուստներ: Դիվիզիան գրեթե ամբողջությամբ ջախջախվեց, զոհվեց նաև նրա հրամանատար գնդապետ Միմոն Չաքյանը⁸: Չնայած ճակատամարտը հաղթական ելք չունեցավ, այնուամենայնիվ մեր ազգը տվեց մեծ քանակությամբ հերոսներ, որոնք իրենց կյանքը զոհեցին հանուն հայ ազգի և Խորհրդային Միության բարօրության: Ա. Մակարյանը ուշադրություն է դարձնում նաև Կերչի արվարձանում գտնվող Հաջիմուշկայում և Վոյկովի անվան գործարանի երկաթի հանքերում կռվող խորհրդային զինվորների ճակատագրի վրա, որոնք՝ շուրջ 10000 հոգի, զոհվեցին, սակայն չհանձնվեցին թշնամուն, և այդ քարհանքերը դարձան եղբայրական գերեզման բոլորի համար, քանի որ այս 10000-ից գոնե մեկը չհամաձայնեց հանձնվել գերմանացիներին:

Վերապրածի հուշերում անգին են պատմական այնպիսի տեղեկությունները, որոնք վերաբերում են 1826-1828 թթ. ռուս-պարսկական, 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո կազմակերպված վերաբնակեցումներին, նաև Հայաստանի Առաջին հանրապետության օրհասական ժամերին մեր ժողովրդի հասարակ խավի համար «փրկարար» բոլշևիկյան գաղափարախո-

սուրճյան ազդեցությանը և Հայաստանի խորհրդայնացման անհրաժեշտությանը:

Վերապրածը հիշում է Հայոց ցեղասպանության այն դեպքերը և փաստերը, որոնք վերաբերում են 1918-1920թթ., Մուստաֆա Քեմալի արշավանքին և հայ-թուրքական պատերազմին, Ալեքսանդրապոլի գավառի հայերի կոտորածներին այժմ «Ջարդի ձոր» կոչվող ձորակում: Այս ջարդերը նա որակում է ոչ միայն որպես իր գերդաստանի ողբերգական ճակատագիր, այլև որպես հայոց պատմության ողբերգական էջ և խոշոր ոճրագործություն: Վերապրածի առանձնաշնորհն այն է, որ իր հուշերում ներգրավել է նաև իր ընկերների, ազգականների, մերձավորների, հարևանների, անգամ թուրքերի երկխոսությունները և հուշերի փոքրիկ պատառիկներ, որոնք մեծարժեք տեղեկություններ են պարունակում պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգագրական և կրթական առումով:

Հիշողություններում կարևոր տեղեկություններ կան 1918թ. Ադրուլաղից Ջաջուռ տանող ճանապարհին խաղաղ բնակչության շարքերում գտնվող այն տղամարդկանց քանակի մասին, որոնք գերվել էին թուրքերի կողմից: Գերի տարված 12000 հայ տղամարդկանցից խորհրդային կառավարության պահանջով 1920թ. հետ է վերադարձվել ընդամենը 300 մարդ: Տեղեկություններ կան նաև 1920թ. Կարսի ամերիկյան որբանոցի, Ալեքսանդրապոլի Սև դուլի, թուրքերի՝ Ալեքսանդրապոլը լքելու ժամանակ Սև դուլի տարածքից ցարական Ռուսաստանի գույքը թալանելու, «Ջարդի ձոր» տարված խաղաղ բնակչության կոտորածի մասին:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Ադասի Մակարյանի թոռնուհուն՝ Աիդա Մակարյանին, և դստերը՝ Անահիտին՝ հուշապատումի մեքենագիր տարբերակը, լուսանըկարները և այլ տեղեկություններ տրամադրելու համար: Առանձնակի շնորհակալություն ենք հայտնում ՀՀ «Իմպեքս» կազմակերպության գլխավոր ճարտարագետ Էդուարդ Ավագյանին և Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտակ

Հովհաննիսյանին՝ գրքի հրատարակությանը սատարելու համար, նաև Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Հայկ Գեմոյանին, «Կումայրի» արգելոց-թանգարանի տնօրեն Ստեփան Տեր-Մարգարյանին, Շիրազի տուն-թանգարանին (տնօրեն՝ Արա Պապանյան), լրագրող Համլետ Մոսինյանին՝ աջակցություն ցուցաբերելու համար: Հույս ունենք հանրության ուշադրությունը սևեռելու 1915թ. Հայոց ցեղասպանության հարյուրամյակի, հայկական հարցի և հայ դատի վրա: Նվիրում ենք Հայրենական մեծ պատերազմի յոթանասունամյակին և Կերչի ճակատամարտի բոլոր մասնակիցներին, որոնց թվում էր նաև մորական պապս՝ Քյարամ Մարկոսյանը:

Ինգա Էդուարդի Ավագյան

Մեր ընտանիքի ճակատագիրը

Այս փոքրիկ աշխատանքը գրում եմ մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից որպես հիշողություն, որը, իմ կարծիքով, օգտակար և հետաքրքիր կլինի սերունդներին, մասնավորապես երիտասարդությանը, մանավանդ որ այն առնչված է իմ ժամանակի քաղաքական ու հասարակական անցուդարձին: Հարկ եմ համարում նշել, որ մարդկային ամենապայծառ հիշողությունն անգամ միշտ չէ, որ ընդունակ է անցյալը վերականգնելու բացարձակ ճշտությամբ: Այնուամենայնիվ իմ հիշողությունը թույլ է տալիս այս գրվածքով ներկայացնել մեր ընտանիքի կրած գրկանքները թուրք բարբարոսների հալածանքների պատճառով: Փորձել եմ պատմությունս զուգակցել 1941-45 թթ. Հայրենական սրբազան պատերազմի ժամանակ խորհրդային մարդկանց, ազատարար Կարմիր բանակի հերոսական ջանքերին ու ֆաշիստական զորքերի դեմ պայքարին: Այստեղ համեստ կերպով խոսվում է խորհրդային շինարարության և Հայրենական պատերազմին մեր սերնդի՝ իմ ընտանիքի մասնակցության մասին, ինչը նույնպես կունենա իր բարերար ազդեցությունը և նշանակությունը նոր սերունդների վրա:

Հայտնի է, որ մարդկային մտքի տրամաբանությունը հանգում է նրան, որ ծերանալիս մարդու միտքը շարժվում է դեպի վախճանը, հետևաբար նրա մեջ ցանկություն է առաջանում կարելվույն չափ բարերար հետքեր թողնել հաջորդ սերունդների համար: Մարդը մինչև ծնվելը, լինելով բնության մի մասնիկը, դեռ մոր արգանդում կատարում է որակական թռիչք, և հանդես է գալիս անհատ-էակը: Մարդու հիշողությունը այս կամ այն չափով ապրում է մարդու օրգանիզմի յուրաքանչյուր բջիջում, ինչի հետևանքով կյանքի մայրամուտում անկարելի է հուշեր գրել առանց մտնելու մանկական տարիքի հիշողությունների մեջ: Այդ պատճառով էլ իմ մանկության վառ հիշողություններից դուրս չի մնացել օսմանյան բարբարոսների՝ հայ ժողովրդին տնով-տեղով մայր հողից հեռացնելը: Հայերն իրենց գոյությունը պահպանելու համար նոր տեղում բնակություն հաստատեցին, մեծ սիրով մշակեցին մայր

հողը: Մակայն նոր մշակված մայր հողից, տնից-տեղից կրկին տեղահան արին: Այսպիսի տեղահանություններն են եղել հիմնականում հայ ժողովրդի և նրա մայրաքաղաքների տեղափոխության պատճառը: Հռոմեացիների, պարսիկների, արաբների, թուրքերի արշավանքների, հայերի ֆեոդալական մասնատման, ներքին ու արտաքին քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով Հայաստանի մայրաքաղաքները հաճախ փոփոխության են ենթարկվել: Հայերն ունեցել են 14 մայրաքաղաք՝ Վանը (Տուշպան), Տիգրանակերտը, Արմավիրը, Երվանդաշատը⁹, Արտաշատը, Վաղարշապատը, Արշակավանը, Գվինը, Բագրեվանը¹⁰, Երազգավորսը, Ղարսը (Կարս), Անին, Սիսը¹¹ և Երևանը:

Մեր սերնդի ապրած ժամանակաշրջանը նույնպես եղել է տառապանքների, զրկանքների և քաղաքական բուռն իրադարձությունների ժամանակաշրջան: Օսմանյան թուրքերը մեր ընտանիքը նույնպես տեղահան են արել մայր հողից և քշել ուրիշ տեղ: Այստեղ նորից ու նորից պայքար է սկսվել նոր ընտանիքի, թաղամասի, ազգի կազմավորման համար: Իմ նպատակն է մեր ժառանգներին հիշողություն թողնել մեր ընտանիքի ու իմ ապրած ժամանակաշրջանի իրադարձությունների պատմությունը: Լավ կլիներ, որ լինեի գրող, որպեսզի գեղարվեստորեն շարադրեի տեղի ունեցած իրադարձությունները, բայց, ցավոք, գրող չեմ և գրում եմ միայն իմ կյանքի ընթացքում տեղի ունեցած ու հիշողությանս մեջ պահպանված մի շարք, ըստ իս, կարևոր իրադարձությունների մասին: Ափսոսում եմ, որ չեմ կարողացել կազմել ժամանակի և իրադարձությունների օրագիր, որով ավելի ընդարձակ կլինեի իմ հուշերի ու պատմական դեպքերի նկարագրությունը: Հիշողություններիս մեջ ընդգրկված չեն բոլոր մարդկանց անունները, որոնք այս կամ այն չափով առնչություն են ունեցել այդ ժամանակի իրադարձությունների հետ:

Որպեսզի մեր երիտասարդությունն իմանա, թե ովքեր են եղել մեր պապերը, որոնցից աճել է մեր ներկա սերունդը, անհրաժեշտություն է առաջանում որոշ չափով նկարագրելու մեր պապերի անցած ուղին և նրանց կրած տառապանքները:

Պատմությունից հայտնի է, որ ռուս-պարսկական 1824-28թթ.¹² պատերազմից հետո Պարսկաստանի հետ կնքած Թուրքմենչա-յի¹³ և ռուս-թուրքական 1826-29թթ. պատերազմից հետո կնքված Ադրիանապոլսի¹⁴ պայմանագրերով Անդրկովկասը միացվեց Ռուսաստանին, հայ ժողովուրդի մի հատվածը ազատվեց պարսկական և մասնակիորեն՝ օսմանյան անմարդկային հալածանքներից: Երբ ռուսական հզոր պետությունը գրավեց Արևելյան Հայաստանը, մեր պապերն Արևմտյան Հայաստանից ինքնակամ եկան Արևելյան Հայաստան և այստեղ կառուցեցին, ստեղծեցին, շենացրին այն՝ դարձնելով քաղաքակիրթ երկիր: Այս շրջանում արևմտյան ապրանքներից հասկացողը կամ այլ լեզուներ իմացողը խիստ անհրաժեշտ էր, մասնավորապես վաճառականը, որը ամենաթանկ մասնագետի արժեքն ուներ: Այսպիսի հայ և հույն առևտրականներին դեռ ռուսական թագուհի Եկատերինան էր հրավիրում Ռուսաստան: Այս բանին նպաստեց նաև այն ժամանակվա Անդրկովկասյան ռազմաճակատի զորավար Պասկևիչը, և նրա միջնորդությամբ ու պայմանագրերի համաձայն, ինչպես շատ ընտանիքներ, այնպես էլ մեր պապերը ստիպված թողեցին Մշու ընդարձակ արգավանդ դաշտի, գորգի նման փռված գեղեցիկ Տարոնի գյուղերն ու հողերը, իրենց շեն տները, որոնք սուլթանական բարբարոսների ձեռքով ներկված էին հայերի արյունով, և Արևմտյան Հայաստանի Խնուս գավառի Խոզլի գյուղից գաղթեցին Արևելյան Հայաստանի Ախուրյանի շրջանի Ջաջուռ գյուղը, որտեղ և բնակություն հաստատեցին:

Իմ ծննդավայր Ջաջուռ գյուղը մինչև մեր պապերի այստեղ բնակություն հաստատելը եղել է շրջակա հինգ գյուղերի կենտրոնը և շրջակա գյուղերի համար ծառայել է որպես ամառանոց: Ջաջուռ գյուղը շրջապատված է Հաջինագար¹⁵ (այժմ՝ Կամո), Դոնադռան¹⁶ (այժմ՝ Շիրակ), Երրորդ Արխավալի¹⁷, Սարխար¹⁸, Աղքիլիսա¹⁹ (Կրաշեն) գյուղերով, որոնք գտնվում են Շիրակի դաշտավայրում: Ջաջուռն իր անվանումը ստացել է Ջան-ջուր անվանումից²⁰: Մեր պապերը, Արևմտյան Հայաստանից գալով արևելյան Հայաստան, որպես հարմարավետ վայր ընտրել են Ջաջուռը, նկատի են ունեցել, որ գյուղը գտնվում է մի քանի գյու-

ղերի կենտրոնում, որ գյուղի կողքին հոսում է պարզ առվակը: Գյուղը հյուսիսից պաշտպանված է Մարալդաղ և Պուլուզիկ լեռներով, գտնվում է Գյումրի քաղաքին մոտ: Գյուղում կան սառնորակ աղբյուրներ: Մեր պապերը, խմելով այդ սառնորակ ջուրը, ասել են՝ «ջա՛ն, ջու՛ր», այսպիսով՝ «ջան ջուր»-ը տարիների ընթացքում վերափոխվել է Ջաջուռի: Պետարխիվի 7-րդ ֆոնդի 1892թ. տվյալներով սկզբնական շրջանում գյուղում բնակություն է հաստատել ընդամենը 25 տնտեսություն²¹: Հետագայում բնական աճի հետևանքով այն հասել է 150 տնտեսության՝ 1500 անձով, նույն՝ 1892թ. տվյալներով: Այստեղ յուրաքանչյուր տնտեսություն բաղկացած է եղել միջին հաշվով 10 անձից (1500: 150-10-ի): Ըստ 1975թ. տվյալների՝ Ջաջուռ գյուղի բնակիչներից գանազան վայրերում բնակվում են՝

Երևանում՝	160	տնտեսություն
Լենինականում՝	133	տնտեսություն
Մասիսում՝	23	տնտեսություն
Հոկտեմբերյանում՝	30	տնտեսություն
Կիրովականում՝	22	տնտեսություն
Թբիլիսիում՝	56	տնտեսություն
Մոսկվայում՝	10	տնտեսություն
Լենինգրադում՝	2	տնտեսություն
Արտաշատում՝	7	տնտեսություն
Կույբիշևում՝	3	տնտեսություն
Տալլինում՝	1	տնտեսություն
Չանազան կայարաններում՝	10	տնտեսություն
Ջաջուռ գյուղում՝	135	տնտեսություն

Այսպիսով՝ 1975թ. տվյալներով Ջաջուռի գյուղացիների տնտեսությունների թիվը հասնում էր 592-600-ի: Եթե վերցնում ենք յուրաքանչյուր տնտեսության թիվը միջին հաշվով չորս անձ, կստացվի 2400 հոգի:

Արևմտյան Հայաստանից Ջաջուռ գյուղ գաղթողները մեծ մասամբ եղել են Մշու գավառի Խոզլի²² գյուղից, իսկ փոքրաթիվ մա-

սը՝ Ղարսից, որոնք մինչև այժմ էլ գյուղում կոչվում են ղարսեցիներ²³: Բնակչությունը եղել է խիստ չքավոր, նրանց խոսակցական լեզուն եղել է Մշու-Խնուսու բարբառը, որը մինչև այժմ էլ հասակավոր մարդկանց խոսքում պահպանվում է: Գյուղացիների հիմնական զբաղմունքը երկրագործությունը և անասնապահությունն էր: Միաժամանակ օգտվելով այն բանից, որ ռուսական արքունիքի ճանապարհը անցնում էր գյուղի մոտից և հաշվի առնելով տեղի բնական պայմանները՝ գյուղացիներն աշխատել են խճուղու վրա (վերանորոգում, ձյան մաքրում), միաժամանակ զբաղվել են բրուտագործությամբ, կավից պատրաստել են թոնիր, չանաղներ և այլ ամանեղեն, որոնց պահանջարկը այդ ժամանակ մեծ է եղել: Հետագայում բնակչության զգալի մասը աշխատել է Թբիլիսի-Ալեքսանդրապոլ երկաթուղու²⁴ շինարարության և գծի ծառայության վրա: Այդպիսի քրտնաջան ու լարված աշխատանքից հետո էլ գյուղացիները չեն կարողացել բարելավել իրենց տնտեսական վիճակը, և մեծ մասը ապրել է չքավորության մեջ: Երկրագործությունը գտնվել է խիստ ցածր մակարդակի վրա: Պետարխիվի 7-րդ ֆոնդի տվյալներով՝ 1892թ. գյուղը կատարել է 1160 դեսյատին ցանքս, սակայն երկրագործության ցածր մակարդակ ունենալու պատճառով ստացել է քիչ բերք, որը չի բավարարել անգամ գյուղացիների մինիմալ պահանջները: Գյուղի չորսդասյա դպրոցը պատկանել է եկեղեցուն, որտեղ սովորել են 115 աշակերտներ, այդ թվում՝ 15 աղջիկներ: Գյուղն ունեցել է մեկ եկեղեցի՝ երկու քահանայով, քահանաներից մեկը եղել է 82 տարեկան, նրան անվանել են մեծ տերտեր, մյուսը՝ 62 տարեկան: Քահանաները, չունենալով կրթություն, գրեթե չեն զբաղվել և չեն մտահոգվել երեխաների կրթության հարցերով: Ըստ մեր պապերի պատմածի՝ քահանաներն իրար նկատմամբ թշնամաբար են տրամադրված եղել, ինչը խիստ ազդել է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների վրա: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին եղել է խիստ խարխլված, կիսափլված և խոնավ. կարելի է ասել, որ գյուղը եկեղեցի չի ունեցել: Միայն 1914-1915 թթ. սև տուֆից կառուցվել է եկեղեցու նոր շենք, որի տանիքը ծածկված չի ե-

ղել: 1930թ. գյուղի համայնքի որոշմամբ կտուրը ծածկվեց, և եկեղեցին վերածվեց ակումբի:

Մեր ընտանիքի պատմությանն անցնելու նպատակով անհրաժեշտ է կանգ առնել մեր պապերի՝ 1828թ. Խոզլիից գաղթելուց հետո Ջաջուռում բնակություն հաստատելու ժամանակաշրջանի վրա, լուսաբանել նրանց ազգակցական կապերի պատմությունը մինչև մեր սերունդները:

Ջաջուռ գյուղում բնակություն են հաստատել մեր պապերից Ամիրխանը իր եղբոր տղաներ Ասատուրի և Մարկոսի հետ: Քանի որ մեր ընտանիքը առաջացել է Ասատուրից, հետևապես ես կանգ եմ առնելու Ասատուրի ընտանիքի հետագա ճյուղավորումներից առաջացած սերունդների վրա: Ասատուրն ունեցել է չորս տղա՝ Խեչանը, Ավեն, Հովհաննեսը և Բաղիշը: Մեր առջև դրված խնդիրների լուսաբանման նպատակով խոսելու եմ Հովհաննեսից առաջացած սերունդների մասին: Հովհաննեսը նույնպես ունեցել է երեք տղա՝ Մակարը՝ իմ պապը, Դանիելը և Սողոմոնը, որոնք նույնպես ունեցել են իրենց սերունդները և բնակվել են Ջաջուռում: Ես հիմնականում կանգ եմ առնելու Մակարից առաջացած սերունդների պատմության վրա: Մակարը նույնպես ունեցել է վեց զավակ՝ չորս տղա և երկու աղջիկ՝ Ալեքսանը՝ իմ հայրը, իմ հորեղբայրներ Ասատուրը, Կարապետը և Հարությունը, հորաքույրներ Մարանը և Սևգյուլը: Այստեղ չեմ կարող կանգ չառնել և պարտք եմ համարում, թեկուզ հակիրճ, պարզաբանել հորեղբայրներիս և հորաքույրերիս կյանքի, նրանց բախտի, ընտանիքների դժբախտության պատմությունը: Սկսում եմ հորեղբայր Ասատուրից, որին գյուղում անվանում էին Աստ ամի: Աստն հորիցս փոքր էր, ուներ բարձր հասակ, աշխատասեր բանվոր էր, աշխատում էր Ջաջուռ կայարանում որպես երկաթգծի բանվոր: Նա ուներ մեկ տղա՝ անունը Ռուբեն, և երկու աղջիկ՝ Վարսենիկը և Շուշանիկը: Վարսենիկն ամուսնացած էր հարևան Հաջինազար (այժմ Կամո) գյուղի բնակիչ Հովսեփի հետ: Վարսենիկը վերին աստիճանի սրտաբաց ու ջերմասիրտ կին էր: Շուշանիկը ամուսնացած էր Դուկասյանի շրջանի Իլու գյուղում, որտեղ մինչև այժմ

էլ կան նրա սերունդները: Հորեղբորս միակ տղան՝ Ռուբենը, նույնպես ուներ մեկ տղա՝ Անուշավանը, որը 1943թ. գոհվեց Հայրենական մեծ պատերազմում՝ Ուկրաինական առաջին ռազմաճակատում, Խարկովի ազատագրության համար մղվող մարտերի ժամանակ: Ինչ վերաբերում է հորեղբայր Ասատուրին և նրա կնոջը, ապա նրանք 1920թ. սպանվեցին Ջաջուռ գյուղում թուրք հորդաների ձեռքով, երբ նրանք արշավում էին դեպի Հայաստան: Ինչպես տեսնում եք, հորեղբայր Ասատուրի ամբողջ գերդաստանը բնաջնջվեց թուրք մարդասպանների և գերմանական ֆաշիստների ձեռքով: Մյուս հորեղբայրս՝ Կարոն, մահացել է դեռ չամուսնացած, երիտասարդ հասակում: Հորեղբայր Հարությունը ունեցել է երկու տղա՝ Ենովքը և Հմայակը: Հորեղբայրս մահացել է 1943թ. Ջաջուռ գյուղում բուժօգնության ուշ հասնելու պատճառով: Ենովքը ընտանիքով²⁵ բնակվում էր Թբիլիսիում, 1944թ. ծառայողական պարտականությունները կատարելիս ընկնում է տրամվայի տակ և մահանում: Նրա ամուսինը գտնվում է Թբիլիսիի գերեզմանատանը: Ենովքն ունի մեկ աղջիկ՝ Օֆելյա անունով, որն ամուսնացած է և ունի երեք երեխա, բնակվում է Երևանում: Հորեղբորս մյուս տղան՝ Հմայակը, նույնպես ունի մեկ տղա, որը բնակվում է Սպիտակի շրջանային կենտրոնում, և երեք աղջիկ՝ Մարուսյան, Ջուլիետան ու Գրետան: Աղջիկներից երկուսը բնակվում են Երևանում, իսկ մեկը՝ Լենինականում: Ինչ վերաբերում է հորեղբորս տղա Հմայակին, նա նույնպես գոհվեց Հայրենական մեծ պատերազմում: Հորեղբորս այրին՝ Մարգարիտը, զրկված իր որդիներից, բնակվում է Ջաջուռում:

Վերևում ես ասացի, որ ունեցել եմ երկու հորաքույր՝ Մարանը և Սևգյուրը: Հարկ եմ համարում խոսելու նաև հանգուցյալ հորաքույրներիս մասին, որովհետև միշտ պատանեկության հասակում նրանց կողքին եմ եղել և նրանց գուրգուրանքին եմ պարտական: Մարանը ամուսնացած էր մեր գյուղացի Միքայել Ավետիսյանի հետ, ուներ երկու տղա և մեկ աղջիկ՝ Անուշ անունով, որն ամուսնացած է համագյուղացի Գևորգի հետ: Այս հորաքրոջս տղա Եսաբեկը, որն իմ հասակակիցն էր, 1919թ.՝ դաշնակցական կառա-

վարության ժամանակ, հիվանդացավ և մահացավ գյուղում, հորաքրոջս ամուսին Միքայելը և հորաքույրս նույնպես սպանվեցին 1920թ. բուրքական ջարդարարների ձեռքով: Նույն հորաքրոջս տղա Արտաշեսը կոմունիստ հրամանատար էր, որը զոհվեց Հայրենական մեծ պատերազմում, ունի երկու տղա, որոնցից մեկը՝ Ժորան, ներկայումս օդաչու է և ծառայում է Սովետական բանակում, իսկ մյուսը՝ Մարատը, իր այրի մոր՝ Արմենուհու և ընտանիքի հետ բնակվում է Հոկտեմբերյանի շրջկենտրոնում: Ինչ վերաբերում է մյուս հորաքույր Սեզյուլին, նա բարոյականության տիպար էր և ուներ մարդկային բոլոր լավագույն հատկանիշները, վերին աստիճանի բարեկամասեր և հյուրընկալ անձնավորություն էր: Նա ամուսնացել էր Սպիտակի շրջանի Աղբուլաղ²⁶ գյուղի բնակիչ Սարգիս Աղաբաբյանի հետ: Աղաբաբյանը նույնպես վերին աստիճանի բարեկամասեր և հարգալից անձնավորություն էր: Հորաքույրս ուներ Սուրեն անունով միևնույն տղա: Վերջինս նույնպես սպանվեց օսմանյան բարբարոսների ձեռքով 1920թ. Աղբուլաղ գյուղի բնակչության հետ: *Օսմանյան դահիճները 1920թ. Աղբուլաղ գյուղի ամբողջ բնակչությանը՝ կանանց ու երեխաներին, այս քվում գյուղում եղած գաղթականությանը, խաբելով գյուղից դուրս են բերում, քե փանում են Ալեքսանդրապոլ՝ իբր այնտեղ նրանց կերակրելու նպատակով: Այսպես Աղբուլաղ-Ալեքսանդրապոլ փանող խճուղով բնակչությանը հասցնում են մինչև Չաջուռի լեռնանցքը, ամբողջ ժողովրդին նսրեցնում են Մկո քաղոն²⁷ կոչվող սարի ստորոտում իբր քե հանգստանալու համար: Գահիճների կողմից նախօրոք նախապատրաստված է եղել նրանց սպանության հարցը: Օսմանյան զորքերը գնդացիներով և հրացաններով կոտորում են անմեղ բնակչությանը: Աղբուլաղ գյուղի բնակիչները և նրանց հետ եղած գաղթական նահապակները քաղված են Գեղյուկի²⁸ եղբայրական գերեզմանում, այդ քվում իմ սիրելի հորաքույրը և նրա միևնույնս որդին²⁹:* Սարգիս Աղաբաբյանի մահվան ժամանակն ինձ անհայտ է: Այսպիսով՝ հորաքրոջս ընտանիքից չի մնացել ոչ մի սերունդ: Հարգելի՛ ընթերցող, այս պատմությունից և ե-

ղած փաստերից հաստատվում է, որ ինչպես մեր ազգականներն ու բարեկամները, այնպես էլ գյուղի բնակչության մեծ մասը անմեղ կերպով սպանվել են օսմանյան դահիճների և գերմանաֆաշիստական ջարդարարների ձեռքով:

Այժմ հանգամանորեն խոսենք մեր ընտանիքի մասին: Հայրս՝ Ալեքսան Մակարյանը, ամուսնացել է Ախուրյանի շրջանի Երրորդ Արխավալի գյուղից Սանդուխտ Հակոբյանի հետ, որի ազգանունը հետագայում դարձել է Մակարյան: Մայրս՝ Սանդուխտ Մակարյանը, եղել է չքավոր գյուղացու աղջիկ, ունեցել է մեկ եղբայր՝ անունը Մնացական, և երեք քույր, որոնցից ոչ մեկը ներկայումս կենդանի չէ: Մայրիկիս եղբայր Մնացականից ներկայումս կա մեկ տղա՝ Սերգեյը, որը ընտանիքով բնակվում է Թբիլիսիում: Քեռուս տղա Սերգեյից կա երեք աղջիկ, որոնցից Էլմիրան բնակվում է Կիրովականում, Ասյան ամուսնացած է և բնակվում է Երևանում, Սերգարան իր մայրիկ Չարուհու հետ բնակվում է Թբիլիսիում:

Հայրս՝ Ալեքսանը, բաժանվելով իր եղբայրներ Ասատուրից և Հարությունից, որոնց բախտի մասին խոսեցիմք վերևում, առանձին կազմել է իր ընտանիքը: Իմ ծնողներ Ալեքսանը և Սանդուխտը ունեցել են ութ տղա և երկու աղջիկ: Բաժանվելով եղբայրներից՝ հայրս ընտանիքով ապրել է գյուղում՝ մի մարագի մեջ: Չունենալով ապրուստի միջոց՝ օրվա հաց հայթայթելու համար նա հարկադրված, բազմանդամ ընտանիքը թողնելով գյուղում, գնացել է արտագնա աշխատանքի: Աշխատելով Լենինականից դեպի Ղարս տանող խճուղու վրա՝ այդ աշխատանքով նա չի կարողացել ապահովել իր ընտանիքի միմիմալ³⁰ ապրուստը, ստիպված գյուղում ունեցած իր միակ սեփականությունը՝ մարագը, վաճառել է և ընտանիքով տեղափոխվել Ղարսի գավառի Մամաշ³¹ գյուղը: Անհրաժեշտ են համարում նշել այն, որ մինչև Մամաշ գյուղում ընտանիքով հաստատվելը տնտեսական վատ պայմանների և հիվանդությունների հետևանքով ութ եղբայրներիցս չորսը տարբեր ժամանակներում մահանում են: Այսպիսով՝ մեր ընտա-

նիքում մնում են չորս տղա և երկու աղջիկ, այդ թվում և տողերիս գրողը:

Ընտանիքում մնացած եղբայրներին և քույրերին անուններն են՝ Լևոն՝ ավագ եղբայրս, նրանից փոքրը՝ Սմբատը, Աղասին, այսինքն՝ ես, և Գարեգինը: Քույրերս են Արուսյակը և Հռիփսիմեն: Պետք է լավ գրող լինես, որպեսզի կարողանաս հանգամանորեն նկարագրել այն ողջ անցուդարձը և հետաքրքիր իրադարձությունները, որ տեղի են ունեցել մեր ընտանիքի, նրա յուրաքանչյուր անդամի հետ: Ես կփորձեմ ներկայացնել մեր ընտանիքի պատմությունը, նրա հետ կատարված կարևոր իրադարձությունները, որոնք կարող են հետաքրքիր լինել մեր հետագա սերունդների համար:

Միրելի՛ ընթերցող, քանի որ մեր ընտանիքի, ինչպես նաև շատ շատ ընտանիքների բախտը կապված է եղել տվյալ ժամանակաշրջանում երկրում տեղի ունեցող իրադարձությունների հետ, ուստի անհրաժեշտ եմ համարում մի փոքր շեղվել մեր բուն պատմությունից: Ինչպես հայտնի է, 1917թ. հոկտեմբերի 25-ին, նոր տոմարով՝ նոյեմբերի 7-ին, Ռուսաստանում կատարվեց Հոկտեմբերյան³² սոցիալիստական մեծ հեղափոխությունը, տապալվեցին ռուսական ցարիզմը և Կերենսկոյ³³ հակահեղափոխական ժամանակավոր կառավարությունը³⁴: Ռուսաստանում ստեղծվեց սոցիալիստական բանվորագյուղացիական կառավարություն: Ժողովրդի կամքին հակառակ՝ Անդրկովկասի հակահեղափոխական կուսակցությունները արևմտյան իմպերիալիստների թելադրանքով շրնդունեցին Ռուսաստանի հեղափոխական կառավարության առաջարկը Ռուսաստանին միանալու մասին, որով Անդրկովկասը բաժանվեց երեք հակաժողովրդական կառավարությունների³⁵՝ Վրաստանում՝ մենշևիկների³⁶, Ադրբեջանում՝ մուսավաթականների³⁷, Հայաստանում՝ դաշնակցականների³⁸ միջև: Փորձը ցույց տվեց, որ նշված կառավարությունների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության բնույթը հակաժողովրդական էր: Այս հարցի վերաբերյալ կարելի է շատ բան գրել, բայց իմ նպատակը դա չէ, մանավանդ որ տվյալ հար-

ցի նկատմամբ կա բավականին հարուստ գրականություն: Բայց քանի որ այս հարցի հետ է առնչված մեր ընտանիքի և շատ ընտանիքների բախտը, ուստի մի փոքր շոշափում ենք այն:

Հեղափոխությունից հետո, երբ ռուսական զորքերը ետ քաշվեցին արևելյան ճակատից, Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունները և նրանց կառավարող կուսակցությունները ընդունակ չեղան օսմանյան, մույնիսկ կարելի է ասել, ջախջախված բանակին դիմագրավելու³⁹: Թուրքական բանակը, առանց մեծ դիմադրության գրավելով Արևմտյան Հայաստանը, շարժվեց առաջ և գրավեց Արևելյան Հայաստանի զգալի մասն ու հասավ մինչև Բաքու⁴⁰: Դեռ 1918թ.⁴¹ հայ ժողովուրդը, նաև մեր ընտանիքը մեծ զրկանքներ կրեցին: Թողնելով տուն-տեղը, ունեցվածքը Ղարսում՝ գաղթեցինք նորից Ջաջուռ գյուղը: Գաղթի ճանապարհին մեր ընտանիքը միառժամանակ բնակվեց Ղարսի գավառի Մեծ Փարկիթ⁴² և Փալոքվան⁴³ գյուղերում: Ես ու ինձնից փոքր եղբայրս՝ Գարեգինը, սովորում էինք Մեծ Փարկիթի դպրոցում: Այստեղ ևս մեզ բախտ չվիճակվեց սովորելու, քանի որ օսմանյան բանակը շարժվում էր առաջ, հետևապես այստեղից էլ գաղթեցինք և բնակություն հաստատեցինք Ջաջուռում:

Ի՞նչ էինք տեսնում գաղթի ճանապարհին. Սարիղամիշի⁴⁴ և Ղարսի⁴⁵ կողմից անընդհատ գալիս էին ռուսական զորքերը և Անդրկովկասի վրայով անցնում դեպի Ռուսաստան, մյուս կողմից հայ գաղթականները, լացող երեխաներն ու կանայք, փալասների մեջ փաթաթված, թողած իրենց տունն ու տեղը, շարժվում էին Ղարսից դեպի Ալեքսանդրապոլ (այժմ՝ Լենինական) տանող խճուղով՝ չիմանալով, թե ուր են գնում և որտեղ պետք է ապաստան գտնեն:

Խոսելով Փարկիթ գյուղի մասին՝ դժվար է անտարբերությամբ անցնել և չխոսել Փոքր Փարկիթում⁴⁶ տեղի ունեցած իրադարձությունների մասին: Փոքր Փարկիթ գյուղը գտնվում էր Մեծ Փարկիթ գյուղի մոտ՝ Ղարս գետի⁴⁷ ափին: **Գյուղի բնակչության կեսը հայեր էին, կեսը՝ քուրքեր: Տասնյակ տարիներ հայերն ու քուրքերը գյուղում ապրում էին որպես համերաշխ հարևաններ:**

Դաշնակցականները մի գիշերվա ընթացքում հավաքեցին Փոքր Փարկիթի բուրք բնակիչներին՝ կանանց ու երեխաներին, լցրին գյուղի մարագների մեջ ու այրեցին: Առաջուրյան Մեծ ու Փոքր Փարկիթների բնակիչները, փեսանելով ժողովրդի թշնամի դաշնակցականների չեռքով կայարաված այս սոսկալի ոճիրը, լուրսանք թափեցին նրանց հասցեին: Օսմանյան զորքերը, առաջ շարժվելով, գրավեցին Դարսը, Ալեքսանդրապոլը, մոտեցան Ջաջուռին: Մեր ընտանիքը դարձյալ ստիպված եղավ թողնել գյուղը և գաղթել Սպիտակի շրջանի Աղբուլաղ գյուղը, որտեղ մի կերպ ապրեցինք իմ հորաքույր Սևգյուլի տանը:

Աղբուլաղը լի էր գաղթականներով: Օսմանյան զորքերը, հետապնդելով դաշնակցական զորքերին, մտան Աղբուլաղ, որտեղ գտնվում էր մեր ընտանիքը: Հայրս, տեսնելով, որ բազմանդամ ընտանիքով հնարավոր չէ ապրել հորաքրոջս տանը, մեր համագյուղացի ընտանիքների հետ նպատակահարմար համարեց նորից վերադառնալ Ջաջուռ, որտեղ կար քիչ թե շատ հարմարավետ բնակարան: Եվ այդպես մեր ընտանիքը Աղբուլաղից վերադարձավ Ջաջուռ: **Վերադարձի ճանապարհին, որն անցնում էր Ջաջուռի լեռնանցքով դեպի Ալեքսանդրապոլ փանող խճուղով, բուրքական հրամանադատությունը գաղթողների շարքերից առանձնացնում է բոլոր երիտասարդ հայ տղամարդկանց և փանում Ալեքսանդրապոլ՝ որպես զերի: Եղած փվյալներով և գերությունից վերադարձած կոմունիստ, ներկայումս Երևան քաղաքի բնակիչ Բարսեղ Ավերիսյանի պատմելով 12000 զերիներից 1920թ. Հայաստան է վերադարձել ընդամենը 300 մարդ, այդ թվում ինքը՝ Ավերիսյանը՝ այն էլ հիվանդ ու կիսակենդան վիճակում: Մյուսները Սարիղամիշի և Էրզրումի ճանապարհին քաղցի և խոշորանզումների հեղեղներով ուժասպառ են եղել ու մահացել: Ըստ վկաների՝ զերիներից շատերը կիսամեռ⁴⁸ վիճակում էին, ավելի բարվոք վիճակում գտնվողները իրենց չեռքով ճանապարհներին փոսեր էին փորում ու թաղում մեռածներին ու մեռնողներին:** Մեր ընտանիքը մնաց Ջաջուռում մինչև 1919թ.⁴⁹ օսմանյան զորքերի՝ Արևելյան Հայաստանից քաշվելը,

որից հետո նորից վերադարձանք Ղարսի շրջանի Մամաշ գյուղը: Այս շրջանում դաշնակցական կառավարողների ոչ ճիշտ քաղաքականության հետևանքով վատթարացավ դաշնակցական կառավարության ներքին ու արտաքին դրությունը, սրվեցին անդրկովկասյան ժողովուրդների փոխհարաբերությունները, աշխատավոր ժողովուրդը մատնվեց սովի: Սովն ու համաճարակը ամենուրեք հարյուրավոր մարդկանց կյանք էին խլում: Լավ չէր դաշնակցական կառավարության հարաբերությունը անդրկովկասյան մյուս հակաժողովրդական՝ մենշևիկյան ու մուսավաթիստական կառավարությունների հետ: Երկրի ներսում պայքար էր գնում դաշնակցական և բոլշևիկյան կուսակցությունների միջև: Այս բարդ իրադրության մեջ դաշնակցական կառավարությունը ցանկանում էր պահպանել իր տիրապետությունը՝ պահանջելով «ծովից ծով» Հայաստան: Դաշնակցականների ոչ ճիշտ քաղաքականության պատճառով հայ ժողովուրդը, այդ թվում՝ մեր ընտանիքը, մեծ գոհեր տվեց: Այս դրությունից դուրս գալու և ընտանիքի գոյությունը պահպանելու նպատակով հայրս մեր ընտանիքը դարձյալ փոխադրեց Ղարս, որտեղ երկու եղբայրներս աշխատում էին որպես երկաթգծի բանվոր, իսկ ես ու ինձնից փոքր եղբայրս՝ Գարեգինը, սովորում էինք Ղարսի երկաթգծի միջնակարգ դպրոցում: Այսպես մեր կյանքի պայմանները դեռ չկարգավորված՝ նորից սկսվեց գաղթը: Ղարսում մենք վարձով բնակվում էինք «Զյոռի մայլա» կոչված թաղամասում՝ մի փոքրիկ գոմի օդայում, որը մեր ընտանիքի համար շատ փոքր էր: Քաղաքական այս բարդ իրադրության պայմաններում Ղարսում բնակվող հույները իրավունք էին ձեռք բերել գաղթելու Հունաստան: Նրանք վաճառքի էին հանել իրենց անշարժ ունեցվածքը: Հայրս եղբայրներիս աշխատավարձով և իր տնտեսած գումարով որոշել էր Ղարսի երկաթգծի կայարանի մոտերքում գնել երկհարկանի, չորսսենյականոց, նկուղային հարկով բնակարան: Մեր ընտանիքը ուրախ էր, որ առաջին անգամ ունեցավ բնակարանային այսպիսի պայմաններ: Չնայած ստեղծված դժվարություններին, ո-

րոնք արդեն անցել էին, ունեինք հարմարավետ բնակարան, տուն-տեղ: Եղբայրներս՝ Լևոնը և Սմբատը, աշխատում էին երկաթգծում, և մենք ապրում էինք համեստ, հաշտ ու խաղաղ:

Սակայն մեր այս փոքր ուրախությունը երկար չտևեց: Ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ մեր ընտանիքի գլխին նորից կանգնեց վերահաս աղետը: Օսմանյան Թուրքիայի հայահալած քաղաքականության պատճառով 1915-16 թթ. թուրք բարբարոսները սրի քաշեցին հայ ժողովրդին: Մարդկության պատմության մեջ չտեսնված այս ցեղասպանությանը զոհ գնացին ավելի քան մեկուկես միլիոն հայեր: Ավերակ դարձավ Արևմտյան Հայաստանը: Այստեղ գոհվեցին Ջոհրայան ու Սիամանթոն, սարսափից խելագարվեց Կոմիտասը: Իր մասշտաբով 1915թ-ից հետ չմնաց 1920թ. կոտորածը. օսմանյան ջարդարարները արյունաքամ արեցին հայ ժողովրդին: Ինձանից մեծ եղբայրս՝ Սմբատը, քսանյոթ տարեկան հասակում հիվանդացավ և մահացավ, որովհետև բժշկական օգնություն չկար, իսկ մեծ քույրս՝ Արուսյակը, ամուսնացած էր և գտնվում էր Ջաջուռում: Այսպիսով՝ 1920թ. մեր ընտանիքում մնացել էինք երեք եղբայր, մեկ քույր, հայրս ու մայրս և երկու եղբայրներիս կանայք՝ Արաքսյան ու Աստղիկը⁵⁰:

Օսմանյան բանակը Սարիղամիշի կողմից մոտենում էր Ղարսին: Թուրքերն արդեն գրավել էին Մազրա⁵¹ կայարանը և քանդել երկաթգիծը, ինչի պատճառով ժողովրդի ունեցվածքով, այդ թվում և մեր ունեցվածքով բարձած վագոններով գնացքները կանգնած էին Ղարս կայարանում. քաղաքը փաստորեն շրջափակված էր: Այլևս ոչ մի դիմադրություն չկար օսմանյան առաջ շարժվող բանակի դեմ: Ասկյարները, մտնելով քաղաք, առանց բացառության հանդիպած հային սպանում կամ անարգում էին: Քաղաքը լցված էր գաղթականներով, որոնք գալ տեսած ոչխարի հոտի պես իրենց այս ու այն կողմ էին նետում: Անասունները զոմերում բառաչում էին, գնդակների սուլոցների ձայնը զուգակցվում էր մայրերի ու երեխաների լացին ու աղմուկին: Արդեն խոր աշուն էր: Յուրտն ու խոնավությունը թափանցում էին մարմիններից ներս ու

մտնում ոսկորների մեջ, ժողովուրդը, տուն ու տեղ թողած, անձր փրկելու համար փախչում էր դեպի «Չուխուր մայլա»⁵² և այնտեղից՝ դեպի Արգինեի ձորը⁵³: Սակայն այստեղ նույնպես ճանապարհը փակված էր: Օսմանյան զորքերի և խուժան թուրքերի գնդակները հնձում էին փախստականներին: Գնդակների ցանցից դուրս արձնելու համար ժողովուրդը խնդրում էր ամերիկացիներին, որ թույլ տան՝ մարդիկ մտնեն որբանոցի շենքը: Սակայն նրանք, մտրակը ձեռքերին, ծեծում էին ներս մտնել ցանկացողներին, շատերի գլուխները կտտրում ու արգելում էին մտնել որբանոցի շենք: Բայց ժողովրդի ալիքը այնքան մեծացավ, որ նրանք այլևս չկարողացան դիմադրել, և բոլորը լցվեցին շենք, այդ թվում և մեր ընտանիքը:

Թուրքերի՝ Ղարաղաղի ամբոցի⁵⁴ կողմից եկող գնդակները սպանում ու վիրավորում էին ճանապարհներին ու փողոցներում գտնվող գաղթականներին: Գնդակները նույնիսկ թափանցում էին որբանոցի լուսամուտներից ներս, սպանում և վերքեր հասցնում ինչպես որբերին, այնպես էլ այստեղ ապաստանած մյուս հայերին: Որբերը, կանայք ու երեխաները բոլորը լաց էին լինում: Այստեղ է ասված. «Մերը մոռացության է տվել գմանուկն»: Ներխուժելով քաղաք՝ ասկյարները մտան որբանոցի շենքը, սկսեցին սվինահարել ու գնդակահարել ժողովրդին, հենց այստեղ էլ՝ մեր աչքերի առաջ, սվինով ու հրացանի կրակոցով հիսունյոթ տարեկան հասակում սպանվեցին հայրիկս՝ Ալեքսանը, և երեսուն տարեկան հասակում՝ ավագ եղբայրս՝ Լևոնը, որոնք անմեղ ու անգեղ կանգնած էին որբանոցի շենքում: Կարոտած սրտիս համար մահացու վիշտ է իմ ամենասիրելի եղբայր Լևոնի մասին խոսելիս տողերիս վերջակետ դնելը: Նրա տանջալի մահը սպանող դաշույնի հարվածի նման անջնջելի կերպով քանդակված է հոգուս մեջ, իսկ նրանց աճյունները կես դարուց ի վեր հանգչում են անգերեզման:

Միրելի՛ հարազատներս և ընթերցողներ՛, կարո՞ղ եք պատկերացնել, թե այդ պահին ինչպիսի ողբալի վիճակում էր գտնվում խեղճ մայրիկս, որ իր աչքի առջև մեռած էր տեսել ամուսնուն ու

ավագ որդուն և գիտակցում էր, որ նրանց հավիտյան է կորցրել: **Այդպիսի վիճակին կարող էր դիմանալ միայն հայ կինը, ինչպիսին իմ մայր Սանդուխտն էր:**

Արգիլների ձորում մութը վրա էր հասել ու ծանրացել երկրի վրա, որբանոցի շենքից լավում էին մոլեգին ճիչեր՝ սպանեցի՜ն, տարա՜ն...

Շատ ծանր էր լուսացնել այդպիսի արյունալի ու մղձավանջալին գիշերը: Երկար ու ցավալի տանջանքներից հետո բացվեց արյունոտ առավոտը, երբ դեռ լավում էին հրացանի կրակոցները, վիրավորների ծանր հառաչանքները ու տանջալի տնքոցները: Շատերը օրերով չէին քնել, շատերն էլ կորցրել էին իրենց հարազատներին ու երեխաներին: Այս պահին որտե՞ղ էին դաշնակցական բախտախնդիրները՝ ժողովրդի երդվյալ թշնամիները՝ այդ «կառավարողները», որոնք ժողովրդի ծոցից դուրս չէին եկել, ազնիվ աշխատանքով չէին հասել կառավարման աստիճանի. հենց այդ էր պատճառը որ ո՛չ լսողություն ունեին և ո՛չ էլ տեսողություն: Այդպիսիք էին դաշնակցական կառավարության գլուխ կանգնած Խաթիսովներն⁵⁵ ու Վրացյանները⁵⁶ և այլք, ովքեր Ղարսում կախադան պատրաստեցին թվառ հայ ժողովրդի համար:

Միրելի՜ ընթերցող, այժմ անցնենք բուն նյութին: Մեր ընտանիքից ողջ մնացածները կորցրին եղբորս կին Աստղիկին⁵⁷: Նա գեղեցիկ էր ու բարձրահասակ, ուներ սպիտակ և հավասար ատամներ, բարի ու հաստատուն բնավորություն: Նրա աչքերի կրքոտ ցուլքը մոխրացնում էր մարդկանց սրտերը և ուներ խոսելու և խոսեցնելու անսովոր կարողություն: Կորցնելով մեր ընտանիքի անդամներին՝ Աստղիկը կարողացել էր մեր բարեկամ Հարությունի հետ փախչել Լենինական, որտեղ գտել էր իր ծնողներին:

Թուրքական հրամանատարությունը Արգիլնայի ձորում և ամերիկյան որբանոցի շենքերում ողջ մնացած ընտանիքներին հավաքեց և ասկյարների հսկողության ներքո քշեց դեպի Ղարս քաղաքի կենտրոնը⁵⁸: Ժողովուրդը՝ քաղցած ու ծարավ, հոգսերի ու մտքերի մեջ խորասուզված, ճմլված սրտով, հիվանդ թռչունի պես կտուցը կախած, քայլում էր դեպի քաղաք: Դանապարհների կող-

քերին ընկած էին անթիվ դիակներ, մարդիկ նայում ու մորմոքում էին, իսկ ասկյարները խլում էին ժողովրդի ձեռքին եղած իրերը, հանում հագուստները՝ թողնելով նրանց կիսամերկ ու սոված: Նրանք, կանգնեցնելով ժողովրդին, սկսեցին առանձնացնել տղամարդկանց, որոնց ճակատագիրը հետագայում հայտնի դարձավ. ոչ մեկը կենդանի չէր մնացել: Նրանց մեջ էին նաև մեր ընտանիքից ողջ մնացած անդամները: Կանանց ու երեխաներին անցկացնելով կամուրջը՝ տարան ու ներկայեցին քաղաքում գտնվող զինվորական զորանոցներում: Ստեղծված վիճակը ինձ համար սուկալի դարձավ: Այստեղ կորցրեցի մայրիկիս, փոքր եղբորս՝ Գարեգինին, հինգ տարեկան քրոջս՝ Հռիփսիմեին: 1920թ. աշնան ցուրտ օրերին էր⁵⁹:

Հարազատներիս կորցնելով, ինչպես հալածված մի թռչուն, ծվարեցի քաղաքի մի մեծ զորանոցում: Գրեթե մերկ էի, շատ շատերի հետ քաղցած ու սառած կանգնած էինք մահվան դռանը: Վախեցած ու սարսափած ժողովուրդը չէր կարողանում դուրս գալ զորանոցից և որևէ ճար անել: Այսպիսին էր մեր վիճակը. դեռ ասկյարներն էլ մտնում էին զորասրահները, դուրս էին քաշում և անարգում հարսներին ու աղջիկներին, խուզարկում ու կողոպտում էին ժողովրդին, վրաներից հանում հագուստը՝ թողնելով մերկ ու տկլոր: Ժողովրդի լացն ու աղաղակները հունից հանում էին անգամ ամենահանգիստ մարդուն ու ստեղծում լարված նյարդային վիճակ: Ո՛չ ցերեկները, ո՛չ էլ գիշերները մարդիկ աչք չէին փակում: Այստեղ մի պահ մտածում ես, թե ինչպես կարող է «մարդը» մարդուն հասցնել այսպիսի անմարդկային վիճակի: Սիրելի՛ ընթերցող, այսպիսի պահերին մարդկանց գնդակահարումը ավելի գերադասելի էր, քան թե նման ոչ մարդկային վիճակում ողջ մնալը:

Չեմ կարող մոռանալ մի դեպք: Գիշերվա կեսն էր, հայ երեք տղամարդ, որոնք կանացի հագուստով էին, հանում էին դրանք ու հագնում տղամարդու շորեր: Այս մարդիկ ողջ էին մնացել միայն շնորհիվ կանացի հագուստների: Նրանք խոսում էին իմ մասին և ասում. «Այս փղային էլ վերցնե՞նք մեզ հետ, թե՞ ոչ»: Մեկն ա-

սաց. «*Ինչպե՞ս կարելի է վերցնել այդ երեխային այդպիսի տկլոր ու հյուծված վիճակում, անգամ եթե թուրքերի ձեռքից էլ փրկենք, սպա ճանապարհին կսառչի, և մենք մեղք գործած կլինենք*»: Բավական ժամանակ նրանք այդպես ցածրաձայն խորհրդակցում էին և վերջապես վճռեցին ու գիշերվա ժամը մեկին երեքով գորանոցից դուրս եկան ու բռնեցին փախուստի ուղին: Սրահից դուրս գալիս ինձ ասացին. «*Փոքրի՛կ ջան, Թաքնալու՞՞՞ գյուղից ենք, եթե կենդանի մնացինք, կհանդիպենք, ուրեմն մնաս քառով*»:

Նրանց գնալուց հետո իմ դրությունն ավելի վատացավ, որովհետև նրանք որոշ չափով ինձ խնամում և սիրտ էին տալիս: Մինչև օրս էլ ինձ չի հաջողվել իմանալ, թե ինչ եղան նրանք, գտա՞ն իրենց հարազատներին, թե՞ ոչ: Այստեղ ես մեղադրում եմ ինձ, որ չեմ կարողացել իմանալ: Ես մնացել էի քաղցած ու մոլորված: Մնում էր դիմել ռիսկի. ինձ հասակակից երկու տղաների հետ դուրս եկանք շենքից՝ ուղղություն վերցնելով դեպի հացի փռերը, որոնց տեղը որպես քաղաքի բնակիչներ լավ էինք իմանում:

Քաղաքը տխուր ու մռայլ էր. բացի հատուկեմտ ասկյարներից, առանձին խմբերով կողոպուտի դուրս եկած տեղական թուրքերից՝ փողոցներում ոչ ոք չկար: Վտանգից զերծ մնալու համար նեղլիկ ու ծուռուժուռ փողոցներով հասանք հացի՝ քաղաքի կենտրոնում գտնվող լքված փռերը, որոնցից մեկը կոչվում էր Դալլաքենց փուռ: Դալլաքենց փռատերերը մեր համազյուղացիներն էին: Այստեղից վերցրինք չորացած հացի կտորներ, հատակից հավաքեցինք ու շորի մեջ լցրեցինք բավականին քանակությամբ ալյուր և խուլ փողոցներով վերադարձանք գորասրահ: Բերած հացը և ալյուրը բաժանեցինք սրահի մի անկյունում ծվարած մարդկանց: Չոր հացերը ջրի մեջ փափկեցնելով և ալյուրը ջրում խաշելով՝ վրա պրծանք, կերանք և դրանով մի քանի օր մեր գոյությունը պաշտպանեցինք: Մակայն փռերից բերված այդ չնչին քանակությամբ հացն ու ալյուրը շուտով վերջացավ: Քաղցն ու հարազատների կորուստը հարկադրեցին ինձ դիմելու երկրորդ

ռիսկին: Հոկտեմբերյան պայծառ օր էր, սակայն արևն իր ուժը կորցրել էր: Դողդողալով դուրս եկա զորանցից ու բռնեցի Դարսի՝ մեր սեփական տան ճանապարհը, որը գտնվում էր երկաթգծի կայարանի մոտերքում: Հասնելով այնտեղ՝ նայեցի դռան արանքից. բակում ոչ ոք չէրևաց, ներս մտա: Տեսնելով մեր տունն ու բակը՝ սիրտս ու հոգիս ալեկոծվեցին, որովհետև տունն այլևս մեզ չէր պատկանում, վռնդվել էինք այնտեղից, որտեղ համերաշխ ապրել էինք ընտանիքով: Այս տան հետ էին կապված իմ մանկական ամենաքաղցր հիշողությունները, այդ հարվածը տակնուվրա էր արել իմ ամբողջ հոգեկան աշխարհը: Այսպես կանգնած էի մտատանջությունների մեջ, երբ բակում կապված մեր շունը, ինձ ճանաչելով, հանկարծ փաթաթվեց ոտքերիս, կարծես ինձ ներս էր հրավիրում: Նույն պահին տան դուռը բացվեց, ու պատշգամբ դուրս եկավ բարձրահասակ, սև դեմքով թուրքական մի պաշտոնյա: Այստեղ ես ինձ չկորցրի ու ոտքով հարվածեցի շանը, որպեսզի պատշգամբում կանգնած պաշտոնյան չնկատի, որ շունը իմ ոտքերին է փաթաթվել, այլապես իսկույն կհասկանար, որ դա մեր տունն էր: Շունը վնգստալով փախավ, թուրք պաշտոնյան իջավ պատշգամբից, մոտեցավ ինձ, բռնեց թևիցս ու ասաց. «**Օլան գյավուր (գրդա անհավայր) բու սինգ ավիրը**»: Ես թուրքերեն պատասխանեցի. «*Ո՛չ, մեր փունը չէ: Սոված եմ, եկել եմ մի կրոր հաց խնդրելու*»: Թուրք պաշտոնյան, մեր տան կացինը և փայտի կոճը զցելով գետնին, կացինը տվեց ձեռքս, փակեց բակի դուռը և թուրքերեն ասաց. «**Բու օդունի կրո**», այսինքն՝ «*Այս փայտը կորրի՛ր, ես քեզ համար հաց կբերեմ*»: Պաշտոնյան հասկացել էր, որ ես տանտիրոջ տղան եմ, որովհետև նա նկատել էր, որ շունը փաթաթվեց իմ ոտքերին:

Տեսնելով մեր տունը, մեր բակը ու մեր շանը՝ երկինքը գլխիս մթնեց, արցունքները վճիտ առվակի նման սկսեցին հոսել աչքերիցս, բայց ի՞նչ կարող էի անել: Ես շատ հյուծված ու ուժասպառ էի, ուստի չէի կարողանում ջարդել փայտը, միաժամանակ մտածում էի, թե թուրք պաշտոնյան ինչու ուշացավ ու հաց չբերեց: Այստեղ մտքովս անցավ մայրիկիս՝ Դարսա թոնրի մեջ թխած

գաթան. կորած մորս հիշելիս աչքերիս մեջ կրակ էր վառվում, քիչ էր մնում գաղտագողի մտնեմ հացատուն և գեթ մի գիշեր այնտեղ մնամ ու կարոտս առնեմ: Այդպիսի մտատանջությունների մեջ էի, երբ սենյակի դուռը նորից բացվեց, և պատշգամբ դուրս եկավ մի գեղեցիկ թրքուհի: Վերջինս առանց ժամանակ կորցնելու թուրքերենով ասաց. «*Օլա՛ն, բիզմ կալմակալի էշտ միշն օադում իարեր սանն բոյն քասմադ*»: Այսինքն «*Տղա՛, մեր աղմուկը չե՞ս լսում, քեզ ցախ կուրրել Կոլոդ մարդը դանակը վերցրել է, որ քեզ մորթի*»: Ապա ավելացրեց, որ ինքը ամեն կերպ կպահի նրան, որ ես, որքան հնարավոր է, շուտ փախչեմ, ազատվեմ: Նա սենյակ մտավ և դուռը ծածկեց: Ես, հավաքելով վերջին ուժերս, կացինը ցած գցեցի ու վազեցի դեպի բակի դուռը, որը փակված էր կողպեքով: Չկորցնելով ինքնատիրապետումս, ճանկռելով բակի դուռը և պատը՝ գործի դրեցի վերջին ուժերս և բարձրացա պարսպի վրա ու այդտեղից ցատկեցի փողոց: Պատից թռչելիս գլխարկս ընկավ բակի կողմը: Վազքով մի քիչ հեռացա, սպա ետ նայեցի ու տեսա, որ թուրք պաշտոնյան, պատշգամբում կանգնած, ձեռքը մեկնել էր իմ կողմը և հայհոյում էր, իսկ կինը նրան քաշում էր ներս:

Ազատվելով թուրք պաշտոնյայի ճանկից՝ ճանապարհին հանդիպեցի մի խումբ տեղական թուրք բնակիչների, որոնց ձեռքին կային ժանգոտած սուր, խանչալ, փայտ: Խումբը գալիս էր Ղարաղաղի Բայրամ-փաշա թաղամասից և կողոպուտ կատարելու նպատակով գնում էր դեպի երկաթգծի կայարանը: Նրանք ինձ տեսան, խմբից մեկը բղավեց. «*Օլան գյավուր օղլի այյան*», այսինքն՝ «*Անհավարի՛ Կոլոդ, կանգնի՛ր*»: Հետո արագացրին իրենց քայլերը դեպի իմ կողմը: Տեսնելով, որ նրանք հասնում են ինձ, ես բարկացած ձայնով ասացի. «*Դուք եք գյավուր (անօրեն), ես հայ չեմ*»: Խումբը, հավատարով ինձ, դանդաղեցրեց քայլերը, իսկ ես, ընդհակառակը, արագացրի ու հեռացա, սակայն խմբից մեկը գլխի ընկավ և բարկանալով մյուսների վրա՝ թուրքերեն ասաց. «*Եթե հայ չէ, ապա ինչու՞ է գլուխը բաց*»: Մինչև նրանք կվազեին իմ ետևից, ես վազելով ինձ գցեցի շենքերի մեջ և իս-

կույն մտա կազարմա, որտեղ տեղավորված էին հայերը, ու պատմեցի գլխիս եկածը:

Մի փոքր պարզաբանում մայրիկիս ու մյուս հարազատներիս մասին:

Մայրիկիս, որ կորցրել էր ինձ, եղբորս՝ Գարեգինին, ու քրոջս՝ Հռիփսիմենին, գաղթականների մի ուրիշ խմբի հետ թուրքերը տանում ու լցնում են Բայրամ-փաշա թաղամասի տներից մեկը՝ նույնպես ենթարկելով թալանի և մատնելով սովահարության: Այստեղ քաղցը ստիպում է մայրիկիս արհամարհել վտանգը և երեխաներին քաղցից փրկելու, մի կողմից ուտելիք գտնելու հույսով, իսկ մյուս կողմից էլ ինձ փնտրելու համար դուրս գալ քաղաք: Քաղաքում նա պատահաբար հանդիպում է հորս հին ծանոթ թուրքերից մեկին, որի անունը չեմ հիշում: Մայրս նրան պատմում է, թե ինչպիսի դժբախտություններ են եկել մեր ընտանիքի գլխին: Ծանոթ թուրքը մեր տանը կերած աղ ու հացը չի մոռանում, մայրիկիս երեխաների հետ տանում տեղավորում է մի հացատան մեջ: Այստեղ մեր ընտանիքին հասած դժբախտությունների մասին տեղեկանում են հայրիկիս՝ Ղարսա բնակիչ ծանոթ թուրքերը, որոնց հայրիկս ժամանակին շատ լավություններ էր արել: Այս ծանոթները մեր ընտանիքի մնացած անդամներին նյութական օգնություն են կազմակերպում. բերում են հաց, ալյուր, յուղ, փոխինձ, ձավար, վառելիք փայտ և այլն: Միաժամանակ մայրս սկսում է ամեն տեղ փնտրել ինձ:

Գնալով ավելի ու ավելի անտանելի էր դառնում կազարմայում բնակվողների, ինչպես նաև իմ դրությունը, ցուրտն ու քաղցը մաշում և ուժասպառ էին անում բոլորիս, մենք կանգնած էինք մահվան դռանը:

Այսպես էր և այլ գորանոցներում: Չանգվածային մահացությունները ստիպեցին թուրք կառավարիչներին, ինչպես երևում է նաև Սովետական պետության պահանջով, կազմել ցուցակներ, որոնցում գրում էին մարդկանց անուն-ազգանուններ և ներկայացնում հաց բաց թողնելու համար: Քանի որ որոշ չափով գրելկարդալ իմանում էի, ճարեցի թուղթ ու մատիտ և կազմեցի սրա-

հում գտնվողների ցուցակը, որոնց թիվը հասավ քառասունյոթ մարդու: Վերցնելով այս ցուցակը՝ երկու տղաների հետ գնացինք Ղարսի գուբերնատորի⁶¹ փողոցի՝ սև քարով շարված երկհարկանի շենքը, որտեղ տարբեր տեղերից եկած մարդկանց ներկայացուցիչները, ցուցակները ձեռքներից, կանգնած էին հերթի: Թուրք պաշտոնյան ցուցակներն ընդունում էր դռան վրա բացված նեղ լիկ լուսամուտից ու ստուգում այն, ապա մակագրում, թե քանի թային⁶² բաց թողնել:

Հերթը հասավ ինձ, ցուցակը մակագրելու համար տվեցի թուրք պաշտոնյային: Այդ պահին, դեռ ցուցակը չստորագրած, մի թուրք բռնեց ձեռքիցս, քաշեց. «*Օլան, Աղասի, գյալ բուրյա (Տղա՛, Աղասի՛, արի՛ ալարեղ)*»: Մի պահ շփոթվեցի, մտքովս անցավ՝ երևի հասակս բարձր է, բռնում են՝ գերի տանեն կամ սպանեն: Ես նայեցի նրան՝ թևիցս քաշողին. հորս ծանոթն էր՝ Բայրամ փաշա թաղամասում⁶³ բնակվող Իսմայիլ անունով թուրքը: Այստեղ մի քիչ սրտապնդվեցի և այդ պահին ստացա հաց ստանալու ցուցակը, որը մակագրված էր՝ «*Բաց թողնել քառասունյոթ հարյուր թային*»:

Իսմայիլն ինձ պատմեց, որ մայրս ու երեխաները գտնվում են իրենց՝ Բայրամ փաշա թաղամասի տան մոտ գտնվող մի առանձին տան մեջ, որ ամեն օր խեղճ մայրս, առավոտից մինչև երեկո լաց լինելով և մորմոքելով, քաղցած ու ծարավ, փողոցներում ինձ է փնտրում:

-Թող այդ բոլորը և իսկույն հետևի՛ր ինձ, քեզ մայրիկիդ մոտ եմ տանելու,-ասաց նա:

Ես հաց ստանալու ցուցակը տվեցի ինձ հետ եկած տղային, որքան հիշում եմ անունը Վարդան էր, և խնդրեցի, որ հացը ստանա և տա ժողովրդին, իսկ ես հետևեցի ծանոթ թուրքին:

Դուրս գալով շենքից՝ ես սառած ու քաղցած մի կերպ բարձրացա Բայրամ փաշա թաղամասի ծուռումուռ փողոցներով: Իսմայիլը ինձ տարավ այն տունը, որտեղ գտնվում էին մայրիկս ու երեխաները: Երբ ներս մտա, տեսա, որ քույրս ու եղբայրս տխուր դեմքով, խիստ խեղճացած հայացքները զգել էին դռանը, կարծես

ինձ էին սպասում: Համբուրելով նրանց՝ առաջին հարցս եղավ, թե որտեղ է նանեն (մենք՝ բոլոր երեխաներս, մայրիկիս նանե էինք անվանում): Գարեգինը ասաց, որ նանեն ամեն օր առավոտից մինչև երեկո գնում է ինձ փնտրելու: Անցավ մի երկու ժամ, նանեն եկավ ու անսպասելիորեն ինձ տեսնելով՝ ուրախության արցունքներ թափեց, գրկեց ու սկսեց համբուրել ինձ ու իսկույն հարցրեց. «*Բալա՛ ջան, սոված չե՞ս*»: Հիշում եմ՝ նանես նախօրոք փոխնձից խաշիլ էր պատրաստել, իսկույն լցրեց ամանը և դրեց իմ առջև: Ես շշմած էի, չէի իմանում՝ խաշիլ՞ն ուտեմ, թե՞ հարազատներիս նայեմ: Աչքերիս չէի հավատում, թվում էր՝ երազ է:

Մի քանի օր հարազատներիս հետ Բայրամ փաշա թաղամասում մնալուց հետո տեղափոխվեցինք քաղաք՝ երկաթգծի կայարանի մոտերքում գտնվող մի տուն⁶⁴, որտեղ բնակվում էին մեր բախտին արժանացած ևս երկու հայ ընտանիքներ: Այսպիսով՝ այստեղ բնակվեցինք երեք ընտանիքներով: Տեղափոխության պատճառը այն էր, որ վտանգավոր էր Բայրամ փաշա թաղամասում, որտեղ զուտ թուրքեր էին բնակվում. այնտեղ ամեն բոպե մեր կյանքը վտանգի տակ էր, քանի որ կարող էինք սպանվել քաղաք նոր ոտք դրած ասկյարների և թուրք խուժանի կողմից: Այս նոր տունը մի մեծ սենյակ էր և ուներ հաշտ⁶⁵, որտեղ տեղավորում էինք վառելիքը և մեր ընտանիքների խմելու ջուրը: Այս օրերին դրությունը մի քիչ փոխված էր, արդեն հայերը ցերեկով կարողանում էին տնից դուրս ելնել, քաղաք կամ շուկա գնալ:

Ամբողջ կյանքումս չեմ կարող մոռանալ մեզ հետ բնակվող վաթսուհինգամյա խելոք ու մարդասեր, Հաջի անունով մի հայի: Նա ուներ կին և երկու աղջիկ, որոնցից մեկը կաղ էր: Սկզբում մայրս էր նրանց օգնում սննդամթերքով: Հետագայում Հաջին շուկայից գնում էր տավարի ոտ ու գլուխ, թափան: Հաջու ընտանիքը և մայրս մաքրում էին դրանք, երեկոյան մի մեծ ամանով դնում կրակին. առավոտյան խաշը պատրաստ էր: Հաջին խաշը տանում էր շուկա՝ վաճառելու: Ամեն առավոտ՝ մինչև շուկա տանելը, մեզ մի չանաղ խաշ էին տալիս, ապա մնացածը տանում շուկա:

Խաշը բավականին վերականգնեց մեր ուժերը և կարծես թե աշխատելու ընդունակ դարձանք:

Քանի որ նանես շատ էր չարչարվում ուտելիք ձեռք բերելու համար, որոշեցի օգնել նրան: Վերցրեցի դանթարը՝ երկու դուլբերով, և գնացի ջրի: Աղբյուրի մոտ մեծ հերթ էր, որովհետև թուրքերը ջուրը հերթից դուրս էին տանում. եթե մեկ թուրք էլ լիներ, պիտի բոլոր հայերը սպասեին, որ նա ջուր լցներ, ապա նոր իրենք: Երկար սպասեցի և ուզում էի հետ վերադառնալ, երբ մի ասկյար ձեռքիցս վերցրեց դատարկ դուլբերը, առանց հերթի ջուր լցրեց, դուլբերը կախեց դանթարից, դրեց ուսիս և ինձ ստիպեց հետևել իրեն: Ի՞նչ կարող էի անել, ես հետևեցի նրան, ենթադրում էի, որ ջուրը կդատարկի և ինձ բաց կթողնի: Ճանապարհին մի երկու տեղ հանգստանալուց հետո անցանք երկաթգիծը և գնացինք մի գորանոց: Չորանոցի դռանը մի քանի ասկյարներ էին հավաքված: Ինձ տանող ասկյարը, դուլբերը վերցնելով, մի դուռ բացեց և ինձ ներս գցելով՝ իսկույն դուռը իմ հետևից փակեց: Ինձ ներկալած սենյակը մի գորանոց էր՝ լիքը հայ գերիներով: Ակամայից վերհիշեցի հայրենի գյուղը, մայրիկիս, քրոջս ու եղբորս: Աչքերիցս սկսեց արցունք հոսել: Այդ պահին շենքում գտնվող գերիները սկսեցին իրար հետ խոսել. «Այս երեխային այսպեղ թերեցին կոշիկ կարող Միսակի փոխարեն, և միաբերան ինչ ասացին, դուռը խփի՛ր ու բողբո՛ր»: Ես սկսեցի ամուր ծեծել դուռը ու բղավել: Բոլոր գերիները նույնպես դուռը խփում ու բղավում էին: Աղմուկը ուժեղ էր, ուստի դուռը բացվեց, և մի փաշա դռան արանքից հարցրեց. «Իմանազներ (անհավարներ), ի՞նչ աղմուկ էք անում»: Գերիներից մեկը առանց ժամանակ կորցնելու ասաց. «Փաշա՛, ասկյարներից մեկը մեր գերիներից մեկին դուրս բերեց և նրա փոխարեն ներս գցեց այս փոքրիկ տղային»: Փաշան իսկույն ինձ դուրս հանեց և ասկյարներից պահանջեց դուրս բերված գերուն, որը մի սև, նիհար, միջահասակ մարդ էր, ու նրան գցեց գերիների մեջ: Ես փաշային պատմեցի, թե ինձ ինչպես բերեցին այստեղ: Արդեն ուշ երեկո էր: Գարսի սառնամանիքը արյունս սառեցնում էր, աչքերիս առջև մահն էր երևում, չգիտեմ, թե ինչ էր

կատարվում ինձ հետ, միայն լավ էր, որ գիտակցությունս չէի կորցնում: Այդ ժամանակ փաշան հրամայեց զինվորներին շարք կանգնել: Նա շուռ եկավ դեպի իմ կողմը և ասաց. «**Օղևն, գալ բուրյա**»: Ես մոտեցա, նա հարցրեց. «*Ճանաչու՞մ ես քեզ այսպեղ բերող սակյարին, ասյա ցույց փուր*»: Ես, նայելով շարք կանգնած սակյարներին, ցույց տվեցի աղբյուրից ինձ բերողին՝ միաժամանակ վախենալով, որ վերադառնալիս սակյարներն ինձ կսպանեն: Փաշան, ցրելով շարք կանգնած զինվորներին, իր մոտ կանչեց զոպաջուն՝ մահակով խփողին, և կարգադրեց.

-Պառկեցրո՛ւ այս սակյարին ու վեց հատ ուժեղ զոպա խփի՛ր:

Զոպաջին կատարեց փաշայի հրամանը: Զինվորը ցավից գալարվում էր: Ես նորից մոտեցա փաշային և խնդրեցի, որ կարգադրի՝ իմ վեղորներն ու դանթարը վերադարձնեն: Դույլերն ինձ հանձնելով՝ փաշան կարգադրեց մի սակյարի. «*Այս փղային իր դույլերով կտանես ու կհանչնես իր մորը: Հանչնելուց հետո կզեկուցես, վաղը անչամբ կստուգես հրամանիս կատարումը*»: Ասկյարը այդպես էլ վարվեց: Աղբյուրի մոտից անցնելիս ջուր լցրինք դույլերը և գնացինք տուն, իսկ սակյարը վերադարձավ: Կարծես կատարյալ փորձանք դարձա առանց այն էլ տանջված մորս գլխին: Մայրս տեսնում է, որ ջուր բերելուց ուշացա, լացուկոծով քաղաքով մեկ սկսում է ինձ փնտրել և ուշ վերադառնալով՝ ինձ գտնում է տանը: Ես մայրիկիս, ինչպես նաև բոլորին պատմեցի գլխիս եկածը:

Մեր ընտանիքի նյութական դրությունը ավելի էր ծանրանում: Հացը մեզ համար երազ էր դարձել: Այս դրությունից դուրս գալու համար մնում էր գնալ բատրակություն անելու: Ես գնացի թուրք Փոլատի մոտ՝ բատրակություն անելու: Փոլատը բնակվում էր **Վազգայի** թաղամասում, ուներ երկու մեծ գոմ՝ լիքը խոշոր եղջերավոր անասուններով, որոնց խնամքը հանձնեց ինձ: Անասունների մեծ մասը հայերից վերցրածներն էին: Այստեղ առավոտյան ժամը յոթից մինչև երեկոյան ժամը ութը հազիվ էի հասցնում խնամել երկու գոմերում գտնվող անասուններին: Բավական է ասել, որ գոմից դուրս էի հանում վեց-յոթ մեծ քթոց թրիք և այդքան

էլ անասնակեր էի բերում գոմ: Քթոցի տակ ծռնովում էին ոտքերս, կծկվում էին մեջքիս ոսկորները, աչքերիս առջև մթնում էր: Մի կերպ քթոցը հասցնում էի բակ և թափում: Ջրելու համար օրական երկու անգամ արձակում էի անասուններին և ապա նորից կապում: Այսպիսի ծանր աշխատանք մարդը կաներ միայն ծայր աստիճան հարկադրված լինելու դեպքում: Աշխատանքը շատ ծանր էր, հագիս եղած հագուստն էլ քրքրվել, թափվում էր վրա-յիցս, ես չէի դիմանում Ղարսի սառնամանիքներին, սակայն մի փոր հացի համար շարունակում էի այս տառապալից աշխատանքը: Այսպիսի աշխատանքի դիմաց Փոլատ աղայի կին Գյուլիզարը ինձ օրական երկու անգամ կերակրում էր և երեկոյան տուն վերադառնալիս ինձ հետ դնում չորս-հինգ լավաշ, մի քիչ պանիր, որը տուն էի հասցնում հարազատներիս կերակրելու համար: Եղբայրս՝ Գարեգինը⁶⁶, մի փոր հացի համար նույնպես գնաց բատրակություն անելու մի ուրիշ աղայի մոտ: Նրա վիճակն ավելի ծանր էր. ինձնից երեք տարի փոքր էր, ընդամենը տասներկու տարեկան և նույնպես կատարում էր խիստ ծանր, իր տարիքին անհամապատասխան աշխատանք: Այսպես ահ ու երկյուղի մեջ մի փոր հացի համար, ուժերից վեր ծանր աշխատանքներ կատարելով, 1920թ. ձմռանը Ղարսում թուրքերի տիրապետության տակ մի կերպ պահպանում էինք մեր գոյությունը: Անտանելի էին մեր կենցաղային պայմանները. ամիսներով մնում էինք առանց լողանալու, ո՛չ բաղնիք կար, ո՛չ ջուր, երբեմն մայրս վառարանի վրա մի քիչ ջուր էր տաքացնում և ցուրտ սրահում մեզ լողացնում: Ղարսում թուրքերը հաճախակի անհանգստացնում էին հայ ընտանիքներին: Ամեն մի նոր եկած ասկյար իր պարտքն էր համարում մտնել հայերի տները, խուզարկել և մի բան փախցնել: Վտանգը հայ ընտանիքների գլխից անպակաս էր:

Մի օր երեք ասկյար մտան մեր բնակարանը, որտեղ ապրում էր նաև Հաջիի ընտանիքը, խուզարկեցին տունը, բան չգտան, բռնեցին իմ ձեռքից, քարշ տալով սենյակից սրահ տարան: Տանը միայն երեխաներով էինք, և բարեբախտաբար տանն էր նաև Հաջու աղջիկ Գոհարը: Սկսվեց լացն ու աղմուկը: Ինձ սրահ

դուրս բերելով՝ ասկյարներից մեկը փամփուշտը դրեց հրացանի մեջ և ուղղեց դեպի ինձ: Խնդիրն այն էր, որ մի հայ սպանողը դրախտ էր գնալու: Այս պահին Հաջու աղջիկ Գոհարը իրեն նետեց հրացանի փողի վրա և բռնեց այն: Մեծ աղմուկ բարձրացավ, ես իսկույն փախա սենյակ: Աղմուկի վրա հավաքվեցին հարևան թուրք ընտանիքները: Ասկյարները, տեսնելով հավաքված ամբոխը, շենքից փախան:

Մայրս, շուկայից վերադառնալով և իմանալով տեղի ունեցածի մասին, զգուշացրեց մեզ, որ դուռը մշտապես փակ պահենք:

Միրելի՛ սերունդներ, այսպես անցան մեր դժբախտ ընտանիքի ողջ մնացած անդամների օրերը Դարսում 1920թ. ձմռանը: Այդ օրերին քաղաքում լուրեր էին պտտվում, թե շուտով մնացած հայերին բոլորին կկոտորեն, մի մասն էլ ասում էր, թե հավանական է, որ ստիպեն թուրքական հավատք ընդունելու⁶⁷, և այսպիսի հազար ու մի խոսակցություններ, որոնք հանգիստ չէին տալիս մեզ առանց այն էլ մեր հոգեկան ծանր վիճակում:

Մի օր՝ վաղ առավոտյան, երբ մեր և Հաջու ընտանիքի անդամները պատրաստվում էին յուրաքանչյուրը իր աշխատանքին գնալու, հանկարծ մեր դռան մոտ երևաց օսմանյան բանակի ցածր կոչումով աստիճանավորներից մեկը՝ կարծես օնբաշին՝ տասնապետ: Սա երկու ասկյարների ուղեկցությամբ մտավ մեր բնակարանը և խիստ զգուշացրեց, որ ընտանիքի անդամներից ոչ մեկը տնից չբացակայի, որովհետև այսօր՝ մինչև օրվա վերջը, տեղափոխվելու ենք Գյումրի քաղաք: Զգուշացնելով մեզ՝ աստիճանավորը մի ասկյարի հետ գնաց, իսկ մյուսը մնաց մեր դռանը, ինչը ավելի մեծ կասկածների առիթ տվեց: Մեր ընտանիքներում սկսվեց լացուկոծը: Նանեն լուռ, աչքերից ծովի նման արցունքներ էր թափում: Մենք մոլորված մերթ նրան էինք նայում, մերթ Հաջուն ու իր կնոջը: Այստեղ միայն Հաջին էր, որ՝ որպես փորձված ու հասակավոր տղամարդ, իրեն սառնարյուն էր պահում և բոլորիս սիրտ տալիս ու ասում.«*Մի՛ վախեցեք, աստված ողորմած է*»: Մայրս, որ հավատում էր աստծուն, Հաջուն ասաց.

-Եթե աստված կա, բա ինչի՞ համար մեր անմեղ ընտանիքը այսպիսի օրվա հասավ, ամեն ինչ սուտ է, ու՞մ էինք վնաս տվել, մեր ընտանիքը հարևանի հավին էլ քշա չի ասել:

Այսպիսի մտատանջությունների մեջ մնացինք քսանչորս ժամ: Երկար մտորումներից ու տանջանքներից հետո գիշերն անցավ, ու բացվեց առավոտը: Դռանը կանգնած մեկ ասկյարը դարձավ չորս-հինգ հոգի: Նրանք մտան տուն ու մեզ առաջարկեցին.«*Վերցրե՛ք ձեր իրերը և ճանապարհ ընկե՛ք*»: Լռություն տիրեց: Այս դեպքը տեղի ունեցավ 1921թ. մարտ ամսին: Ծիշտն ասած, իր էլ չունեինք վերցնելու՝ բացի ճաշի մի քանի կլոր ամաններից և մի երկու կտոր քրքրված փալասներից: Վաղ գարնան առավոտ էր, Ղարսի սաստիկ ցրտից դողալով, սոված ու կիսամերկ, ահի ու երկյուղի մեջ՝ դուրս եկանք տնից ու ասկյարների ուղեկցությամբ քայլեցինք դեպի երկաթուղային կայարան: Կայարանում հավաքված էր հայ ընտանիքների մեծ բազմություն, մարդիկ մեկը մյուսի հետ խոսում էին և հազար ու մի եզրակացություններ անում: Յուրտն ու քաղցր մոռացության էին տալիս ամեն ինչ: Կայարանում գտնվող երեխաների լացն ու մայրերի մորմոքը և այս անորոշ վիճակը բոլորիս մոլորության մեջ էին գցել: Այսպես մնացինք երեք-չորս ժամ: Եթե այս վիճակը ավելի երկարեր, ապա ժողովրդի մեծ մասը կմեռներ կայարանի պատերի տակ, ու անգամ հավաքող չէր լինի: Սպասումներից հետո կայարանի վերջին գծում կանգնեց ապրանքատար մի գնացք⁶⁸: Թուրք պաշտոնյաները և զինվորները հայերին բաժանեցին խմբերի և լցրին ապրանքատար վագոնները: Այդ վագոնները գտնվում էին սարսափելի հակասանիտարական վիճակում: Յուրաքանչյուր վագոնում լցրեցին այնքան մարդ, որ նստելու տեղ չկար, շատերը մնացին ոտքի վրա կանգնած: Մարդկանց խտությունից և վագոնների դռների փակվելուց հետո մի քիչ տաքացանք ու ազատվեցինք ցրտամահ լինելուց: Վագոններում նույնպես սաստկացան խոսակցությունները. մեկն ասում էր.«*Մեզ փակում են Թուրքիա մեր հավատքը փոխելու համար*»: Մեկ ուրիշը պնդում էր, թե՝ տանում են Գյումրի: Երրորդն ասում էր.«*Ո՛չ Թուրքիա են փակում և ո՛չ էլ*

Գյումրի, այլ քաղաքից դուրս են հանում կոտորելու համար»:

Սիրելի՛ ընթերցող, այսպիսի պայմաններում ինչպիսին կլինի մարդկանց հոգեվիճակը, բառեր չեն գտնում նկարագրելու համար: Դաշնակցական կառավարողները, ժողովրդին դնելով այսպիսի անմարդկային վիճակի մեջ, նրանց մատնելով սրի, քաղցի ու աղքատության, Թուրքիայի հետ պայմանագիր էին կնքում Ղարսը, Ալեքսանդրապոլը մինչև Ուլուխանլու⁶⁹ թուրքերին հանձնելու համար: Ինչպես տեսնում եք, սա էր դաշնակցականների «նվերը» հայ ժողովրդին: Ներեցե՛ք, որ մի քիչ շեղվեցի բուն նյութից: Վազոններում, վերջապես, ժողովրդի նյարդերը⁷⁰ ծայր աստիճան քայքայվեցին: Այստեղ է, որ ասում են. «**Կան թուպեներ, որոնք դար սրժեն և երբեք չեն մոռացվում**»: Նման մտորումների պահին հանկարծ գնացքը շարժվեց: Վազոնների դռների արանքից նայում էինք, թե գնացքը դեպի որ կողմ է գնում: Մարդիկ որոշ չափով գոտեպնդվեցին, երբ զգացին, որ գնացքը Ալեքսանդրապոլի⁷¹ կողմն է շարժվում: Այստեղ մեր ուրախությունը երկար չտևեց. գնացքը Ղարս կայարանից շարժվելուց երեսուն րոպե հետո կանգ առավ Ղարադաղ սարի դիմաց՝ չոլի մեջտեղում: Այստեղ ժողովրդի մեջ իրարանցում սկսվեց, կարծես հաստատվեց այն վարկածը⁷², թե ժողովրդին քաղաքից հանում են կոտորելու համար: Այդ գոռում-գոչյունի ժամանակ հանկարծ բացվեց մեր վազոնի դուռը, և ոտքից գլուխ զինված երեք ասկյար բարձրացան վազոն: **Այս պահին ժողովուրդը ինքնամոռացության աստիճանի հասավ, իսկ ասկյարները մարդկանց քեներից քաշում էին, կոպիտ կերպով հրմշտում էին այս ու այն կողմ, կոպտում մարդկանց ու փնտրում էին ինչ-որ մեկին: Վերջապես նրանք կանգնեցին մի աղջկա գլխավերևում: Նրան, բռնելով ոտքերից ու ձեռքերից, քաշքշելով վազոնից դուրս փարան: Մյուս կողմից աղջկա մայրը, աղջկա հագուստներից բռնած, ողբալով դեպի իրեն էր քաշում: Ասկյարներին հաջողվեց աղջկան վազոնից դուրս հանել: Դաշտի մեջ փաշայի հետ կանգնած էին փաստ-փաստներկու չիավոր և սպասում էին ասկյարներին⁷³:** Վազոնում ոչ ոք չէր տեսել, թե այդ նրբագեղ, լայն կրծքով

ու պայծառ աչքերով աղջիկը երբ էր բարձրացել վագոն: Այսպիսով՝ ասկյարները աղջկան իջեցրին վագոնից, նստեցրին փաշայի ձիու թամբին ու վերադարձան դեպի Ղարս, իսկ գնացքը շարժվեց Մագրա կայարանի ուղղությամբ: Ուշ երեկոյան մենք հասանք Ալեքսանդրապոլ կայարանը: Եկողներին դիմավորելու համար կայարան էին եկել բարեկամներն ու ծանոթները: Դիմավորողների մեջ էին մեր ազգական Տոնոյան Թաթոսը և նրա մայրը: Հասնելով Ալեքսանդրապոլ՝ մեզ համարեցինք թուրքերի ձեռքից փրկված: Վագոններից իջնելով՝ նկատեցինք, որ այստեղ ևս բոլոր տեսակի կարգադրություններ անողները դարձյալ թուրք փաշաներն էին: Այստեղ է ժողովրդական առածն ասել. «**Մրից պրծանք, մրջուրն ընկանք**»:

Մայրս մեզ իր շուրջը հավաքեց, և մեզ դիմավորելու եկած ազգականի հետ կայարանից Տասնվեց փողոցով գնացինք քաղաք⁷⁴: Իր ընտանիքով քաղաքում էր բնակվում երկաթգծի բանվոր, մեր մոտիկ ազգական Սահակ Տոնոյանը: Նրա տունը գտնվում էր Տասնվեց փողոցի վրա: Նրանք շատ սիրով ընդունեցին մեզ: Հյուրընկալությունից հետո մեր ազգականը սկսեց հարցուփորձ անել հայրիկիս ու մյուսների մասին: Նանես պատմեց հայերի և առանձնապես մեր ընտանիքի կրած զրկանքների ու տառապանքների մասին: Պատմեցինք նաև վագոնից տարված գեղեցկուհու մասին, որի մայրը պատմել էր, որ աղջկան Ղարսում պահում էր պառավ կնոջ հագուստներով, բայց տեղափոխվելու ժամանակ փաշան նկատել էր աղջկան և նախօրոք նախապատրաստել նրան փախցնելու գործը: Աղջկա հետագա վիճակը ինձ հայտնի չէ:

Ալեքսանդրապոլում իմացանք, որ շատ դառն ու տխուր է հայրենի Ջաջուռ գյուղի և նրա հարևան Աղքիլիսա, Սարիյար, Արխավալի ու Աղբուլաղ գյուղերի բնակչության ճակատագիրը: Այս և այլ գյուղերում նույնպես կատարվել էին զանգվածային կոտորածներ: Մնացածներն էլ համատարած սովի, համաճարակի ու հիվանդությունների հետևանքով բնաջնջվել էին, ու շատ քչերն էին ողջ մնացել: Ջաջուռում և շրջակա գյուղերում տղամարդ-

կանց սրի էին քաշել, իսկ կանանց ու երեխաներին լցրել էին մառազներն ու գոմերը, որտեղ սովից մահացել էին: Ինչ վերաբերում է Ղարսի մարզի և Սարիղամիշի գավառի 100000-ավոր հայությանը, զանգվածային⁷⁵ կոտորածից ազատվածներն էլ մահացել էին սովից, հիվանդություններից ու համաճարակներից: Քիչ քանակությամբ ողջ մնացած կանայք ու երեխաներ կիսամեռ⁷⁶ վիճակում, այն էլ Սովետական պետության համառ պահանջով, տեղափոխվեցին Ալեքսանդրապոլ: Այսպիսով⁷⁷ երիտթուրքերը⁷⁸ և Աթաթուրքը⁷⁹ Ղարսի նահանգն ու Սարիղամիշի գավառը լիակատար կերպով հայաթափ արեցին՝ ազատելով այս տարածքները բնիկ ազգաբնակչությունից:

Թուրքիան իր առջև այդպիսի նպատակ էր դրել դեռ 1914-1918թթ. համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակաշրջանից, սակայն իր նպատակին հասավ 1920թ. Գաշնակցական կառավարության ժամանակ:

Ինչպես շատ հայ ընտանիքներ, այնպես էլ մեր ընտանիքը Ղարսում թողեց անհայտ շիրիմներ. հորս՝ Ալեքսանի և մեծ եղբորս՝ Լևոնի արյունն ու տանջանքները աչքիս առաջն են: Հոգուս վրա սպանող դաշույնի հարվածով քանդակված, դաջված են այդ տառապանքները: Մյուս եղբորս՝ Սմբատի շիրիմը նույնպես մնաց Ղարսում: Երբ մտաբերում եմ նրանց, վիշտը ալեկոծում է հոգիս, նրանք երիտասարդ հասակում նայեցին աշխարհին, ժպտացին ու գնացին: Աշխատասեր մորս սրտից թեկուզ գերեզմանում դեռ բարձրանում է նրա՝ Ղարսում ապրած վշտի ծուխը: Նա լալիս էր եղբայրներիս ու հորս մահը: Ոչ մի դեպքում հնարավոր չէ մոռանալ մեզ հասցված այս մեծ ու մշտաբորբոք վիշտը: Ինչպես կարելի է մոռանալ, երբ մայրս Ջաջուռում էր, հայրս՝ Ղարսում, իսկ ես, ինչպես մի կամուրջ, ընկած էի երկուսի մեջտեղում: Արդյոք կտեսնե՞մ Ղարսը Գյումրուն միացած: Մահն էլ Ղարսում ինձ համար մուրազ է⁸⁰:

Սիրելի՛ հարազատներ, այս հակիրճ պատմությամբ ավարտում եմ մեր ընտանիքի և հայ ժողովրդի կրած տառապանքների ու ապրած կյանքի մասին հիշողություններս Ղարսի շրջանում:

*

* *

Ալեքսանդրապոլում ամենուրեք սովն ու համաճարակը հնձում էր գաղթականությանը: Օսմանյան տիրապետության շրջանում այստեղ նույնպես այն նույն կարգերն էին, ինչ Ղարսում: Գլխերով փողոց դուրս գալը դեռևս արգելված էր: Նույնիսկ ցերեկները քաղաքում ազատ չէինք կարող շրջել:

Մի օր մեր ազգական իմ հասակակից Թ. Տոնոյանի հետ փողոց դուրս եկանք, թուրք ասկյարները մեզ բռնեցին ու տարան Սևերսկի բերդը⁸¹: Բերդում մենք հանդիպեցինք շատ հայ երեխաների, որոնց նույնպես բերել էին ասկյարները: Մեզ խառնեցին նրանց հետ: Ժամ առ ժամ մեր շարքերը համալրվում էին նորանոր երեխաներով: Ասկյարները մեզ աշխատեցնում էին, ստիպում էին տեղափոխել բերդում եղած գույքը: Բերդում կային ռուսական ցարիզմի ժամանակներից մնացած մահճակալներ, հիվանդանոցային և գորանոցային այլ գույք: Ասկյարները երեխաներին ստիպում էին դրանք բարձել սայլերին ու տեղափոխում էին Ալեքսանդրապոլի կայարանը և բեռնում վագոնները: Ամբողջ օրը բերդում աշխատելով՝ մի կողմից վախն ու հոգնածությունը, մյուս կողմից քաղցը մեզ հարկադրում էր մտածել այստեղից փրկվելու մասին: Երբ բերդով թուրքական որևէ փաշա էր անցնում, երեխաները աղմուկով բողոքում էին, բայց նրանց միայն ծաղրում էին և գործնական ոչինչ չէին անում: Երեխաները փորձում էին փախչել բերդից, սակայն դռան վրա ասկյարներ էին կանգնած, իսկ բերդի պատերն այնքան բարձր էին, որ մտաչելի չէին թռչելու համար: Ալեքսանդրապոլի Սևերսկի բերդի բարձրությունից երևում էին Մեծ և Փոքր Մասիսների սպիտակ գագաթները: Վաղ գարնանային ցրտի մեջ կանաչավուն երկնքում բացվում էին գարնան դռները Հայաստանում:

Մենք չէինք կարող պրծնել գարշելի ասկյարների ճանկերից: Այսպես մտածում էինք, երբ Թաթոսն ասաց, որ գտել է փախչելու ելքը: Մենք արձակեցինք մեր կաշվե գոտիները, կապեցինք իրար, Թաթոսը բռնեց գոտու մի ծայրից, մյուս ծայրից ամուր բռնեցի ես,

և այսպես Թաթոսը կախվեց բերդի պատից ցած, քիչ էր մնում, որ ոտքերը հասնեին գետնին: Նա թռավ, մի քիչ տեղ գլորվեց և իսկույն ոտքի կանգնեց: Այստեղ մի ընկալն մտածեք, որ Թաթոսը կանգնած է բերդից դուրս՝ գետնի վրա, իսկ ես բերդի ներսում՝ պատի վրա, և նայում եմք իրար:

Քանի որ հաստատ որոշել և ծրագրել էինք փախչել, ուստի առանց ժամանակ կորցնելու ես բռնեցի պատի ամուր քարերից և կախվեցի ներքև այնքան, որքան ներում էր թևերիս երկարությունը: Իսկ Թաթոսը, որ նույնպես երկար հասակ ուներ, կանգնեց պատի տակ: Երբ ես ձեռքերս բաց թողեցի ու ընկա ցած, նա ինձ ամուր բռնեց, և երկուսս, այսպես իրար փաթաթված, գլորվեցինք գետնի վրա, ապա ոտքի կանգնեցինք: Այսպիսով, բերդից դուրս գալու ծրագիրը իրագործեցինք հաջողությամբ: Մնացած երեխաների վիճակը, որոնք մնացին բերդում, ինձ հայտնի չէ: Բերդից փախչելիս արդեն մութ էր, իջանք դեպի Չարքզի⁸² կոչվող ձորը, որտեղ մեր ճանապարհը կտրեց Արփաչայ (Ախուրյան) գետը⁸³, որը գտնվում էր գարնանային վարարման մեջ: Ուշ գիշերով մթության մեջ լավում էր գազազած գետի եռացող շիթերի երաժշտությունը, նրա գոռում-գոչյունը, որը շարունակ հնչում էր և ավելացնում Չարքզ ձորի⁸⁴ արձագանքները: Հեշտ չէր հասկանալ մարդու զգացմունքների խորությունը այս պահին: Հոգեկան այդպիսի բարդ ապրումների մեջ գտանք գետն անցնելու հնարավորություն: Փնտրեցինք ու գտանք գետի այն տեղը, որը լայն էր ու ոչ խորը: Ես ու Թաթոսը ամուր բռնեցինք իրար ձեռք, շորերով ու կոշիկներով մտանք ջուրն ու ոտք ոտքի դանդաղ անցանք գետը: Այստեղ քաղցը, հագուստների թացությունը (մանավանդ փչում էր վաղ գարնանային սառը քամին) մեզ կանգնեցրին ցրտահարության վտանգի առաջ: Մենք չվիատվեցինք, հավաքեցինք մեր վերջին ուժերն ու քաղաքի նեղլիկ փողոցների, բակերի ու կտուրների վրայով մեծ դժվարությամբ հասանք Թաթոսենց տունը, ուր ապրում էր նաև մեր ընտանիքը:

Իմ և Թաթոսի մայրերը, ընկած Ալեքսանդրապոլի փողոցները, մեզ էին փնտրում: Մեզ չգտնելով և ոչ մի լուր չստանալով մեր

մապին՝ նրանք հույսերը կտրած վերադարձան տուն ու մեզ տեսնելով տանը նստած՝ անչափ ուրախացան:

1921թ. ապրիլին օսմանյան գորքերը վերջնականապես հեռացան Ալեքսանդրապոլից⁸⁵: Արևը նորից ծագեց Հայաստանի լեռնագագաթների ու խոր քուն մտած դաշտավայրերի վրա: Հայ ժողովրդի ողջ մնացած մասը նորից փրկվեց բնաջնջումից և կենարար ուժ ստացավ միայն Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման շնորհիվ:

*

* *

Մեր ընտանիքը Ալեքսանդրապոլում ոչ մի անելիք չուներ, մանավանդ որ ապրուստի միջոց չկար: Մեզ մնում էր գնալ հայրենի գյուղ: Նանես մեզ՝ երեխաներիս, հավաքեց, խորին շնորհակալություն հայտնեց մեր ազգական Սահակ Տոնոյանին ու նրա ընտանիքին, և վաղ առավոտյան ոտքով Ալեքսանդրապոլից ճանապարհ ընկանք դեպի Ջաջուռ գյուղը, որը Ալեքսանդրապոլից տասներկու կմ հեռավորության վրա էր: Օրը ճաշ էր դարձել, ճանապարհի կողքերի արտերի միջից զանազան բանջարեղեն ու սինձ հավաքելով՝ հոգնած հասանք գյուղ: Այստեղ հիշեցի մանկության ընկերներիս, սակայն մարդկանց փոխարեն գյուղում տեսնում էինք փլատակներ, մարդկային միս կերած ու վայրենացած, գազազած շներ: Նանեն, այս բոլորը տեսնելով, աչքերից գլոր-գլոր արցունք էր թափում, թեև ամեն կերպ աշխատում էր իր վիշտը մեզանից թաքցնել: Մենք տեղավորվեցինք հորեղբորս՝ Աստ ամու հացատանը, որի ընտանիքից ոչ ոք կենդանի չէր մնացել: Տան դուռը չկար, կտուրը խարխուլ էր ու կիսաքանդ: Գյուղում վրա հասավ կովկասյան մութ գիշերը, թռչունի նման ծվարեցինք քարուքանդ եղած տնակում: Այստեղ քաղցին ավելացավ նաև ան ու սարսափը. մի կողմից՝ վայրի գազանների ոռնոցը, մյուս կողմից՝ վախը գյուղի շրջակայքում ընկած ուռած և այլանդակված դիակներից:

Միրելի՛ ընթերցող, մարդկանց հոգու վրա հազարավիսամի հրեշ է ծայրահեղ թշվառությունը, որի մեջ գտնվում էին մեր և շատ շատերի ընտանիքները:

Այս փոքրիկ, բայց բովանդակությամբ հարուստ պատմությունն ունի իր նշանակությունը. որքան դառն են անցյալի հիշողությունները, նույնչափ էլ քաղցր են դրանք՝ որպես հուշ անցյալից գալիք սերունդների համար:

Մի քանի օր անց բարբարոսների ձեռքից ազատված և ողջ մնացած ջաջուռցիները կամաց-կամաց վերադարձան գյուղ: Կարծես գյուղը սկսում էր դանդաղորեն շունչ առնել, փողոցներում նկատվում էր մարդկանց շարժում: Սովից մեզ փրկելու համար նանես հողի միջից գարու և ցորենի հատիկներ էր հավաքում, դաշտից բերած բանջարի հետ միասին շորվա էր եփում ու կերակրում մեզ: Գյուղում բոլորը սովահար էին: Շատերի մարմինն ու ձեռքերը ուռել էին հացի պակասության պատճառով, քանի որ ուտում էին միայն դաշտից բերված բանջարեղեն:

Ընտանիքը սովից փրկելու համար մեր բարեկամների միջամրտությամբ ես տասնվեց տարեկան հասակում սկսեցի աշխատել Ջաջուռ կայարանում որպես երկաթգծի բանվոր:

Հիշողությունիցս չեն ջնջվում աշխատանքիս առաջին տասնհինգ օրվա դառնությունները. փոսեր էինք փորում ու երկաթգծի կողքերից, կամուրջների տակից ու ձորերից հավաքում էինք մեռածների դիակները, պատգարակներով բերում լցնում փոսերը և հողով ծածկում դրանք: Հավաքելիս դիակները չէին ճանաչվում, անհնար էր որոշել, թե ովքեր էին, քանի որ այնքան էին մնացել բացօթյա և ձյան տակ, որ այլանդակվել և ուռել էին: Բացի դրանից՝ գազանները հոշոտել էին դիակների մեծ մասին: Երկաթգծի կողքին ընկած էր գծի բրիգադիր, մեր բարեկամ Արսեն Գրիգորյանի դիակը, որին ճանաչեցինք հագուստի մնացորդներից: Երևում էր, որ նրան սպանել էին թուրքերը պարտականությունները կատարելու ժամանակ: Հանգուցյալի դիակը տեղափոխեցինք գյուղի գերեզմանոց և այնտեղ էլ թաղեցինք: Թափված դիակները հավաքելիս ամեն բոպե մտաբերում էի հորս և Լևոնին,

որոնք թուրքերի գնդակից ընկան Ղարսի մոտ՝ Արգինայի ձորում, և մնացին այնտեղ: Ա՛խ, իմ աշխատասեր ու ազնիվ եղբայր Լևոն, ինչպե՞ս կյանքի ծարավ մնացիր: Մի՞թե կարող եմ մոռանալ նրան:

Ջաջուռի խիստ ու երկարատև ձմեռը թանձր ձյունով ծածկում էր հովիտները, լցնում խոր ձորերը, փակում ճանապարհները, դառնաշունչ քամին կատաղորեն քշում էր ձյունը և կուտակում, կազմում ահավոր բլուրներ, օդը լցնում սառցային թանձր փոշով: Մարդիկ ձմեռում էին ձյան տակ թաքնված խրճիթներում, անասունների հետ նույն տեղում: Գնացքները մնում էին ձյան հաստ շերտի տակ, օրերով դանդաղում էր երթևեկությունը: Մեր աշխատանքը շատ ծանր էր: Երկաթգծում ստանում էինք շաբաթական մի քանի բուխանկա հաց, երբեմն էլ՝ հարինգ, ձավարեղեն, որը չէր բավարարում մեր ընտանիքի նվազագույն պահանջները: Մայրս ստիպված եղավ փոքր եղբորս ու քրոջս թողնել իմ խնամքին ու մեկնել Վրաստանի Բորչալուի⁸⁶ կողմերը, ուր ապրում էր մեր ազգական Սկրտիչ Մարգարյանը, այդտեղի դաշտերից եգիպտացորեն և այլ հացահատիկ հավաքելու համար: Այս դառնաղի օրերին երեխաներս խիստ զգում էինք նանեխ գուրգուրանքների ու նրա շնորհալի ձեռքով պատրաստված համեղ ճաշերի՝ թաթար-բորաքի, փլավ, շորվա, պակասը, որոնց համը մինչև այսօր էլ զգում եմ: Անցնում էին տարիները, երեխաներս մեծանում էինք, նեղ օրերին փոխարինում էին լի օրեր: Աշխատելով երկաթգծում՝ աստիճանաբար բարելավում էի մեր ընտանիքի տնտեսական վիճակը: Մի կողմից նանեխ շնորհալի ժրաջան աշխատանքի, մյուս կողմից Խորհրդային կառավարության ձեռնարկած միջոցների շնորհիվ չքավոր ընտանիքները, ինչպես և մենք, արագ թափով սկսեցինք շունչ առնել: Անցան 1921թ. դառն օրերը: 1922թ. երկաթգծի վարչությունը մեզ նավթամթերք էր տալիս, որը փոխում էինք կարտոֆիլի և հացահատիկի հետ: Արդեն սովետական դրամով աշխատավարձ էինք ստանում և վառելափայտ: Փոքր եղբայրս՝ Գարեգինը, նույնպես սկսեց աշխատել Էջմիածնի երկաթգծի կայարանում որպես վերանորոգող բան-

վոր: Մեր աշխատանքով ձեռք բերեցինք հացահատիկի սերմ, վար ու ցանք կատարեցինք, կով գնեցինք: Այսպիսով՝ մի քանի տարվա ընթացքում մեր ընտանիքի տնտեսական դրությունը բարելավվեց: Քաղցն ու սովը՝ որպես դառն հիշողություն, մնացին ետևում:

Կազմակերպությունները և հասարակական աշխատանքները գյուղում և կայարանում

Աստիճանաբար բարելավվեց աշխատավոր ժողովրդի տնտեսական վիճակը, երկրում սկսեց ծավալվել քաղաքական և կուլտուրական աշխատանքը: 1922թ. սկզբներին Ջաջուռ կայարանում կազմակերպվեց կոմերիտմիության⁸⁷ կազմակերպություն: Կազմակերպության հիմնադիրներ դարձան Ջաջուռ կայարանի երիտասարդ բանվորներից Գրիգոր Դիլոյանը, Համբարձում Ավդալյանը, Աղասի Մակարյանը (տողերիս հեղինակը), Ռուբեն Ռաֆայելյանը, Մամիկոն Պողոսյանը և ուրիշներ: Կոմերիտական կազմակերպությունը քաղաքական և կազմակերպչական աշխատանք ծավալեց կայարանի բանվորների և շրջակա գյուղերի բնակչության շրջանում: Հետզհետե սկսեց աճել կազմակերպության անդամների թիվը՝ իր շարքերում ընդգրկելով կայարանի և շրջակա գյուղերի ակտիվ երիտասարդությանը: Կազմակերպությունը գյուղերում ծավալեց կուլտուրական աշխատանք. աշխատավորության անգրագիտությունը վերացնելու նպատակով բացեց լիկկայաններ⁸⁸, ցույց էր տալիս ներկայացումներ՝ նշված աշխատանքներում ներգրավելով գյուղի ուսուցչությանը և ակտիվ երիտասարդությանը: Չեմ կարող մոռանալ գյուղի այն ուսուցիչներին, որոնք իրենց ծանրաբեռնված աշխատանքից դուրս ակտիվ մասնակցում էին վերը նշված աշխատանքներին: Նրանք էին Պետրոս Չաթալբաշյանը, Աշոտ Միմոնյանը (դպրոցի դիրեկտոր), Մանյա Միմոնյանը, Ավետիք Աբիսողոմյանը, Շուշիկ Աբիսողոմյանը և ուրիշներ: Հասարակական-քաղաքական աշխա-

տանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար կոմունիստների և կոմերիտմիության բջջի երաշխավորությամբ 1924թ. դարձա կոմունիստական կուսակցության անդամության թեկնածու, իսկ 1926թ. ընդունվեցի կոմունիստական կուսակցության շարքերը՝ դառնալով Ջաջուռ կայարանի կոմունիստական բջջի հիմնադիրներից մեկը: Սկզբնական կուսբջիջը կազմակերպելուց հետո ընդլայնվեց քաղաքական-կազմակերպչական աշխատանքը: Հիշատակության արժանի է Ջաջուռի հեղկոմի նախագահ, երկաթգծի բանվոր Թադևոս Սուվարյանը, որը մեծ աշխատանք կատարեց գյուղի երիտասարդությանն ու չքավորությանը համախմբելու և նրանց դասակարգային գիտակցությունը բարձրացնելու համար:

Այս շրջանում Լենինականի կուսակցական գավառային կոմիտեն և սովետական կազմակերպությունները ամենօրյա օպերատիվ աշխատանք էին տանում գյուղի կուսակցական և խորհրդային կազմակերպություններում: Պետք է հիշատակել նաև այն, որ իմ փոքր եղբայր Գարեգինը, աշխատելով Էջմիածնի կայարանում որպես երկաթգծի բանվոր, իր եռանդուն աշխատանքի շնորհիվ 1928թ. դարձավ կոմունիստական կուսակցության անդամ: Գարեգինը հետագայում աշխատեց Ախուրյանի շրջկոմում ՄՏ կայանի քաղբաժնի պետ: Այժմ հանրապետական կարգի անհատական թոշակառու է և ակտիվ մասնակցություն է ցուցաբերում սովխտզի⁸⁹ ամրապնդման աշխատանքներին, երկար տարիներ եղել է գյուղկուլվարչության նախագահ: Պետք է նշեմ, որ իմ փոքր քույր Հռիփսիմեն, որը հինգ տարեկան հասակում մեծ տառապանքներ ու զրկանքներ կրեց օսմանյան զավթիչների՝ Հայաստան ներխուժման պատճառով, նույնպես կոմունիստական կուսակցության անդամ է, այժմ իր ամուսնու և երեխաների հետ բնակվում է Երևանում:

Լինելով Ջաջուռ կայարանի և շրջակա գյուղերի կուսակցական կազմակերպության միացյալ բջջի քարտուղարը՝ ես մեծ ներդրում ունեմ կուսակցության շարքերի համալրման և գյուղի

կոլեկտիվացման⁹⁰ գործում, ինչի մասին գիտեն այն ժամանակվա գյուղի մարդիկ:

1928-1930 թթ. սկսվեց գյուղի սոցիալիստական վերափոխման՝ կոլեկտիվացման շրջանը: Մեր կուսակցական բջջի (որի քարտուղարը տողերիս գրողն էր) ղեկավարման ոլորտում⁹¹ էին գտնվում Ջաջուռ, Աղբիլիսա, Սարիար և Երրորդ Արխավալի գյուղերը: Համատարած կոլեկտիվացման շրջանում նշված բոլոր գյուղերում կազմակերպվեցին կոլտնտեսություններ: Գասակարգային պայքարի այս շրջանում, բացի Ջաջուռ գյուղի կոլեկտիվ տնտեսությունից, նշված գյուղերի կոլտնտեսությունները ցրիվ էին գալիս և նորից կազմակերպվում: Կուսակցական բջջի և կոմերիտական կազմակերպությունների աշխատանքի շնորհիվ վերոհիշյալ գյուղերում հիմնականում ավարտվեցին կոլեկտիվացման աշխատանքները, և արդեն պայքար էր գնում դրա ամրապնդման համար: Ջաջուռ գյուղի կոլտնտեսության կազմակերպումը և ամրապնդումը օրինակ հանդիսացավ մյուս գյուղերի կոլտնտեսությունների համար: Կոլեկտիվացման գործին անձնական ակտիվ մասնակցություն ունեցան կուսանդամ, քսանհինգհազարական կոլտնտեսության առաջին նախագահ Համբարձում Ավդալյանը, կուսանդամ, քսանհինգհազարական կոլտնտեսության առաջին հաշվապահ Լիպարիտ Գրիգորյանը, կուսանդամ Ենոք Գրիգորյանը, կոմերիտական բջջի քարտուղար, կոմերիտական Սկրտիչ Տոնոյանը, կոմերիտական Արշակ Մելիքյանը, կուսանդամ Մամիկոն Սուվարյանը, անկուսակցական ակտիվիստներ Կարապետ Ավետիսյանը, Փոփոլի Հակոբը, Վանո Սուվարյանը:

Ասացինք, որ Ջաջուռ կայարանի կուսակցական կազմակերպությունը իր շարքերում ընդգրկում էր Ջաջուռ, Աղբիլիսա, Սարիար և Արխավալի գյուղերի կուսակցականներին: Կազմակերպությունը, համալրելով իր շարքերը, 1943թ. այդ գյուղերում ստեղծեց առանձին կուսակցական բջիջներ, որոնք դարձան քաղաքական ուժ սոցիալիստական վերակառուցվող գյուղը ղեկավարելու համար: Մեր կուսակցական բջջի անդամ կոմունիստների և կոմերիտականների գրագիտությունը բարձրացնելու նպա-

տակով Ջաջուռ գյուղի երկաթգծի դայրոցին կից բացվեց բարձր տիպի գիշերային դպրոց: Բոլորն էլ մեծ կարգապահությամբ հաճախում էին դասերին, և լավ սովորելու շնորհիվ շատերը դարձան կրթված, գրագետ մարդիկ: Գործը հասավ նրան, որ 1931թ. գարնանը Դուզքյանդի⁹² կուսակցական շրջկոմը, որի առաջին քարտուղարն էր Հայկ Սոխիկյանը (գոհվեց Հայրենական մեծ պատերազմում 1944թ.⁹³), ինձ առաջարկեց անցնել շրջանային աշխատանքի: Չնայած ես համաձայն չէի (պատճառաբանում էի, որ չեմ ցանկանում թողնել բանվորի աշխատանքը), բայց շրջկոմի և գավկոմի որոշմամբ առաջ քաշվեցի և նշանակվեցի շրջանի դաշտավարական միության նախագահի տեղակալ: Ինձ համար խորթ էր այդ աշխատանքը, շատ դժվար էր բանվորական կոլեկտիվից բաժանվելը, որտեղ աշխատել ու աճել էի:

Այս նոր աշխատանքի տեղում ավելի անհրաժեշտ էին գրագիտությունն ու բանիմացությունը: Չնայած այստեղ շուրջս լավ մթնոլորտ էր ստեղծված, և ստանում էի բարձր աշխատավարձ, այնուամենայնիվ դրանք չէին կարող փոխարինել ուսման ծարավին: Իմ խնդրանքներից հետո շրջկոմի ու ՀԿԿ կենտկոմի Լենինականի գավառային կուսակցական կոմիտեի որոշմամբ 1931թ. աշնանը գործուղվեցի Թբիլիսի՝ Անդրկովկասյան կոմունիստական համալսարանում⁹⁴ սովորելու: Ընդունելության քննությունները հանձնեցի լավ գնահատականներով և 1934թ. մեծ առաջադիմությամբ ավարտեցի համալսարանը: Սովորելու ընթացքում նյութական կարիքի մեջ էի, որը հոգում էի ամառային արձակուրդների ժամանակ կոլտնտեսությունում մեքենատրակտորային կայանի քաղբաժնում աշխատելով և Թբիլիսիում երեք քաղխմբակներում պրոպագանդիստական⁹⁵ աշխատանք կատարելով, որտեղից ստանում էի լրացուցիչ աշխատավարձ: Պրոպագանդիստական աշխատանք կատարելիս շատ բան իմացա և սովորեցի Թբիլիսիի Վազեի կոմիտեի գործարանի, ծխախոտի ֆաբրիկայի, կայարանի երկաթգծի բանվորներից, որոնց հետ ընթացիկ պահին⁹⁶ պարապում էի կուսակցության պատմություն: Համալսարանի հայկական բաժնի առաջին կուրս ընդունվեց 43

հոգի, որոնցից համալսարանն ավարտեցին 21-ը, մյուսները դուրս մնացին քննություններից կտրվելու և զանազան այլ պատճառներով:

Սրտիս պարտքն եմ համարում գոնե մի փոքր խոսել այն դասախոսների մասին, որոնք մեր ուսման վրա մեծ ջանքեր թափեցին և հայրական հոգատարություն ցուցաբերեցին: Ինչպե՞ս կարելի է մոռանալ հայոց լեզվի ուսուցիչ Գարեգին Մելոյանի քրտնաջան աշխատանքը, կուսակցության պատմության դասախոս Ալեքսանդր Շախաուվարյանին, մարքսիզմ-լենինիզմի դասախոս, 1904թ-ից կոմունիստական կուսակցության անդամ Արշավիր Մելիքյանին⁹⁷, որի դասախոսությունից հետո ընդմիջման ժամանակ նույնիսկ ամենաթունդ ծխողներն էլ չէին թողնում իրենց տեղը, ՍՍՀՄ պատմության դասախոս Հովհաննես Պողոսյանին, որը հետագայում դարձավ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզիկայի և աշխարհագրության դասախոս Էլիբեկյանի անկեղծ ու ջանասեր աշխատանքը:

Անդրկովկասյան կոմունիստական համալսարանում սովորելու ժամանակ մտերիմ հարաբերությունների մեջ էի նույն կուրսի ուսանողներ Լևոն Բեգլարյանի, որը զոհվեց Հայրենական պատերազմում, Սարգիս Հարությունյանի, Աշոտ Ներկարարյանի, Սամվել Պետրոսյանի, Սամսոն Թափալյանի՝ Գորիսից, Վաղարշակ Ղազարյանի՝ Միսիանից, երկաթգծի նախկին բանվորուհի Վարսենիկ Գալստյանի հետ: Հիշատակված ընկերների մտերմությունը ջերմորեն մնում է սրտիս խորքում:

Անդրկովկասյան կոմունիստական համալսարանը ավարտելուց հետո 1934թ. ամռանը ՀԿԿ կենտկոմի որոշմամբ ուղարկվեցի Արթիկ՝ որպես կուսշրջկոմի արդյունաբերության գծով պատասխանատու հրահանգիչ: Տվյալ ժամանակաշրջանը լի էր դժվարություններով, գյուղում կոլեկտիվ տնտեսությունները տնտեսապես և կազմակերպչական առումով դեռևս ամրացված չէին: Խիստ զգացվում էր արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների ու սննդամթերքների պակասություն: Չնայած եղած դժվարություններին՝ բանվոր դասակարգը, կոլտնտեսային

գյուղացիությունն ու ինտելիգենցիան⁹⁸ աշխատում էին առանց դժգոհության և մեծ հավատ ունեին գալիքի նկատմամբ:

Այս շրջանում ես մեծ փորձ ձեռք բերեցի շրջանի կուսակցական կազմակերպության աշխատանքում և Արթիկտուֆի⁹⁹ բանվորական կոլեկտիվի հետ շփվելով: Չխնայեցի ուժերս շրջանի կոլտնտեսությունների և արդյունաբերության աշխատանքը բարելավելու համար: Կարճ ժամանակամիջոցում շրջկոմի հրահանգչի աշխատանքից հասա կուսշրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնին՝ դառնալով Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ¹⁰⁰ և ՀԿԿ Կենտկոմի անդամ: Արթիկի շրջանում իրենց լավագույն աշխատանքով աչքի էին ընկնում Տաճատ Վարդանյանը, որը հետագայում դարձավ Անիի կուսշրջկոմի քարտուղար, Սահակ Սահակյանը, որը դարձավ Արթիկի շրջկոմի առաջին քարտուղար, Համբարձում Սիսակյանը՝ երրորդ քարտուղար, որը գոհվեց Հայրենական մեծ պատերազմում, Արթիկտուֆի դիրեկտոր Արամայիս Դարբինյանը, շրջկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բարժնի վարիչ Փառնավազ Դարբինյանը, շրջանի ժողովրդական կրթության բաժնի վարիչ Սկրտիչ Սկրտչյանը, շրջսովետի գործկոմի նախագահ Սրապիոն Բաղդասարյանը, Փարոս գյուղի կոլտնտեսության նախագահ Աբրահամ Կուրդինյանը, շրջկոմի քարտուղար Համբարձում Սիսակյանը և շատ շատերը: Այստեղ աշխատելու ընթացքում ինձ համար ինչպես շրջանում, այնպես էլ հանրապետությունում ավելի լայն շրջապատ ստեղծվեց: Այդ առումով դարձյալ սովորելու կարիք զգացի, համառ և հետևողական մի շարք խնդրանքներից հետո ինձ հաջողվեց ՀԿԿ Կենտկոմի քարտուղար ընկեր Գուրգեն Գուկասյանի օժանդակությամբ 1941թ. ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ գործուղվել Մոսկվա՝ մեկ և կես տարով ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից Լենինյան կուրսերում¹⁰¹ սովորելու: Մոսկվայում շփվեցի ավելի կրթված ու հեղինակավոր մարդկանց հետ: Այստեղ շրջապատված էի հոգատարությամբ, ապրելու և սովորելու համար ստեղծված էին բոլոր տեսակի նպաստավոր պայմանները: Մեզ դասավանդում էին հայտնի գիտնականներ Յարոսլավսկին¹⁰²,

Միտինը, Կալբանովսկին, Ալեքսանդրովը¹⁰³, Սալդատովը և ուրիշներ: Ավելորդ չի լինի ասել, որ այստեղ անցան իմ կյանքի ամենալավ օրերը:

Ուսանողները մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու նպատակով ջանում էին ավելի լավ սովորել հասարակագիտական առարկաները, բայց, ցավոք, չհասանք մեր բուն նպատակին: Վեց ամիս սովորելուց հետո՝ 1941թ. հունիսին, գերմանաֆաշիստական¹⁰⁴ հորդաները ուխտադրուժ հարձակվեցին Խորհրդային Միության վրա, խորացան նրա սահմաններից ներս: Այսպես սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Բանի որ այդ ժամանակվա իրադարձությունները կապված են մեր անցած ճանապարհի հետ, անհրաժեշտ են համարում շեղվել բուն նյութից և առանձին կերպով նկարագրել սկսված պատերազմի մի քանի պահերը:

Պատերազմի առաջին օրերին գտնվում էի Մոսկվայում: Ֆաշիստական զորքերի հանկարծակի հարձակումը և պատերազմի առաջին շրջանում ֆաշիստների հաջողությունը, նրանց մուտքը Սովետական երկրի խորքը Մոսկվայում ժողովրդի մեջ մեծ իրարանցում էին առաջացրել, ինչն ինձ համար անսպասելի էր: Ժողովուրդը մի կայարանից հոսում էր մյուսը, մի մասը՝ մարդկանց ուղեկցելու, մի մասն էլ քաղաքից դուրս գալու համար:

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության անունից Ի.Վ.Ստալինը գերմանաֆաշիստական զորքերին ջախջախելու նպատակով դիմեց մեր երկրի ժողովուրդներին՝ կոչ անելով ամեն ինչ հարմարեցնել ռազմաճակատի պահանջներին: Խորհրդային Միության ժողովուրդները, մեծ հավատ ունենալով հաղթանակի նկատմամբ, ոտքի ելան՝ կրծքով պաշտպանելու հայրենիքը: Կուսակցության ու կառավարության կոչին իմ ընկերների հետ արձագանքեցի նաև ես: Ընկերներս էին Մամանդ Միաբանդովը¹⁰⁵, Սինոդ Սարգսյանը, Մուրեն Հովհաննիսյանը, Կուլինը և ուրիշներ: Մենք պատերազմի առաջին օրերին, թողնելով դպրոցը, գնացինք սովետական բանակ:

Այստեղ ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն, նկատի ունենալով, որ ուսանողները ռազմական գիտելիքների կարիք են զգում, բոլորիս ուղարկեց Մոսկվայի Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիա՝ ռազմական գիտելիքներ սովորելու: Ակադեմիան իր հերթին ուսանողներին ուղարկեց Մոսկվայից դեպի Մինսկ տանող Կուբինկա¹⁰⁶ անունով ճամբարը, որը գտնվում էր Մոսկվայից 60 կմ հեռավորության վրա: Այստեղ օրական 12-14 ժամ սովորում էինք ռազմագիտություն: Ֆաշիստների ինքնաթիռները օր ու գիշեր ռմբակոծում էին Կուբինկա ճամբարը: Մեր դիրքերը թաքնված էին Կուբինկայի խիտ անտառի մեջ: Ռմբակոծության ժամանակ պարտադիր կերպով մտնում էինք մարդու հասակի բարձրությամբ փորված դիրքերը, որոնք ծնկներից բարձր լցված էին ճահճային ջրերով:

Վաղ առավոտյան անտառի ծտերի ծվլոցին զուգակցվում էր թշնամու սավառնակներից ընկած ռումբերի ռռնոցը, մոլորված թռչունները օդում շարժվում էին, ինչպես ռումբի փոքրիկ պատառներ: Ինչպես տեսնում եք, այստեղ դրությունը մխիթարական չէր: Կառավարության որոշմամբ ուսանողությունը Կուբինկայից տեղափոխվեց Մոսկվա, այստեղից էլ մի քանի օր հետո ակադեմիան իր ուսանողներով փոխադրվեց Բաշկիրական Ավտոնոմ Հանրապետության Բելեբեյ¹⁰⁷ քաղաքը: Մեզ փոխադրում էին ապրանքատար վագոններով: Մոսկվայից Բելեբեյ ընկած ճանապարհը երկու-երեք օրվա փոխարեն անցանք տասնհինգ օրում: Գնացքներն աշխատում էին քարածուխով: Երկաթգիծը ծանրաբեռնված էր, ժամերով կանգնում էինք կայարաններում: Մոսկվայից դուրս գալու ճանապարհին ենթարկվեցինք թշնամու ինքնաթիռների ռմբակոծությանը, եղան մարդկային զոհեր: Վագոններում միայն նստելու հնարավորություն կար, մի կերպ նստած քնում էինք: Վերջապես հասանք Բելեբեյ, վագոններից ցած իջանք. ջերմաչափի սնդիկի սյունը ցույց էր տալիս 40-45 աստիճան ցուրտ: Հարավային տաք եղանակներին սովոր մարդու համար դժվար էր դիմանալ սիբիրյան սառնամանիքներին: Մակայն կյանքը պահանջում էր հաղթահարել բոլոր դժվարությունները և

սովորել ռազմական գիտելիքները: Ուսանողությունը այդպես էլ վարվեց:

Բելեբեյը շրջապատված էր հարուստ և խիտ անտառներով, այստեղ էր գտնվում ցարական Ռուսաստանի հսկա բերդը¹⁰⁸, որտեղ ներկայված են եղել ազատության համար պայքարող հեղափոխական շատ գործիչներ, որոնց մասին պատմում էին բնակիչները: Այստեղ մենք սովորեցինք դահուկային գործը: Բելեբեյում խիստ ձմեռը հետզհետե անցնում էր պատմության գիրկը. սառնամանիքներին փոխարինում էին զարնանային բուրավետ օրերը: Շինականը պատրաստվում էր վարելու կենդանացած գետինը: Սակայն մարդկանց սրտերը ալեկոծվում էին ռազմադաշտից ստացվող վատ լուրերից: 1941թ. գլխավոր հրամանատարության կարգադրությամբ մեզ ուղարկեցին Գրիմի զորահրամանատարության տրամադրության տակ: Մեր խմբում էին Արթուր Հարությունյանը (Մոսկվայից), Բարդուղ Սարգսյանը (Երևանից), Բենիամին Ստեփանյանը (Էջմիածնից) և ուրիշներ, որոնց անունները հիշողությունիցս դուրս են մնացել:

Բաշկիրիայի Բելեբեյից մինչև Կրասնոդար¹⁰⁹ մեկնեցինք մարդատար գնացքով: Կրասնոդարում ներկայացանք զինվորական կայազորի պետին և պահանջեցինք ինքնաթիռ հատկացնել Կերչ¹¹⁰ գնալու համար: Կայազորի պետը հրաժարվում էր մեր խմբին ինքնաթիռ հատկացնել՝ պատճառաբանելով, որ մեր զորքերը թողնում են Կերչ քաղաքը, հետևապես մեր գնալն անիմաստ էր: Կերչում հանդիպեցինք Սուրեն Հակոբյանին, որի հետ սովորել էի Թբիլիսիի կոմունիստական համալսարանում, Երևանից Կարապետ Քարամյանին և շատ ծանոթ ընկերների: Իսկապես, հետագա իրադարձություններից պարզվեց, որ մեր գնալը Կերչ անժամանակ և անմիտ էր: Ակադեմիայի կողմից մեր խմբի ավագ էր նշանակվել մայոր Արթուր Հարությունյանը: Թռիչքի ընթացքում գերմանական ինքնաթիռները շրջապատեցին մեզ: Մենք տեղ հասանք շնորհիվ ինքնաթիռի օդաչուի ջանքերի, որն ինքնաթիռը տարավ ցածրացած թռիչքով ու մեզ հասցրեց Կերչի

օղանավակայան: Այստեղ ընկանք թշնամու ավիացիայի ռմբակոծության տակ: Բախտի բերմամբ ոչ ոք չտուժեց:

Չնայած 1942թ. Կերչի թերակղզում¹¹¹ մեր զորքերի՝ թշնամու նկատմամբ ունեցած ռազմական գերակշռությանը՝ Դրիմի ռազմաճակատը երկար ժամանակ դոփում էր տեղում: Հարձակման անցնելով՝ թշնամին կարողացավ 44—րդ բանակի գոտում Սև ծովի երկարությամբ և ութ կմ խորությամբ ճեղքել մեր պաշտպանության գիծը¹¹²: Կերչի զորահրամանատարությունը (Կոզլով, Մեխլիս¹¹³, շտաբի պետ Վեչեն, 44—րդ բանակի հրամանատար Չեռնյակ, 47—րդ բանակի հրամանատար Կոլգակով), իմանալով, որ հակառակորդը անցնելու է հարձակման, չկարողացավ կազմակերպել մեր զորքերի վճռական հակահարվածը, ինչը ցույց տվեց զորահրամանատարության անձեռնհասությունը: Ինչպես Մովետական Միության մարշալ Վասիլևսկին¹¹⁴ է ասում. «**Կերչի հրամանապարտությունը չըմբռնեց ժամանակակից պայերազմի բնույթը**»:

Հրամանատարությունը, չկազմակերպելով մեր զորքերի հակահարձակումը, նաև չկարողացավ կազմակերպել մեր զորքերի նահանջը Տուրեցկի¹¹⁵ հողապատնեշի մյուս կողմը, որի պատճառով մեր զորքերը ունեցան մարդկային և ռազմական տեխնիկայի մեծ կորուստ:

Կերչ թերակղզու կորուստը ծանր դրության մեջ դրեց Սևաստոպոլը պաշտպանող մեր զորքերին: Հետագայում Սևաստոպոլի ազատագրումը մեզանից մեծ գոհեր խլեց: Այսպիսի պայմաններում Դրիմի զորահրամանատարությունը մեր խմբից Արթուր Հարությունյանին և ինձ նշանակեց ֆրոնտի¹¹⁶ շտաբի¹¹⁷ օպերատիվ խմբում կոմիսար: **Մեր պարտականությունն էր լինել զորքերի առաջավոր մասում, ուսումնասիրել տեղանքը, դասավորել զորամասերը, ռազմաճակատից ելք քաշված ու խուճապի մայրկված զինվորներից կազմել նոր զորախմբեր և լրացնել գործող զորամասերի շարքերը**: Օդից թշնամու սավառակները, իսկ ճակատից տանկերը և արկերի կրակը ոչ մի ժամ հանգիստ չէին տալիս. անընդմեջ ռմբակոծվում էինք: Չեմ կարող չնշել, որ Դրի-

մի հողը տարբեր ժամանակների և զանազան ժողովուրդների մշակութային¹¹⁸ հուշարձանների գանձարան է, բուրավետ այգիների երկրամաս, որը մարդկությանը պարգևում էր առողջություն: Սակայն այս պահին Ազովի¹¹⁹ և Սև¹²⁰ ծովերի միացման հատվածում քամու հորձանքներից ծվատված դրոշակի նման ծովի փրփրոտ ալիքները անվրդով համառությամբ մտրակում էին ծովեզրի ավազաշերտերը: Ծովափի ջուրը արյան գույն էր ստացել, գիշերները նեղուցի վրա փռվում էր մշուշի մութ պաստառը: Ծովը¹²¹ լցված էր դժբախտ մարդկանց դիակներով¹²²: Ծովափի ջուրն արյան գույն էր ստացել, ալիքները կռվում էին անհավասար եզրերի հետ, ահռելի հորձանքներով և գոռում-գոչյունով խփում ասպառաժոտ ափերին, փրփրում ու փակում ճանապարհը: Սիրելի՛ ընթերցող, այստեղ լինում էին այնպիսի բույներ, երբ մարդու սրտի ու դատողության փոխադարձ հարաբերությունը խզվում էր, և մարդն ինքն իրեն հաշիվ տալ չէր կարողանում: Ազովի և Սև ծովերի միացման հատվածում կար մի հինավուրց բերդ, որի պատերից թափված քարերից գոյացել էին մեծ քարակույտեր: Ինքնաթիռներից ընկած ռումբերից քարի բեկորները մարդկանց մարմիններից պոկված կտորների հետ, ինչպես ժայթքող հրաբուխ, բարձրանում էին օդ և կրկին թափվում գետնին: Չնայած ստեղծված իրադրությանը՝ Խորհրդային Միության քաջարի մարտիկները և հրամանատարները հերոսական մարտեր էին մղում գերմանաֆաշիստական զորքերի դեմ: Եղան շատ մարտիկներ, որոնք քրտինքի աղով ներծծված վերնաշապիկներով, զոհելով իրենց կյանքը, նռնակներ էին նետում ֆաշիստական տանկերի վրա և շարքից հանում դրանք՝ գոչելով՝ **Հանուն կոմունիստական կուսակցության՝, հանուն մեծ Սպալիկի՛**:

Պիտի հիշեն նաև այն, որ մայրը¹²³ Արթուր Հարությունյանի հետ, որ ներկայումս աշխատում է Մոսկվայում, կողք կողքի կանգնած, դիմադրում ու փակում էինք խուճապի մատնված առանձին զինվորների ճանապարհը, որոնցից կազմում էինք նոր խմբեր և տանում ռազմաճակատի առաջավոր գիծ: Ուշ երեկոյան՝ մութ ժամանակ, խուճապի մատնված բանակայիններից

մեզ վրա կրակ բացեցին, և գնդակը մտավ Հարությունյանի ոտքի թաթն ու ծակեց¹²⁴։ Ես հանեցի նրա երկարաճիտ կոշիկը, որը լցված էր արյունով, քինտով խնամքով փաթաթեցի վերքը և նավով ճանապարհեցի Կրասնոդար, իսկ ես շարունակեցի իմ աշխատանքը։

Կերչում կատաղի մարտեր էին գնում, թշնամին համառ էր, իսկ մեր հրամանատարների ապաշնորհության պատճառով մեր զորքերը ապահովված չէին փամփուշտներով և արկերով։ Մեր ավիացիան չէր կարողանում լավ ծածկել մեր զորքերի գործողությունները, թշնամու ավիացիան գործում էր ակտիվ և անընդմեջ, արդյունքը եղավ այն, որ սովետական զորքերը Կերչում 1942թ. գարնանը ունեցան մարդկային ու նյութատեխնիկական մեծ կորուստներ։

Կերչում ռազմաճակատի վիճակը ծանրանում էր. գերագույն հրամանատարությունը հրամայեց թողնել Կերչ քաղաքը։ Քանի որ նահանջը կատարվեց հրատապ և անկազմակերպ, զինվորներից շատերը մնացին գետնի տակ¹²⁵։ Կերչի Վոյկովի անվան գործարանի երկաթի հանքերում¹²⁶ չիմանալով, որ գերմանացիներն արդեն գրավել են Կերչը, և իրենք մնացել են թշնամու թիկունքում։ Ռազմաճակատի հրամանատարությունը արդեն տեղափոխվել էր Կերչի թերակղզուց։ Մեծ դժվարությամբ ինձ հաջողվեց 1942թ. մայիսի 20-ի լույս 21-ի գիշերը նավով Ազովի ծովի վրայով անցնել Կրիմսկ¹²⁷ բնակավայրը, որտեղ գտնվում էր հրամանատարության շտաբը։ ***Չորքերի եր քաշվելու պահին զինվորներից շարերը, չըմբռնելով վրանգը, փախարակներից նավեր էին պատրաստում, շարերն էլ մտնում էին փակառների մեջ ծովը անցնելու, գերմանացիների ձեռքը չընկնելու և սեփական կյանքը փրկելու համար, բայց ծովի գարնանային ալիքները խփելով փախարակների վրայից գլորում էին ուժասպառ մարդկանց և խեղդում ջրում։***

Մի քանի օր Կրիմսկում մնալուց հետո ռազմաճակատի շտաբի հետ փոխադրվեցինք Կրասնոդար։ Այստեղ գիշերը ինձ կանչեցին շտաբ և առաջարկեցին պատրաստվել ու առավոտյան

Մոսկվա մեկնել՝ Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիայում սովորելու նպատակով: Այստեղ դարձյալ ճանապարհիս քար ընկավ: Առավոտյան, երբ ներկայացա, ցույց տվեցին Գերագույն հրամանատարի հեռագիրը, որով հրամայված էր Անդրկովկասի բոլոր զորքերը շտապ ուղարկել անդրկովկասյան զորահրամանատարության տրամադրության տակ:

Թբիլիսիում, ներկայանալով անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը, ես աշխատանքի նշանակվեցի Երևանի 45-րդ բանակի քաղաքական բաժնում որպես ավագ տեսուչ, այստեղ էլ մնացի ծառայության մեջ մինչև 1944թ: Չորսցրումից հետո ՀԿԿ Կենտկոմի որոշմամբ աշխատել եմ Հայկոպում¹²⁸, «Արարատ» տրեստում և սովետական տնտեսությունում որպես դիրեկտոր:

Պատերազմը խանգարեց ուսումնա շարունակելուն: Միայն պատերազմի ավարտից հետո ընդունվեցի և ավարտեցի Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Հանգիստ խղճով կարող եմ ասել. «Որտեղ և ինչպիսի պայմաններում էլ աշխատել եմ, աչքի լույսի պես պաշտպանել եմ համաժողովրդական ունեցվածքը, իմ կյանքում երբեք անձնականիս համար հասարակության միջոցները չեմ օգտագործել»:

Ընտանիք կազմելիս պետք է հիշել Վահան Տերյանի¹²⁹ Միսկարյանի¹³⁰ ուղղած նամակներում հայտնած այն միտքը, որին ես կարոտ մնացի. «Քաղցր է ունենալ մի մարդ, որը կարող է հասկանալ քեզ, որի կրծքին կարող ես լալ կյանքիդ, չիրականացած երազանքներիդ, մոլորություններիդ ու հույսերիդ ողջ դառնությունը»¹³¹: Իհարկե, [շարունակում է Տերյանի միտքը Նվարդ Տերյանը] ոչ մի զարմանալի բան չկա, որ բանաստեղծը եկել է այն եզրակացության, որ «միայն կիևը կարող է լինել այդպիսի մտերիմ ընկեր, բայց ոչ, իհարկե, քաղքենի կիևը, այլ կիև-մարդը, իսելացի կիևը, կիև-ընկերը»:

Միբելի՛ հարազատներ և ընթերցողներ, այսքանով ավարտում եմ հասարակական-քաղաքական այն անցուդարձերի շարադր-

րանքը, որոնք այս կամ այն չափով առնչվում են մեր ընտանիքի պատմությանը:

Երբ նայում ես մարդկանց անցյալին, ներկային և գալիքին, նկատում ես, որ մարդկային կյանքը նման է Լատինական Ամերիկայում՝ Բրազիլիա-Արգենտինայի սահմանի վրա գտնվող Ի-գուասու ջրվեժին¹³², որը 72մ բարձրությունից մոլեգնությամբ դարեր շարունակ թափվում է ներքև: Կյանքի ամենամեծ հրաշագործը ժամանակն է. երբ մարդը տարիքն առնում է, նմանվում է արևի պարզ ճառագայթների փայլից խավարի մեջ սուզվողի: Ահավոր բան է հոգու խորքում լսել գնացողների կանչը, զգալ ծննդավայրի քչքչան աղբյուրների, սեզ լեռների, օջախից բարձրացող ծխի, մանկական վառ օրերի կարոտը: Երբ հիշում ես անցած տառապանքն ու ներկա նախանձելի ժամանակը, չես կարող հաշտվել այն մտքի հետ, թե թողնելու ես այս գեղեցիկ աշխարհը:

Մեր ընտանիքի այս փոքրիկ և հակիրճ պատմությունը թող մնա մեր հարազատ սերունդների հիշողության մեջ:

Սիրելի՛ ընթերցողներ, այս փոքրիկ հուշապատումը պահե՛ք ձեր սրտերում և ամեն ժամանակ հիշե՛ք ձեր պապերի ու հայրերի կրած տառապանքները, և թե ովքեր են եղել մեր թշնամիներն ու բարեկամները, մեր հարազատները:

Երբ գնամ հավիտյան քնի, որ բնական է, շատ գոհ եմ գնալու իմ թանկագին զավակներից՝ Բաբկենից, Լևոնից, Արայիկից և իմ սիրելի միակ դուստր Անահիտից¹³³: Ցանկանում եմ, որ նրանք ապրեն երկար-երկար տարիներ հաշտ ու խաղաղ: Մեր հետագա սերունդները շնորհալի գործ արած կլինեն, եթե շարունակեն գրել մեր ընտանիքի հետագա սերունդների պատմությունը:

22 դեկտեմբերի 1976թ.

Վերջարանի փոխարեն

Այս բաժնում բերում ենք Ա.Ա. Մակարյանի մահախոսականը, որը տպագրվել է «Խորհրդային Հայաստան» թերթում 1986թ. մայիսին մի խումբ ընկերների կողմից:

«Կյանքի 82-րդ տարում վախճանվեց 1926թ. ՍՄԿԿ անդամ, հանրապետական կարգի անհատական թոշակառու Ադասի Ալեքսանդրի Մակարյանը: Ա.Մակարյանը ծնվել է 1904թ. Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Ջաջուռ գյուղում՝ երկրագործի ընտանիքում: Տակավին պատանի՝ բատրակություն է արել: Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո նոր կյանք է սկսվում նաև Ա.Մակարյանի համար: Նա ընդունվում է ՀամԼԿԵՄ շարքերը, հաճախում բաներիտ դպրոց: Ջաջուռի կայարանի երկաթուղային բանվորը 1931թ. ընդունվում է Թբիլիսիի 26 կոմիսարների անվան անդրկովկասյան բարձրագույն գյուղատնտեսական դպրոցը և այն ավարտելուց հետո աշխատանքի է անցնում Արթիկի կուսշրջկոմում, սկզբում՝ որպես հրահանգիչ, հետո՝ երկրորդ քարտուղար, 1937-1941թթ.՝ առաջին քարտուղար: Այդ տարիներին նա ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, ՀՍՍՀ ԳԵրագույն սովետի առաջին գումարման դեպուտատ: Հետագա տարիներին սովորել է ՀամԿ(բ)Կ Կենտկոմին առընթեր լենինյան դասընթացներում, Վ.Ի.Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիայում:

Հայրենական պատերազմի տարիներին Ղրիմի և Կովկասի ռազմաճակատներում եղել է օպերատիվ խմբի անդամ, քաղբաժնի հրահանգիչ: Իր գործունեության հետագա տարիներին Ա.Մակարյանը աշխատել է Հայկոռայի վարչությունում որպես կազմ-հրահանգչական բաժնի պետ, Երևանի Լենինյան շրջսովետի գործկոմի նախագահի տեղակալ, «Արարատ» տրեստի կառավարչի տեղակալ: 1949-1962թթ. նա Էջմիածնի շրջանի Թաիրովի անվան սովխոզի դիրեկտորն էր, այնուհետև չորս տարի ղեկավարել է Աշտարակի շրջանի թիվ 38 սովխոզը: 1966-1985թթ. Ա.Մակարյանը ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության բույսե-

րի պաշտպանության գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտորի տեղակալն էր: Ա.Մակարյանի ծառայությունները գնահատվել են ըստ արժանվույն. նա պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով, մեդալներով, արժանացել պատվոգրերի:

Բարեխիղճ ու անձնվեր աշխատողի, լավ ընկերոջ պայծառ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում»:

Մի խումբ ընկերներ

Резюме

„Из истории нашей семьи” (Воспоминания Агаси Александровича Макаряна)

В книге представлен очередной том из серии „Пережившие Великий геноцид”, в котором к юбилею 100-летия Геноцида будут изданы воспоминания Агаси Александровича Макаряна „Из истории нашей семьи”. Воспоминания состоят из 69 печатных страниц и содержат важные сведения и факты об исторических событиях 1918-20 гг. и представляют масштабы этой страшной трагедии. Во время армяно-турецкой войны 1918г. Агаси Александровичу Макаряну было 14 лет. Едва избегнув смерти от голода, холода и резни 1920г. в городе Карсе, его семья обосновалась в селе Джаджур, неподалеку от города Гюмри-Александрополь. Мемуары были написаны в 1976г. На протяжении всей жизни Агаси Александрович Макарян пытается психологически преодолеть ужасы прошлого, но сделать это не только ему, но и другим, пережившим Великий геноцид, практически не удается.

Resume

“From the history of our family” (Memories of Aghasi A. Makaryan)

The book presents one of series of “ Those who have survived Great Genocide” where the memories of Aghas A. Makayan’s “From the history of our family” will be published for the 100th anniversary of Genocide. The memories consist of 69 printed pages and contain important information and facts about historical events of 1918-20 and presents the scales of that drastic tragedy. During the Armenian- Turkish war of 1918 Aghasi A. Makaryan was 14 years old. Barely escaping from hunger and cold of death of 1920, his family moved from Kars to Jajur and settled there (which is near Gyumri-Aleksandropol). The memoirs were written in 1976. Throughout his life Aghasi Makaryan has psychologically tried to overcome the horrors of the past, but it is not only for him , it is for the survivors of the Genocide as well, but unfortunately it is practically impossible.

Համառոտագրություններ և հապավումներ

- ադրբեջ.**-ադրբեջաներեն
անգլ.-անգլերեն
արբ.-արաբերեն
Արլ-Արևելյան
Արմ-Արևմտյան
բաներիտ-բանվոր երիտասարդների
բրբ.-բարբառային
գ.-գործ
գավկոմ-գավառային կոմիտե
գյուղկուլվարչություն-գյուղական կուլտուրայի վարչություն
գործկոմ-գործադիր կոմիտե
գր.-գրամ
ԵՀ-Երևանի համալսարանի
ԵՊՀ-Երևանի պետական համալսարան
թ.-թերթ
թրթ.-թուրքերեն
ԺՀԲ-Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան
լատ.-լատիներեն
լիկկայան-լիկվիդացիոն կայան
խոր-խորանարդ
Կենտկոմ-Կենտրոնական կոմիտե
կոմերիտմիություն-կոմերիտականների միություն, կոմունիստական երիտասարդական միություն
կուսշրջկոմ-կուսակցական շրջանային կոմիտե
հ.-հատոր, **հատ.**-հատորով
ՀԱԱ-Հայաստանի ազգային արխիվ
ՀԱԲ-Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան
ՀամԼ ԿԵՄ-Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդական միություն
ՀամԿ(Բ)Կ-Համամիութենական Կոմունիստական բոլշևիկյան կուսակցություն
Հայկոռպ-Հայաստանի կոռպերացիա
հզ.-հազար
ՀԿԿ-Հայաստանի կոմունիստական կուսակցություն
ՀՍՀ-Հայկական սովետական հանրազիտարան

ՀՍՍՀ-Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն

ՀՀԳԽ-Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն

ՀՀՀ-«Հայկական հարց» հանրագիտարան

հս-հյուսիս

հվ-հարավ

ՀՏԲ-Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան

ՀՅԹԻ-Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

ՄՄ-Մաշտոցի անվան Մատենադարան

շրջկոմ-շրջանային կոմիտե

շրջսովետ-շրջանային սովետ, շրջանային խորհուրդ

ռազմ.-ռազմական

ռուս.-ռուսերեն

ՍՄԿԿ-Սովետական Միության կոմունիստական կուսակցություն

ց.-ցուցակ

փխբ.-փոխաբերական իմաստ

քաղբաժին-քաղաքական բաժին

քաղխմբակ-քաղաքական խմբակ

քառ-քառակուսի

օսմ.-օսմանյան

ֆ.-ֆոնդ

БРЭС-Большой Российский энциклопедический словарь

БСЭ-Большая Советская Энциклопедия

гос.-государственное

Եր.-Երևան

Изд., изд.-издательство

М.-Москва

Ред.-редакция

СВЭ-Советская военная энциклопедия

т.-том

Ծանոթագրություններ

¹ *Գ.Յուլսէփեան, Կենսագրական նոթեր, Սահակ-Մեսրոպ, Գահիրե, 1945, տե՛ս Ա.Բ. Դարությունյան, Ս.Ա. Վարդանյան և ուրիշներ, Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը, Ներածական խոսք Սարգիս Դարությունյանի եր., ԳՅ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 2013, էջ 17-22:*

² 2013թ. Կունայրի պատմամշակութային արգելոց-թանգարան (ԿՊՍԱԹ):

³ Հուշապատումների այդպիսի վերլուծություն կատարել է Վ.Սվազյանը, ուստի և մենք առաջնորդվում ենք նրա առաջադրած սկզբունքներով և օրինաչափություններով: Տե՛ս Վ.Սվազյան, *Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը, եր., 2003, էջ 14:*

⁴ Տե՛ս Վ.Սվազյան, էջ 14:

⁵ Տե՛ս Վ.Սվազյան, էջ 15:

⁶ Տե՛ս Վ.Սվազյան, էջ 17:

⁷ Ջաջուռ, Շատջուր-գյուղ ԳՅ Ախուրյանի շրջանում, Գյումրի քաղաքից 9 կմ հարևար, բլրապատ վայրում, մախկինում Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում: 1831թ. ուներ 486, 1897թ.՝ 1517, 1926թ.՝ 797 հայ բնակիչ, որոնց նախնիների մի մասը եկել է հնուսից 1828թ.: Առաջին դարոցը բացվել է 1870թ.: 1995թ. մտել է Շիրակի մարզի մեջ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, բանջարաբուծությամբ: Համանուն ավանը երկաթուղային կայարանին կից է, Գյումրի-Վանաձոր երկաթգծի վրա, ԳՅ Ախուրյանի շրջանում, Ջաջուռ գյուղից 2-3 կմ հեռավորությամբ, մեղմաթեք հարթավայրում: Հիմնադրվել է 1928 թ.: 1897թ. ուներ 9, 1926՝ 46 հայ բնակիչ, որոնց նախնիները եկել էին Մուշից և Բասենից: Բնակչության զգալի մասը զբաղվում է երկաթուղու սպասարկմամբ: *ՀՏԲ, հ. IV, էջ 388-389:*

⁸ Տե՛ս «Обращение политического управления Крымского фронта, «К бойцам и командирам-армянам», февраль 1942 г.», *Мурадян В.А., Григорян К.Г., Григорян Р.А, Советская Армения в годы Великой Отечественной войны, (1941-1945), сборник документов и материалов, изд. АН АрмССР, Ер., 1975, с. 365-366.*

⁹ Բնագրում՝ Երվանդաշեն:

¹⁰ Բնագրում՝ Բագրավան:

¹¹ Բնագրում՝ Կիլիկիան:

¹² Բնագրում՝ 1826-29 թթ.:

¹³ Երևանի բերդը գրավելուց հետո ռուսական զորքերը շարունակեցին հարձակումը և գրավեցին Թավրիզը, Խոյը, Սալմաստի գավառները և մի քանի քաղաքներ: Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենշայ գյուղում 1828թ. փետրվարի 10-ին կնքվեց հաշտության պայմանագիր, որով Արևելյան Հայաստանը՝ Երևանի և Նախիջևանի խանությունները, Օրդուբադի գավառը, անցավ Ռուսաստանի տիրապետության տակ: Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հայերին իրավունք տրվեց գաղթելու և բնակություն հաստատելու Հայաստանում:

¹⁴ Ռուսաստանի հաջողությունները առավել մեծ էին Բալկանյան ռազմաճակատում: 1829թ. օգոստոսին ռուսական զորքերը հասնում են Կ.Պոլսի մատույցներին: Սուլթանի խնդրանքով սեպտեմբերի 2-ին կնքվում է հաշտության պայմանագիր, որով Սև ծովի արլ ափերը՝ Փոթի նավահանգըստով, Ախալցխան և Ախալքալաքը անցնում են Ռուսաստանին: Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերին թույլատրվում է անցնել Ռուսաստան: Եվրոպական տերությունների ճնշման ներքո Ռուսաստանը Թուրքիային վերադարձրեց Կարսը, Արդահանը, Էրզրումը, Մուշը, Բայազետը: Արմ Հայաստանը, չնչին բացառությամբ, մնաց օսմանյան տիրապետության տակ:

¹⁵ Հաջինագար, Հաճինագար, Կանո-գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի, ՀԽՍՀ Ախուրյանի շրջանում: ՀՏԲ, հ. 3, էջ 320: Լեռնական քաղաքից 8-9 կմ հս-արլ, բլրապատ վայրում: Կանո է վերանվանվել 3.1. 1995թ.: Անտառազուրկ է, ցուրտ կլիմայով: Գյուղում կան մրգատու և դեկորատիվ ծառեր: Խմելու ջուրը բերված է 4 կմ հեռավորությունից: Ունի բազալտներ: 1831թ. ուներ 414, 1897թ.՝ 1422, 1926թ.՝ 1290 հայ բնակիչ, որոնց նախնիների մի մասը այստեղ է եկել Մուշից XVIII դ. 70-ական թթ.: Ջբաղվում են հացահատիկի, կերային կուլտուրաների, ճակնդեղի մշակությամբ, պտղաբուծությամբ ու անասնապահությամբ: Գյուղի եկեղեցին, որ վերաշինվել է 1878թ., կոչվում է Ս. Աստվածածին: **ՀՏԲ, հ. 2, էջ 920:**

¹⁶ Ղոնաղռան, Շիրակ, Խոնախխրան, Կոնախկրան, Կոնաղկռան, Ղոնախկրան, Ղռան-գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի, ՀԽՍՀ Ախուրյանի շրջանում: **ՀՏԲ, հ. 3, էջ 320:** Գյուղրի քաղաքից մոտ 7 կմ հս-արլ, հարթավայրում: Անտառազուրկ է, ցուրտ կլիմայով, բավարար տեղումներով: Խմելու ջուրը բերված է 1,5 կմ հեռավորությունից: Ըստ ավանդության՝ այստեղ հայերը ոչնչացրել են իրենց տներում գիշերող պարսիկ զինվորներին, որովհետև պարսկերեն իմացող մի աղջիկ տեղեկացել էր, որ պարսիկ զինվորները մտադրվել էին դավադրաբար սպանել իրենց հյուրընկալողներին: Ղոնաղռան նշանակում է «հյուր սպանող»: Շիրակ է վերանվանվել 02.03.1940: 1831թ. ուներ 192, 1897թ.՝ 1125, 1926թ.՝ 1158 հայ բնակիչ: Ջբաղվում են հացահատիկի մշակությամբ, բանջարաբուծությամբ, ճակնդեղագործությամբ: Հիմնադրվել է XVIII դ. վերջին Կարսի շրջանի Ենիքեյ, Ջանին Սազրա և Ղարախան գյուղերից եկած հայերի կողմից: Ունի Ս.Հակոբ եկեղեցի, Ս. Մինաս անունով մատուռ: Եկեղեցում պահվում է «Պապ» անունով մի ձեռագիր Ավետարան: Գյուղի դպրոցը հիմնվել է XIX դ. վերջին: Այժմ մտնում է Շիրակի մարզի մեջ: **ՀՏԲ, հ. 4, էջ 130:**

¹⁷ Արխավալի Երոորդ, Առքավալի, Արքավալի, Արքավելի, Արիխավալի, Արքավալի Մյուս, Արխավալի Նոր, Ֆարմասոնի Արխավալի, Լեռնուտ-գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի, ՀԽՍՀ Ախուրյանի շրջանի հս-արլ կողմում: Շիրակի լեռնաշղթայի փեշերին: Լեռնուտ է վերանվանվել 1967թ. հոկտեմբերի 21-ին: Լեռնականից 9 կմ հս-արլ, բլրապատ, կանաչապատ վայրում: Կլիման ցուրտ է, տեղումները՝ բավարար: Առանձնատները քարաշեն են, հարմարավետ: Խմելու ջուրը բերված է մոտակա աղբյուրից: 1831թ. ուներ 221, 1897թ.՝ 592, 1926թ.՝ 299 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել էին Արմ հայաստանի հնուսի գավառակի Խաչալույս գյուղից 1829-30թթ.: Լեռնուտ-ցիները մինչև XIX դ. պահպանում էին այնպիսի գաղափարներ ու սովո-

րույթներ, որոնք շատ բանով մոտ էին միջնադարյան թոնդրակեցիներին: Նրանց գաղափարները շարադրված են «Բանալի ճշմարտության» ձեռագրում, որը պահպանվում է ՄՍ-ում: Ունի մի անշուք, կանգուն եկեղեցի, մոտակայքում կան հին ամրոցի (բերդի) ավերակներ: **ՉՏԲ, հ. 1, էջ 447, հ. 2, էջ 580:**

¹⁸ Սարիյար Սարիար Մեծ, Սարալ, Սարըյար, Սարիալ Մեծ, Սարիար, Սարիյառ, Սարյար Մեծ-գյուղ Գ Շիրակի մարզում (04.12.1995թ.) նախկին Ախուրյանի շրջանում, Գյումրի քաղաքից 10-12 կմ հս-արլ, թեք կանաչապատ հարթավայրում: Զուրը բերվում է 3 կմ հեռավորությունից: 1831թ. ուներ 217, 1873թ.՝ 476, 1897թ.՝ 609, 1926թ.՝ 527 հայ բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Արմ Հայաստանի Բասենի շրջանի գյուղերից: Զբաղվում են անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ս. Նշան եկեղեցուն մինչև XIX դ. կեսերը պահվում էին մի քանի ձեռագրեր: Մեկը գրված էր 1501թ. Հաղպատի միաբան Վարդան աբեղայի ձեռքով, մյուսը 1646թ. Նորոգել է Հակոբ երեցը, իսկ երրորդը Ավետարան էր՝ գրված Երուսաղեմում, գրիչ՝ Սարգիս վարդապետ: Գյուղից 2 կմ հս-արմ կա գյուղատեղի: Պահպանվել է այստեղ ընդօրինակված մի հայերեն ձեռագիր: **ՉՏԲ, հ. 4, էջ 531-532:** Սարիար Փոքր, Սայրիար Փոքր, Սարիալ Փոքր, Սարիար Փոկր-գյուղ Գ Ղշոցքի շրջանում, Ղուկասյան գյուղից 14 կմ հվ-արլ: Խմելու ջուրը բերված է 2 կմ հեռավորությունից: 1873թ. ուներ 280, 1897թ.՝ 384, 1926թ.՝ 255 բնակիչ: Միավորված էր Բաշգյուղի տնտեսությանը: **ՉՏԲ, հ. 4, էջ 532:**

¹⁹ Աղբիլխա, Աղբիլխե, Աղյուլի, Կրաշեն-գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի, ՀԽՍՀ Ախուրյանի շրջանում, Ախուրյան շրջկենտրոնից 18 կմ հս-արլ, Շիրակի լեռնաշղթայի հվ փեշերին: Կրաշեն է վերանվանվել 7.12.1945թ.: 1831թ. ուներ 219, 1897թ.՝ 614, 1926թ.՝ 279 բնակիչ: Գյուղը հիմնադրել են Էրզրումի նահանգի Պգտի-Տուր գյուղից և Պարսկաստանից 1820-ական թթ. գաղթածները: XIX դ. վերջերին ուներ Ս. Աստվածածին եկեղեցի (կառուցված 1859թ.) և ուսումնարան: **ՉՏԲ, հ. 1, էջ 203, հ. 3, էջ 250:**

²⁰ Ջաջուռ, Դուգբենդ-գետակ ԳԳ-ում, Արաքսի ավազանում, նրա ձախակողմյան Ախուրյան վտակի ձախ Կարկաչան օժանդակի մեջ է թափվում աջ կողմից: Երկարությունը՝ 34 կմ, ավազանը՝ 393 կմ²: Սկիզբ է առնում Շիրակի լեռնաշղթայից: Ռեժիմը խիստ անկանոն է, սելավային: **ՉՏԲ, հ. IV, էջ 388-389:**

²¹ Ընտանիք:

²² Խոզլի, Գրգ-Ալի, Խոզ Ալի, Կոզլի, Կոզլու, Քոզլի, Քոզլու-գյուղ Արմ Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գավառում, Խնուսի գավառակում, Խնուսից մոտ 20 կմ հվ-արլ, Խնուսի գետի ձախակողմյան վտակներից մեկի աջ օժանդակի ափին, Սպիտակ կամ Դեղթափ կոչվող լեռան լանջերին: Խնուսի դաշտի նշանավոր գյուղերից էր: Ըստ ավանդության՝ հնում գյուղի մոտի անտառի վայրի խոզերը գալիս հավաքվում էին այստեղ, որից էլ ստացել է խոզ+լի անվանումը: Թուրքերը և քրդերը ստուգաբանել են Խոզ (խոզի նմանվող) Ալի կամ Գրգ Ալի: Գյուղի հվ-արմ կողմում լայնամիստ բլրի վրա, կար ընդարձակ ծառաստան: XIX դ. վերջին մոտ 200 տուն ունեցող բարգավաճ գյուղ էր: 1905թ. ուներ 84 տուն, 1909թ.՝ 125 տուն, որից 120-ը՝ հայ, 5-ը՝ այլազգի, զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Ուներ քարակերտ եկեղեցի, վարժարան, մագաղաթյա Ավետարան: Բնակիչները հայրենասեր էին: 1915թ. ենթարկվել է կոտորածի և

բռնագաղթի: **ՉՏԲ, հ. 2, էջ 761:** Խոզլի-գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում: Այժմ՝ Կուզիքենդ, ՉՍՄՂ Ամասիայի շրջանում: **ՉՏԲ, հ. 2, էջ 761:**

²³ Ռուսական կառավարությունը Կարսի նահանգում առաջին անգամ վիճակագրություն է անցկացրել 1897թ., այս վիճակագրական տվյալների արդյունքները հրատարակվել են 1900թ. Ս.Պետերբուրգում երկու ընդարձակ հատորով, Ն.Ա. Տրոյնիցկիի աշխատանքով: Ըստ այդ վիճակագրության Կարսի նահանգում այդ պահին բնակվում էր 71123 լուսավորչական և 1844 կաթոլիկ հայ: Ընդամենը՝ 72967 հայ, այս թվի մեջ մտած չեն հայ բողոքականները: **Գեորգ Մեսրոպ, Չայաստան, Աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական և մշակութային տեսակետներով, Իլյասցուած Ազգ. Խորհրդակցական ժողովի «Փաստաթուղթերու Յանձնախումբ»-են, ԿՊՈլիս, 1919, էջ 68-69:**

²⁴ Անդրկովկասում երկաթուղային շինարարությունը սկսվեց XIX դ. 60-ական թթ. և շարունակվեց գրեթե մինչև Առաջին աշխարհամարտը: 1883թ. սկսեցին գործել Բաբու-Թիֆլիս-Բաբում, իսկ 1899թ. գործարկվեցին Թիֆլիս-Ալեքսանդրապոլ, Ալեքսանդրապոլ-Կարս-Սարիղամիշ երկաթուղագծերը: 1901թ. Ալեքսանդրապոլը կապվեց Երևանի հետ: Անցկացվեցին նաև խճուղային ճանապարհներ:

²⁵ Ենովքի կնոջ անունը Արաքսյա է:

²⁶ Աղբուլաղ անունով Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում կա երկու գյուղ, ՉՍՄՂ Սպիտակի և Անիի շրջաններում: Գյուղերն այժմ հայտնի են Լուսաղբյուր անվամբ: **ՉՏԲ, հ. 1, էջ 166:** Լուսաղբյուր, Սվանվերդի, Սուֆա, Սուֆանվերդի-գյուղ ՉՍՄՂ Անիի շրջանում, նրա հս-արմ կողմում: Վերանվանվել է 03.02.1947թ., տեղավորված է ալիքավորված գեղատեսիլ հարթավայրում: Կլիման բարեխառն է, տեղումները՝ սակավ: Ապահովված է խմելու ջրով: Շրջակայքում տարածվում են արգավանդ հողատարածություններ, կրաքարի, պեմզայի, սև տուֆի, ավազի ու բազալտի պաշարներ: 1831թ. ուներ 225, 1897թ.՝ 1128, 1926թ.՝ 693 բնակիչ, նախնիները եկել են Արմ Չայաստանի Մուշի և Բասենի գավառներից (1829-30թթ.), Կարսի շրջանից (1878թ.) և այլ տեղերից 1915-18թթ.: Գյուղից քիչ հեռու գտնվում են Մըղդսոց և Սարի Ջալալ գյուղատեղիները, որտեղ նշմարվում են տների ու գերեզմանների հետքերը: Լուսաղբյուր, Աղբուլաղ-գյուղ ՉՍՄՂ Սպիտակի շրջանում, նրա արմ կողմում, Լենինական-Կիրովական երկաթուղու ծախ կողմում, Սպիտակ քաղաքից մոտ 16 կմ արմ: Վերանվանվել է 26.04.1946թ.: Տեղադրված է գեղատեսիլ, թեթև և արգավանդ հարթության վրա: Խմելու ջուրը բերված է 3 կմ հեռավորությունից: 1831թ. ուներ 152, 1897թ.՝ 1210, 1926թ.՝ 941 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Արմ Չայաստանի Բասենի, Մուշի, Վանի շրջանների գյուղերից 1829-30 թթ.: Գյուղում կա կիսավեր, անշուք եկեղեցի: Ճանդար կոչվող համդամասում կա գյուղատեղի, որտեղ նշմարվում են տների, ձիթհանքի, գերեզմանների հետքեր: **ՉՏԲ, հ. 2, էջ 608:**

²⁷ Շիրակի լեռնաշղթա, Եսաղուլի լեռնաշղթա, Եսաուլի լեռնաշղթա, Իլիի լեռնաշղթա, Յասաղուլի լեռնաշղթա-լեռնաշղթա Փոքր Կովկաս լեռնահամակարգում, Գ իս-արմ մասում: Չգվում է արմ-արլ Ախուրյանի հովտից մինչև Չիչկանի ստորին հոսանքը: Երկարությունը՝ 33 կմ, առավելագույն բարձ-

րությունը՝ 2556 մ (եղնասար): Ծալքաբեկորային է՝ կազմված կրաքարերից, անդեզիտադաջիտներից, տուֆակոնգլոմերատներից: Հս լանջերը մեղմաթեք են, հվ գառիթափ, որտեղ զարգացած են սելավային երևույթներ: Բուսական ծածկը տափաստանային է: **ՉՏԲ, հ. 4, էջ 132**: Սկո քաղոնը հավանաբար Շիրակի լեռնաշղթայի լեռներից մեկն է, ենթադրում ենք, որ տեղադրվում է «Ջարդի ձոր» կոչված վայրում:

²⁸ Գեղյուկ, Գյաղուկ, Գեյղուկ-սատանա, չարք բառից: Ժողովրդական լեզվով այսպես է մինչ օրս անվանվում Ջաջուռի լեռնանցքի մի հատվածը:

²⁹ Ըստ դատեր և թռնուհու հայտնած տեղեկությունների՝ Աղասին սիրում էր առավոտյան ժամը վեցին դուրս գալ Ջաջուռ գյուղի հայրական տնից և ոտքով հասնել Ջարդի ձոր. «*Գնացել էի Ջարդի ձոր, ջուրը խմեցի, եկա*», քացատրում էր նա իր երկար բացակայության պատճառը: Սիրում էր, բնությունը, բույսերը, ծաղիկները, անկաշառ էր, աշխատասեր, պետությանը և գաղափարին նվիրված, համեստ ու անչափ բարի. «*Մարդը մարդ լինի, հանգիստ ապրի*», - ասում էր վերապրածը զավակներին: Ուներ նուրբ հոգի և արտասվում էր, երբ Անահիտը սկսում էր երգել: Թշակի անցնելուց հետո մինչև 81 տարեկան զբաղեցրել է զանազան բարձր պաշտոններ, ապա զբաղվել երկրագործությամբ:

³⁰ Նվազագույն:

³¹ Մամաշ, Մամիշ, Մամիչ-գյուղ Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքից մոտ 22 կմ հս էր, լեռից հվ-արմ: 1907թ. ուներ 299 բնակիչ: **ՉՏԲ, հ. 3, էջ 666**:

³² Փետրվարյան հեղափոխությունից հետո բոլշևիկները Վ.Լենինի գլխավորությամբ խնդիր դրեցին զինված ապստամբության միջոցով տապալելու ժամանակավոր կառավարությունը և իշխանությունը վերցնելու իրենց ձեռքը: Դրան հասնելու համար նրանք լայն քարոզչություն ծավալեցին՝ ժողովրդական զանգվածներին հուզող հաշտության, հողի, հացի, աշխատանքի մասին քարոզելով, և մեծամասնություն ստացան երկրի մի շարք խոշոր քաղաքների խորհուրդներում: 1917թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7) նրանք մայրաքաղաք Պետրոգրադում (Սանկտ Պետերբուրգ) զինված հեղաշրջում կատարեցին և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը՝ վերջ տալով ժամանակավոր կառավարությանը և ձախողելով ժամանակավոր կառավարության հրավիրումը:

³³ Керенский Александр Федорович (22.4.1881 г. Симбирск-11.6.1970 г. Нью-Йорк) русский политический деятель, глава Временного правительства. Из дворян. Окончил юридический факультет Петербургского университета (1904), был адвокатом. Депутат 4-ой Государственной думы (1912-17 гг.), возглавлял фракцию трудовиков. 1914-18 гг. оборонец. После Февральской революции 1917г. заместитель председателя Петроградского совета, член Временной комиссии Государственной думы. С марта 1917 г. эсер. Инициатор Июльского наступления 1917 г. на фронте. В день Октябрьского вооруженного восстания в Петрограде 25 октября бежал из столицы на фронт и возглавил Керенского-Краснова мятеж 1917 г., 1 ноября после разгрома мятежа бежал на Дон. В 1918 г.

эмигрировал во Францию, с 1940 жил в США, редактировал газету “Дни” (1922-32 гг.). *БСЭ, т. 12, М. 1974, с. 58.*

³⁴ Временное правительство (2 (15) марта-25 октября (7 ноября) 1917г.)- высший исполнительно-распорядительный и законодательный орган государственной власти в России в период между Февральской и Октябрьской революциями. Был создан по соглашению между Временным комитетом Государственной думы и исполкомом Петроградского Совета рабочих и солдатских депутатов. ru.wikipedia.org. 1917թ. փետրվարին Ռուսաստանում տապալվեց ինքնակալությունը: Դրանով վերջ տրվեց Ռոմանովների արքայատոհմի 300-ամյա տիրապետությանը: Երկրում հաստատվեց երկիշխանություն՝ Սովետներ և ժամանակավոր կառավարություն: Իրավական իշխանությունը գտնվում էր ժամանակավոր կառավարության ձեռքում: Դրա կողքին մեծ դերակատարություն ուներ Պետրոգրադի խորհուրդը: Երկիրը պատվեց բանվորագյուղացիական խորհուրդների լայն ցանցով: Դրանք կազմակերպվեցին նաև Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում: Փետրվարյան հեղափոխությամբ հիմնովին փոխվեց իրադրությունը Անդրկովկասում: Մարտի սկզբներին լուծարվեց Կովկասի փոխարքայությունը: Այստեղ հիմնվեց ժամանակավոր կառավարության տեղական գործադիր իշխանության մարմինը՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն՝ ՕՁաԿոմ-ը: *Տես Արмянский вопрос, էջ 251-252:*

³⁵ Հոկտեմբերյան հեղաշրջման հաղթանակով սկսվում է Ռուսաստանի խորհրդային պատմության ժամանակաշրջանը: Հեղափոխության հաղթանակից հետո ընդունվեցին հաշտության և հողի մասին դեկրետներ (օրենք), կազմվեց բանվորագյուղացիական կառավարություն՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ Վ.Ի.Լենինի գլխավորությամբ: Հոկտեմբերյան հեղափոխությունը Անդրկովկասում ընդունվեց ոչ միանշանակ: Անդրկովկասի քաղաքական ազդեցիկ շրջանները հիմնականում բացասաբար ընդունեցին Հոկտեմբերյան հեղաշրջումը: 1917թ. նոյեմբերի 15-ին երկրամասի ամենաազդեցիկ երեք կուսակցությունները՝ վրաց մենշևիկները, հայ դաշնակցականները և ադրբեջանական մուսաֆաթականները, հեղինակագրված ՕՁաԿոմ-ի փոխարեն ստեղծեցին իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատ, որը ժամանակավորապես ստանձնեց երկրամասի կառավարումը: Գործադիր մարմնին զուգահեռ ստեղծվեց օրենսդիրը՝ Անդրկովկասյան սեյմը, որը վարում էր Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու քաղաքականություն: Այն ձևավորվեց բազմակուսակցական սկզբունքով 1918թ. փետրվարին: *Տես Արмянский вопрос, էջ 178:*

³⁶ Меньшевики-представители политического течения (фракция) в РСДРП, с 1917-самостоятельная политическая партия. Понятие возникло на 2-м съезде РСД (1903), когда часть делегатов осталась в меньшинстве по вопросам о выборах в руководящие органы партии. Лидеры и идеологи: Л.Мартов, А.С.Мартинов, П.Б.Аксельрод, Г.В.Плеханов-выступали против строгого централизма в работе партии и наделения ЦК большими полномочиями. В Революцию 1905-07 считали, что пролетариат должен действовать в коалиции с либеральной буржуазией против самодержавия, отрицали революционный потенциал крестьянст-

ва, уделяли большое внимание легальным формам работы в массах. После Февральской революции поддерживали Временное правительство. Октябрьскую революцию не приняли, считая, что Россия не созрела для социализма, полагали, что большевики, осознав неудачу предпринятого социалистического эксперимента, отступят и будут стремиться к соглашению с другими партиями. В Гражданскую войну отдельные деятели партии участвовали в антибольшевистских правительствах, в целом выступали против интервенции стран Антанты и поддерживаемых ими сил контрреволюции. В 1924 меньшевизм как организованная сила прекратил существование на территории СССР. В марте 1931 состоялся фальсифицированный судебный процесс над меньшевистским «Союзным бюро ЦК РСДРП», члены которого (14 человек) были обвинены в шпионаже и вредительстве и приговорены к различным срокам лишения свободы. *БРЭС, с. 932.*

³⁷ Գրականության մեջ հանդիպում է նաև *մուսավաթական* ձևով: *Մուսավաթ՝ աղբբեջ. հավասարություն*, աղբբեջ. բուրժուաազայնական կուսակցություն: Ստեղծվել է Բաքվում, 1911թ. «Մահմեդական դեմոկրատական մուսավաթ կուսակցություն» անվամբ: Հիմնադիրներն էին Մ. Ռասուլ-զադեն, Գ. Շարիֆ-զադեն: Ծրագրի հիմքում ընկած են պանթյուրքիզմը և պանիսլամիզմը: 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո «Մուսավաթը» միավորվեց «Ֆեդերալիստների թուրքական կուսակցության» հետ, հոկտեմբերին՝ ռաջաին համագումարում, աննշան փոփոխություններով ընդունեց նրա ծրագիրը և կոչվեց «*Ֆեդերալիստ մուսավաթականների թուրքական դեմոկրատական կուսակցություն*»: Գլխավոր օրգանը՝ «*Խսիքլար*»՝ «*Անկախություն*» թերթն էր: 1917թ. հոկտեմբերի 31-ին (նոյեմբերի 13) Բաքվում սովետական իշխանության հաստատումից հետո նրանք 1918թ. մարտի 18-ին խռովություն բարձրացրին, սակայն ջախջախվեցին: Կուսակցության ներկայացուցիչները մտան Անդրկովկասյան հատուկ կոմիտեի, Անդրկովկասյան կոմիսարիատի, Անդրկովկասյան սեյմի մեջ: Մասնակցեցին Սովետական Ռուսաստանից Անդրկովկասի անջատմանը: 1918թ. մայիսին նրանք Թիֆլիսում կազմեցին իրենց կառավարությունը և մայիսի 27-ին Ադրբեջանը հռչակեցին անկախ: Հունիսին, հաստատվելով Գյանջայում, մուսավաթական կառավարությունը անգլիացիների աջակցությամբ շարունակեց պայքարը: 1918թ. սեպտեմբերի 15-ին Բաքվում սովետական իշխանության տապալումից և թուրքերի կողմից անգլիացիներին դուրս քշելուց հետո իշխանությունը ձևականորեն անցավ մուսավաթականներին, փաստորեն հաստատվեց թուրքական ռազմական դիկտատուրա: Թուրքիայի կապիտուլյացիայից հետո՝ նոյեմբերի 17-ին, անգլիացիները նորից մտան Բաքու: Մուսավաթականները, հենվելով նրանց վրա, լիկվիդացրին 1918թ. Բաքվի կոմունայի սոցիալիստական միջոցառումները, հաստատեցին տեռորի ռեժիմ: Նրանք սրեցին հարաբերությունները դաշնակցական Հայաստանի հետ և զինված ուժերի 3/4-ը կենտրոնացրին Հայաստանի հետ սահմանակից շրջաններում: Հայերի ջարդեր եղան Ադրբեջանում, 1920թ. ավերվեց Շուշին: 1919թ. անգլիացիները հեռացան Ադրբեջանից: 1920թ. ապրիլին տապալվեց մուսավաթական վարչակարգը: Ադրբեջանում սովետական իշխանության

հաստատումից հետո «Մուսավաթը» դադարեց գոյություն ունենալուց: **ՀՄԴ, հ. 8, եր., 1982, էջ 88:**

Վերապրածներից Յ.Տոնոյանը հիշում է. «Յետո հայտնի դարձավ, որ թուրքերը նորից հարձակվել են հայերի վրա և առաջ են շարժվում դեպի Ալեքսանդրապոլ: Հայ ժողովրդին սպառնում էր նոր կոտորած: Հայերը սկսեցին անկազմակերպ գաղթել տարբեր ուղղություններով: Մեր ընտանիքը գաղթեց դեպի Գորիս քաղաք, քանի որ Վրաստանի ճանապարհը փակ էր: Հասանք Գորիս, որտեղ հավաքված էին տասնյակ հազարավոր հայ գաղթականներ: Որոշ ժամանակ անց սկսվեցին սովն ու հիվանդությունները, որոնք գերանդու նման հնձում էին հազարավոր հայ գաղթականների կյանքը: Շատերը իրենց կյանքը փրկելու համար գաղթում էին դեպի Ադրբեջան: Բայց մուսավաթական սև ուժերը, որոնք սերտ կապի մեջ էին արմատում թուրք կառավարողների հետ, ձորերում ու կիրճերում կոտորում էին հայերին և թույլ չէին տալիս փրկվել: Հայերը, ստանալով այդ վատ լուրը, որոշեցին փախչել դեպի Պարսկաստան: 1918-ի թե որ ամիսն էր, չեմ հիշում, գաղթականությունը բռնեց Պարսկաստան տանող ճանապարհը: Մեր ընտանիքը գտնվում էր քարավանի վերջում: Հայ գաղթականությունը առաջին կամուրջը անցավ ու պետք է հասներ երկրորդ կամուրջին, այնտեղից նոր անցներ Պարսկաստան: Երբ գաղթականությունը գտնվում էր երկու կամուրջների միջև, հանկարծ ճանապարհի ձախ բարձունքում հայտնվեցին մեծ թվով ադրբեջանցիներ, որոնք փափախները հանած թափահարում էին և հետն էլ ասում. «*Գիդեյն յուլն աչխրդ*» (Գնացե՛ք, ճանապարհը բաց է): Գաղթականները, որ տեղյակ չէին, թե ադրբեջանական մուսավաթականները ինչ ծուղակ էին պատրաստել իրենց համար, ճանապարհը շարունակեցին: Դրանից հետո չէր անցել մոտ կես ժամ, ադրբեջանական մուսավաթական սև ուժերը հարձակվեցին անզեն գաղթականության վրա և սկսեցին կոտորել անպաշտպան հայերին: Կենդանի մնացած հայերը ետ փախան դեպի Գորիսի յայլանները: Այդ օրը հազարավոր հայեր զոհվեցին: Գաղթականության մեջ երկար ժամանակ չէր դադարում լացն ու կոծը: Այդ դեպքից մի քանի օր հետո լուր տարածվեց, թե Անդրանիկ զորավարը պետք է գա կոտորածի պատճառն իմանալու և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու: Լավ հիշում եմ՝ Անդրանիկ զորավարը եկավ, ծանոթացավ կոտորածի մանրամասնություններին և հարձակվեց մուսավաթական զինվորների վրա, որոնք կենտրոնացված էին մի շարք գյուղերում: Ջարդելով այդ ուժերը գաղթականությանը տեղավորեց այդ գյուղերում: Մեր ընտանիքը տեղավորվեց Շաքի գյուղում»: **Ի.Է.Ավագյան, Հուշեր անցյալից, Հայրապետ Տոնոյանի հիշողությունները, Մեծ եղեռն վերապրածները, Գյումրի, Էդրոպոլ, 2006թ., էջ 16-17:**

³⁸ «Հայ Յեղափոխական դաշնակցություն» ազգային կուսակցությունը ստեղծվել է 1890թ. Թիֆլիսում տարբեր հեղափոխական կազմակերպությունների միավորումից Զր. Միքայելյանի ղեկավարած հայ նարոդնիկների խմբի հետ, պաշտոնաթերթը «*Դրոշակն*» է: 1890թ. սեպտեմբերին լույս տեսավ նրա «*Մանիֆեստը*», որտեղ գործունեության նպատակը հայտարարվում էր «*Թուրքաց Հայաստանի քաղաքական ազատությունը*»: Հիմնադիրներից են նաև Ս.Ջավարյանը, Ռոստոմը (Ս.Ջոռյան): Տե՛ս **Армянский вопрос, с. 156-159:**

³⁹ Խախտելով 1917-ի դեկտեմբերի 18-ին կնքված Երզնիցյանի զինադադարը՝ թուրքական բանակը «մահմեդական բնակչության պաշտպանության» պատրվակի տակ ռազմարշավ կազմակերպեց դեպի Կովկաս: Թուրքական արշավող բանակի ճնշման ներքո հայերը աստիճանաբար հետ էին քաշվում Արևմտյան Հայաստանից: Կովկասյան ճակատի քայքայումով վտանգի տակ էր ընկնում ողջ Արևելյան Հայաստանը: 1918-ի հուլիսի սկզբին Հայաստանի վզին փաթաթվեց Բաթումի տիրապետչական պայմանագիրը, որը փաստորեն Հայաստանը վեր էր ածում օկուպացված երկրի: Ողջ Արևմտյան Հայաստանը վերանվաճվեց թուրքական զորքերի կողմից, իսկ Արևելյան Հայաստանը սեղմվեց 11 հազ. քառ. կմ ունեցող սահմանների մեջ: 1918-ի մայիսի 28-ին Հայաստանի անկախության հռչակումը նոր մտահոգություններ պատճառեց քրդերին: Թեև հայկական փոքրիկ հանրապետությունը «կը կծկվեր իր նեղ մորթին մեջ... քյուրտերը, սակայն, սկսան մտածել, որ անկախ Հայաստան մը գոյություն ունի, փոքր կամ մեծ, այդ մանուկը վաղը կրնա մեծնալ»: **Վահան Բայրուրյան, Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, 77 ՉԱԱ արևելագիտության հիմնախոսուտ, «Ջանգալ-97» հրատարակչություն, Երևան, 2001, էջ 7-11:**

⁴⁰ Բաքու-Ադրբեյջանի մայրաքաղաքն է (պարսկերեն՝ բադ կուբե բառից՝ քամահարված): Տեղադրված է Ապշերոնյան թերակղզում: Առաջին անգամ հիշատակվել է Վդ. աղբյուրներում: 1723թ. գրավել է Պետրոս Մեծը, վերջնականապես միացել է Ռուսաստանին 1806թ.: 1897-1907 թթ. կառուցվել է Բաքու-Բաթում նավթամուղը: XIX դ. վերջերից դարձել է Անդրկովկասի բանվոր դասակարգի հեղափոխական շարժումների կենտրոնը: XX դ. սկզբին ուներ 60000 բանվոր: 1898-99 թթ. առաջանում են սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակները: 1901 թ. առաջանում է իսկրայական խումբը, ապա՝ ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն: 1904 թ. Բաքվի կոմիտեին կից ստեղծվում է սոցիալ-դեմոկրատական «Հունմեթ» (Եռանդ) խումբը: Բանվորները մասնակցում են 1905-07 թթ. հեղափոխությանը: 1917թ. հոկտեմբերի 31-ին (նոյեմբերի 13) Բաքվում հռչակվում է սովետական իշխանություն, կազմվում է Բաքվի ժողովրդական կոմիտեի խորհուրդը՝ Ա. Շահումյանի գլխավորությամբ: 1918թ. ապրիլի 25-ին ստեղծվում է Բաքվի ժողովրդի խորհուրդը: 1918թ. հուլիսի 31-ին հակահեղափոխությունը Բաքվում ժամանակավորապես տապալում է սովետական իշխանությունը: 1918թ. սեպտեմբերի 20-ին Բաքվի 26 կոմիսարները գնդակահարվեցին: 1920թ. ապրիլի 28-ին բանվորները 11-րդ կարմիր բանակի օգնությամբ տապալում են մուսավաթական բուրժուա-մացիոնալիստական կառավարությունը: **ՀՄԳ, հ. II, էջ 343, 346, 347-348:**

⁴¹ 1918թ. ապրիլի 25-ին Կարսը, որ համարվում էր դժվարամատչելի ամրոց և ուներ լավ զինված կայազոր, Անդրկովկասյան սեյմի դավադիր քաղաքականության պատճառով առանց դիմադրության հանձնվում է թուրքերին, հայ բնակչությունը ստիպված գաղթում է Շիրակ: Մնացողները կտորվում են: **Армянский вопрос, с. 193.**

⁴² Մեծ Բարքեթ, Պարգետ Մեծ, Պարգետ Վերին, Փարգիթ, Փարգիտ, Փարկիթ, Փարկիթ Մեծ, Փարկիտ Մեծ, Փերկիտ, Փերկիտ մեծ-գյուղ Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքից 29 կմ հս-արլ, Կարս-Ալեքսանդրապոլ

ճանապարհի ձախ կողմում, Կարսի գետի աջ ափին: XIX դ. վերջին ուներ 129 տուն հայ և թուրք, 1907թ.՝ 811 հայ, 202 թուրք բնակիչ: Եվրոպացի ճանապարհորդ Տուռնեֆորը, 1701թ. անցնելով այս գյուղով, նկարագրել է այն որպես շեն ու մեծ բնակավայր՝ կոչելով Պարգետ: Գյուղի հյուսիսային կողմում էին գտնվում Ս. Աննափրկիչ հոյակապ եկեղեցու ավերակները, գերեզմանոցը և 2 քարաշեն, կամարակապ աղբյուր **ՉՏԲ, հ. 5, էջ 243-244:**

⁴³ Փալղրվան, Բալղրվան, Բալղերեվան, Նարդիման, Պալղիրվան, Պալտըրվան-գյուղ Կարսի մարզի Կարսի օկրուգում, Շորագյալի շրջանում, Կարս գետի աջ ափին: 1893թ. ուներ 69 տուն (607 բնակիչներով), 1918թ.՝ 30 տուն հայ բնակիչ. Ջբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: Գյուղից արլ կա ավերակ գյուղատեղի՝ Հին Բալղրվան անունով. ըստ ավանդության եղել է կաթողիկոսական նստավայր: Գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին կառուցված է 1858թ.: Նրա տեղում եղել են 4 ավերված եկեղեցիներ և գերեզմանոց: **ՉՏԲ, հ. 1, էջ 555:**

⁴⁴ Սարիղամիշ, Սարըզամըշ, Սարըղամըշ, Սարըղամիշ, Սարիկամիշ-գյուղաքաղաք, քաղաք Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքից մոտ 50 կմ հվ-արլ, Կարս-Էրզրում երկաթուղու վրա: Տեղադրված է Մեծրաց լեռների հվ ստորոտին, Կարսի գետի վերին հոսանքի Սարիղամիշ (Եղեզնուտ) գետի ափին: Շրջակայքում կան սառնորակ և հանքային աղբյուրներ, ճոխ և փարթամ արտավայրեր: Ուներ երկու թաղեր՝ Վերին և Ներքին, որոնք անցյալում երկու առանձին գյուղեր էին: Բուն գյուղաքաղաքը զբաղեցնում էր Վերինի տարածքը: 1878թ. Բեռլինի պայմանագրով անցավ Ռուսաստանին և մտցվեց Կարսի մարզի Կարսի օկրուգի մեջ: 1913թ. ավարտվեց Կարս-Սարիղամիշ երկաթուղու կառուցումը: XX դ. սկզբին ուներ մոտ 3000 բնակիչ, մեծ մասը հայեր էին, կային թուրքեր, մոլդկան ռուսներ: Ջբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, փայտամշակությամբ, անտառահատությամբ, հայերը նաև արհեստներով և առևտրով: Ուներ եկեղեցի և վարժարան: 1878թ. Ներքին թաղում տեղավորվեց ռուսական կայագորդ և բնակեցվեց մոլդկան-ռուս վերաբնակիչներով: 1918թ. ապրիլի 5-ին թուրքերը կրկին գրավեցին Սարիղամիշը, հայերը վերաբնակեցվեցին Երևանի նահանգում: Այս Սարիղամիշը ազատագրվեց և մտցվեց ՀՀ մեջ: 1920թ. սեպտեմբերի 29-ին բեմալական զորքերը գրավեցին քաղաքը: Այժմ էլ քաղաքը ունի 20000 թուրք, մոլդկան և դալստերո բնակչություն, գործում են յուղի, պանրի արտադրամասեր, աղացներ և սղոցարան: **ՉՏԲ, հ. 4, էջ 535-536:**

⁴⁵ Ղարսը սկզբում եղել է բերդ: Պարսկա-թուրքական տիրապետության ժամանակ հայկական բերդը, որը գտնվում էր քաղաքի արլ մասում, շարքից դուրս էր եկել: Բերդի հիմնավոր վերակառուցումը սկսվել է 1578թ.: Հետագայում ամրակայող աշխատանքները շարունակվել են այն աստիճան, որ Կարսը XIX դ. կեսին հավասարագոր էր Վերդենի բերդին: Ուներ կրկնակի պարիսպ՝ 26 աշտարակներով: 17-ը հվ կողմում էին, 9-ը՝ արմ: Բերդի անկյունների 4 աշտարակները մյուսներից ավելի խոշոր ու բարձր էին: Պարիսպների բարձրությունը 10-12 մ է, լայնությունը՝ 1,5: Բերդի ընդհանուր երկարությունը 1000 մ էր, լայնությունը՝ 500 մ: Բուն միջնաբերդը տեղակայված էր Կարսի գետի աջակողմյան ժայռի վրա: Միջնաբերդը, որ շրջապատված էր կրկնակի պարիսպներով, հավանաբար կառուցված էր հայկական

բերդի տեղում: Բերդը բնակեցված էր թուրքերով և բաժանված էր 17 թաղերի: Կառուցվել էր անմշակ քարից: Տեղավորում էր 30000-40000 զինվոր: **ՉՏԲ, հ. 3, էջ 70:**

⁴⁶ Փոքր Փարքիթ, Փարգետ Փոքր, Փարքեթ Փոքր, Պարգետ Լեքքին, Պարգետ Փոքր-գյուղ Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքից մոտ 30 կմ հս-արլ, Մեծ Փարգետ գյուղից անմիջապես հս, Կարս-Ալեքսանդրապոլ ճանապարհի և Կարսի գետի աջ կողմում: 1909թ. ուներ 41 տուն՝ 484 հայ բնակիչ, 1913թ.՝ 47 տուն՝ 530 բնակիչ և փայտաշեն եկեղեցի: **ՉՏԲ, հ. 5, էջ 244:**

⁴⁷ Կարսի գետ, Կարաչայ, Կարս, Կարսա գետ, Կարսաչայ, Կարուց գետ, Ղարաչայ, Ղարսա գետ, Ղարսի գետ, Ղարսչայ, Մեծմոր-գետ Արաքսի ավազանում, նրա ձախակողմյան վտակ Ախուրյանի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Մեծրաց և Կարմիր Փորակ լեռների փեշերից և հոսելով Կարսի սարահարթով դեպի հս-արլ, ապա հվ-արլ՝ ՀՍՍՀ Անիի շրջանի Շիրակավան գյուղի դիմաց միանում մայր գետին: Սնումը խառն է, հորդացումը՝ մայիս-հունիս ամիսներին: Երկարությունը մոտ 167 կմ, ավազանը՝ 500 կմ²: **ՉՏԲ, հ. 3, էջ 71:**

⁴⁸ Բնագրում՝ կիսակենդան:

⁴⁹ 1918թ. նոյեմբերին թուրքական կառավարությունը տեղեկացրեց ՀՀ կառավարությանը, որ թուրքական զորքերը թողնում են այն տարածքները, որոնք գտնվում են Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրում նշված սահմաններից դուրս: Արդյունքում հայկական զորքերը նոյեմբերին մտան Ղարաքիլիսա, դեկտեմբերի սկզբին՝ Ալեքսանդրապոլ: ՀՀ կառավարությունը, մեծ դժվարություններ հաղթահարելով, կարողացավ 1919թ. ապրիլ-մայիսին ազատագրել Կարսը, Օլթին, Կաղզվանը: 1919թ. մայիսին ՀՀ-ին միացվեցին Շարուրը և Նախիջևանը: Գրեթե ամբողջությամբ վերականգնվեցին 1914թ. սահմանները: **Армянский вопрос, с. 275.** Կարսը միայն 1919թ. մայիսին է հանձնվում հայերին, բայց մինչև անգլիացիների կողմից Կարսի շրջան անցնելու թույլտվություն ստանալը, Ալեքսանդրապոլում կուտակված զաղթականների մեծ մասը մահանում է: **Կ.Ալեքսանյան, Արեւմտահայ զաղթականութեան դրուֆինը Ալեքսանդրապոլի զաւառում, 1918-1921ին, Հայկազեան Հայագիտական Հանդես, առանձնատիպ, Պէյրուք, 2013, էջ 85:**

⁵⁰ Արաքսյան Լևոնի կինն էր, Աստղիկը՝ Սմբատի:

⁵¹ Մագրա, Մացրա, Ստավկա-Մացրա-երկաթուղային կայարան Կարսի մարզում, Կարս-Ալեքսանդրապոլ երկաթուղու վրա, Կարս քաղաքից հս-արլ: Ռուսական քարտեզներում նշանակված է Ստավկա-Մացրա ձևով: **ՉՏԲ, հ.3, էջ 631:**

⁵² «Չուխուր մայլա» հավանաբար տեղադրված է եղել փոսի մեջ, «չուկուռ»՝ փոս, խորխորատ, իջվածք, «մայլա» թաղ, հավանաբար «Փոսի թաղ»:

⁵³ Արզինե, Արզինա, Արզին-գյուղաքաղաք Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շիրակ գավառում, Անի քաղաքից հս, Կարս գետի ձախ ափին, նրա ստորին հոսանքի շրջանում, Կարս-Կումայրի ճանապարհի եզրին: Տարբեր ժամանակներում հիշատակված է նաև որպես բերդ, գյուղ, ավան, բերդաքաղաք էր: XX դ. սկզբին ուներ 32 տուն՝ 233 թուրք բնակչով: **ՉՏԲ, հ. 1, էջ 406:**

⁵⁴ Ղարադաղի ամրոց, Ղարադաղի բերդ, Գարատաղ, Գարատաղի բերդ, Խարատաղ, Կարադաղ, Ղարադաղ, Ֆաղենի բերդ, Ֆատենի բերդ-բերդ,

ամրություն Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքի մոտ, միջնաբերդից արլ, Կարսի գետի ափին բարձրացող համանուն լեռան վրա, դեպի ուր տանում էր միայն մի շավիղ: **ՀՏԲ, հ. 3, էջ 527:**

⁵⁵ Ալեքսանդր Խաթիսյան (1874-1945), ՀՀԴ անդամ, հայ հասարակական գործիչ: 1917թ. տեղափոխվել է Հայաստան և ընտրվել Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ: 1918թ. մասնակցել է Տրապիզոնի և Բաթումի բանակցություններին: 1918թ. նոյեմբերից ՀՀ արտ. գործ. նախարար, 1919-1920 թթ. մայիս ՀՀ կառավարության նախագահ: 1920թ. դեկտեմբերի 2-ին ստորագրել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը: **Армянский вопрос, с. 330.**

⁵⁶ Սիմոն Վրացյան (Գրուգյան, Գրուգինյան) (1882-1969), ՀՀԴ անդամ, հայ հասարակական- քաղաքական գործիչ: 1918թ. մասնակցել է Բաթումի բանակցություններին: 1918թ. ղեկավարել է Հարավային Ռուսաստանի կամավորական բանակ ուղարկված ՀՀ դիվանագիտական առաքելությունը: 1919թ. ընտրվել է ՀՀ խորհրդարանի երեսփոխան, 1920թ. մայիսից եղել է գյուղատնտեսության և աշխատանքի նախարար: 1920թ. նոյեմբերից ՀՀ վարչապետ, 1920թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով պաշտոնազրկվել է, 1921թ. սկզբին մասնակցել է հակախորհրդային ապստամբությանը և գլխավորել «Հայրենիքի փրկության կոմիտեն»: **Армянский вопрос, с. 104-105.**

⁵⁷ Աստղիկը վաղամեռիկ Սմբատի կինն էր:

⁵⁸ **Տե՛ս Գ.Յովսէփեան, Կենսագրական նօթեր, Սահակ-Մեսրոպ, Գահիրե, 1945, տե՛ս Ա.Բ.Հարությունյան, Ա.Ա. Վարդանյան և ուրիշներ, Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը, Ներածական խոսք Սարգիս Հարությունյանի եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 2013, էջ 17-22:**

⁵⁹ Правительство РСФСР в июле 1920г. обязало кемалистское руководство отказаться от плана нападения на Армению. "Мы надеемся,- телеграфировал в том же месяце Чичерин Г.К.Орджоникидзе,- что и в дальнейшем нам удастся предотвратить продвижение турок в пределы Армении. Наша миссия в Турции ставит своей задачей энергично потребовать у турецкого правительства отказа от каких-либо военных действий на бывших русско-турецких границах...". Начавшееся 28 сентября 1920 г. турецкое наступление на Армению, о котором в Москве стало известно лишь в первых числах октября, в российских правительственных кругах, вследствие недостаточности информации, поначалу восприняли как осуществление кемалистами упомянутого выше плана занятия полосы Сарыкамыш-Шахтахты... Судя по письму Чичерина Леграну от 5 ноября 1920 г., за отсутствием достаточных сведений российскому руководству "в данный момент... еще не ясно, наступают ли турки на почве советской ориентации с целью приближения к нам или же они наступают на почве перемены своей политики и закулисного соглашения с Антантой, для того, чтобы начать завоевательную политику на Кавказе по образцу 1918 г. в качестве компенсации за потери на Западе". "Эта неясность,- пишет далее Чичерин,- заставляет нас быть сугубо осмотрительными. В то же время эта опасность заставляет нас серьезно считаться с возможной ролью Армении и Грузии, как барьера против наступательной политики турок". Однако

уже 6 ноября 1920 г. по мере того, как правительству РСФСР становилось ясно об истинных мотивах турецкого наступления, в его политике по отношению к Армении происходит резкий поворот в сторону последней. “Турки заявляют, что хотят- де освободить Армению от дашнаков. Это жульничество. Надо приостановить передачу им оружия, пока не заключат перемирия с Арменией,- говорилось в записке Чичерина Леграну от 7 ноября. *Рем Казанчян, Советско-кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов, Страны и народы Ближнего и Среднего Востока, XXI, ИАН РА Институт востоковедения, Ереван, 2002, с. 103-109.*

⁶⁰ Կարսի մարզում այս անվամբ երկու գյուղ կա: 1. Թաքնավու, Թաքնավի, Տեկնավի-գյուղ Կարսի մարզի Կաղզվանի օկրուգում: 2. Թաքնավի-գյուղ Կարսի մարզի Կարսի օկրուգում, Կարս քաղաքից հր-արլ: XX դ. սկզբին ուներ 85 տուն թուրք և քուրդ բնակիչ: Թաքնավի-լեռ Հայկական լեռնաշխարհում, Կարսի բարձրավանդակում, Կարս քաղաքից հվ-արլ, Բերնա գյուղի մոտակայքում: Բարձրությունը՝ 2300 մ: *ՀՏԲ, հ. 2, էջ 428:*

⁶¹ Գուբերնատոր՝ նահանգապետ:

⁶² Թայինը կշռում էր մեկ գրվանքա, որը հավասար է 409 գրամի:

⁶³ Բայրամ փաշա թաղամասը գտնվում էր միջնաբերդից արևելք: Տե՛ս քարտեզ, տեղամաս D:

⁶⁴ Ըստ հոգեբան Կարինե Սահակյանի բանավոր հաղորդման՝ գաղթած հայերը Մեծ եղեռնի տարիներին տներ էին գնում երկաթուղիներին մոտ գտնվող վայրերում: Դա արվում էր խաղաղություն հաստատվելու դեպքում արագ տուն վերադառնալու նպատակով: Հոգեբանների ուսումնասիրությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ նման իրավիճակներում մարդիկ ձգտել են մոտ գտնվել երկաթուղուն նաև նոր ջարդերից ու կոտորածներից խուսափելու և ապահով վայր արագ գաղթելու համար: Մասնավորապես տվյալ դեպքում ընտանիքը ջանում էր ետ գալ հայրենի գյուղ՝ Ջաջուռ, և ազատվել սպառնացող վտանգից:

⁶⁵ Բրբ.՝ նախամուտք, միջանցք:

⁶⁶ Աիդա Մակարյանը Գարեգին պապին ներկայացնում է որպես բանինաց և ըսնական մարդ: Գարեգինը մահացել է 1993թ. 86 տարեկան հասակում:

⁶⁷ Մահմեդականություն իսլամ:

⁶⁸ Տե՛ս Տիգրանանց Տիրունի պատմածը Ժենյա Սկրտչյանի հուշերից, որտեղ վերապրածը հանգամանակից կերպով պատմում է գնացքի մեջ տեղի ունեցող դեպքերի մասին: Մասնավորապես այն, որ միակ ողջ մնացած զավակը գնացքի մեջ մահանում է խոլերայից, և տղայի դիակը ստիպված դուրս են գցում գնացքից: Տե՛ս *Վազգեն Հախոյան, 1920թ. կոտորածները Կարսի մարզում և Ալեքսանդրապոլի գավառում, Վանածոր, Արմինֆո, 2014, էջ 50:*

⁶⁹ Հավանաբար ի նկատի ունի Ուլուխանլու՝ այժմ Մասիս բնակավայրը: Ուլուխանլու, Մասիս, Ջանգիբասար, Հրազդան, Նարինանլու, Ուլուխանլի-քաղաքատիպ ավան, ՀԽՍՀ Մասիսի վարչական շրջանի կենտրոնը: Գտնվում է Երևանից մոտ 10 կմ հվ-արմ, Հրազդան գետի ստորին հոսանքի ձախ, այգիներով և դեկորատիվ ծառերով ծածկված հարթավայրում: Երկաթուղային

կայարան է թբիլիսի-երևան երկաթուղու վրա: Կազմավորվել է 1971թ.՝ նախկին Ուլուխանլու ավանի և Մասիսի երկաթուղային կայարանին կից ավանի միավորումից: Նախկին Ուլուխանլու գյուղը 1831թ. ուներ 1737, 1897թ.՝ 2800, 1926թ.՝ 2093 բնակիչ, 1881թ.՝ երկրասյա դպրոց: 11.06.1955թ. վերանվանվել է Հրազդան: Նախկին Ուլուխանլու երկաթուղային կայարանին կից ավանը Մասիս է վերանվանվել 31.7.1950թ.: **ՀՏԲ, հ. 3, էջ 702:**

⁷⁰ Բնագրում՝ ներվեր:

⁷¹ Կումայրի, Գյումրի, Ալեքսանդրապոլ, Լենինական-քաղաք Շիրակի բարեբեր դաշտում, Ախուրյանի ձախ ափին, ծովի մակերևույթից 1556 մ բարձրության վրա, ակոսված է Չերքեզի, Ջաջուռի ձորերով: Շրջակայքում տարածված են սևահողեր: 1924թ. հունվարի 27-ին՝ Լենինի մահից հետո, անվանակոչվել է Լենինական: 1831թ. ուներ 3444, 1897թ.՝ 30616, 1926թ.՝ 42313 բնակիչ: 1920թ. այստեղ լույս էր տեսնում «Ալիք» թերթը: XIX դ. սկզբին՝ 1804թ., Գյումրին միացվում է Ռուսաստանին: 1829-30թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո էրզրումի, Բայազետի, Կարսի շրջաններից հայերը տեղափոխվում են այստեղ: 1840թ. Ալեքսանդրապոլը համարվում էր քաղաք: 1898-99 թթ. թիֆլիս-Ալեքսանդրապոլ, 1899թ. Ալեքսանդրապոլ-Կարս, 1902թ. Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղիների կառուցումով քաղաքը դառնում է կարևոր երկաթուղային հանգուցակետ: Այստեղ էին հատվում նաև մի քանի խճուղային ճանապարհներ: XIX դ. կեսից-XX դ. սկիզբը այստեղ կային համքարություններ և շուրջ 300 արհեստավորներ: XIX դ. վերջերին գործում էին տասը դպրոց և վարժարան (Արղության և Սահականուշյան դպրոցներ): **ՀՏԲ, 7, II, էջ 569-572:**

⁷² Բնագրում՝ վերսիա:

⁷³ Նման դեպքերում, եթե զոհին չէին գտնում, կոտորում էին նրան թաքցընողներին, այնպես որ փրկվածները իրենց կյանքով հավանաբար պարտական էին այս հայուհուն:

⁷⁴ Առաջին հանրապետության տարիներին Ալեքսանդրապոլի փողոցները համարակալվում են, խորհրդայնացումից հետո՝ անվանակոչվում: Այժմ ժողովրդի հիշողության մեջ պահպանված են փողոցների թե՛ թվերը, թե՛ խորհրդային ժամանակվա անվանումները: Մասնավորապես 16 փողոցը կոչվում է Գորկու փողոց:

⁷⁵ Բնագրում՝ մասսայական:

